



Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կողմից առաջին օրվա թայլա-
 քանակ է որպես դասագրի պետական դպրոցների համար

Լ ՈՒՍԱԲԵՐ


Բ. ՏԱՐԻ

18840 244



Կ Ա Ջ Ս Ե Ց Ի Ն


ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՆ Լ. ՇԱՆԹ



ՈՒԹԵՐՈՐԴ ՏԻՊ

Մեր ինքնուրոյն եւ փոխադրած յօդածների, ինչպէս եւ մեր նկարների ար-
 տատպութեան իրաւունքը վերապահած է

Թ Ի Ֆ Լ Ի Ս
 Էլեքտրագ. Ն. Աղանեանի, Պօլից. 7.
 1914



Լ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

1. Առաւօտ

Հաւը խօսեց երեք բերան.
— Էյ քնածներ, ծուղրուղն,
բացւեց կարմիր աղօթարան,
ժամանակ է զարթնելու:

Չարն ու չարկամ մութ խաւարին,
խաւարն անցաւ չար ու վատ,
աշխարհ լըցւեց լուսն ու բարին,
լուսն ու բարին անարատ:

Խաւարը ինչո՞ւ է չար, լոյսը ինչո՞ւ է բարի:

2. Դպրոցի ճամփան

Ձմեռայ բուքին, սառնամանիքին,
դպրոցի ճամփան
դժլար է, երկար՝ շատերի համար:

Զւարթ գարունքին, երգին ու ծաղկին,
դպրոցի ճամփան

կարճ է, դուրաւի, կարծես աւելի:

Իսկ ով սէր ունի, ինձ պէս, ուսումի,

դպրոցի ճամփան

միշտ կարճ է, սիրուն, ձրմեռ թէ գարուն:

3. Աստծու սեղանը

1.

Գարնանը բարի Աստուածն ասաւ.

—Սեղան բաց արէք փոքրիկ ճիւղների համար:

Եւ իսկոյն կեռասենին ծածկեց կանաչ տերևով:

Զարթնեց փոքրիկ ճիւղուն, սկսեց կրծել թարմ տերևները
ու ասաւ.


—Ո՞վ է պատրաստել ինձ համար այս հրաշալի սեղանը:

2.

Բարի Աստուածը նորից ասաւ.

—Սեղան բաց արէք ժիր մեղի համար:

Եւ իսկոյն կեռասենին բաց արաւ իր սպիտակ ծաղիկները:



Մեղուն գարթնեց արշալուսին ու տըզտըզալով թռաւ դէպի կեռասենին: Թռչում էր ծաղկից ծաղիկ ու ամենքից մի մի կաթիլ ծծում:

—Ա՛խ, ի՜նչ անուշ խմիչք է,—մտածում էր նա իր փեթակը շտապելով.—էս ո՞վ է պատրաստել ինձ համար:


3.

Եկաւ ամառը: Ու բարի Աստուածն ասաւ.

—Սեղան բաց արէք փոքրիկ թռչնակների համար:

Եւ կեռասենու վրա երևացին թարմ ու կարմիր պտուղները: Ուսում էին փոքրիկ թռչնակներն ու խաղում.

—Ա՛խ, ի՜նչ լիբը սեղան է. էս ո՞վ է բաց արել մեզ համար:



4.

Աշնանը բարի Աստուածն ասաւ.

—Ամենքը լիացան. վեր քաղեցէք սեղանը:

Ու վեր կացաւ սառը քամին, թափեց տարաւ դեղնած տերևները: Տկլոր կեռասենին դողում էր ցրտից:

—Ծածկեցէք դրան, որ չը մըսի,—ասաւ բարի Աստուածը: Ու եկաւ ձմեռը, փափուկ ձիւնով ծածկեց կեռասենու մերկ ճիւղերը:

1) Ո՞րն է մարդու սեղանը:

2) Ո՞վ է բաց անում մարդու սեղանը:

3) Ո՞րոնք են տարւայ ամիսները եւ որը ո՞ր եղանակին է ընկնում:

Շ ու տ ա ս ե լ ու կ.—Մեր դռանը տասը ծանր-ծանր տանձի ծառ:
Զեր դռանն էլ տասը ծանր-ծանր տանձի ծառ:

4. Հովի հրաժեշտը

Մնաք բարով, դուք, արօտներ սիրուն,
ամառն անց կացաւ, հօտն իջնում է տուն:

Մենք ետ կը գանք ձեզ նորեկ գարունքին,
երբ զարթնեն ուրախ երգերը կըրկին,
երբ որ սարերը զուգւեն կանաչով,
երբ որ ջրերը վազեն կարկաչով:

Մնաք բարով, դուք, արօտներ սիրուն,
ամառն անց կացաւ, հօտն իջնում է տուն:

- 1) Հովիւն ինչո՞ւ է աշնանը սարից հեռանում:
- 2) Հօտը ո՞րտեղ է անց կացնում՝ ձմեռը:

5. Ծիծեռնակների չում

1.

Աշունը մօտենում էր:

Ծիծեռնակները ամեն իրիկուն հաւաքւում էին, շարւում
մի կտուրի ծայրին կամ մի պարանի վրա ու անհանգիստ ծըլ-
ւըլւում:

—Տեսնո՞ւմ էք,—խօսում էր մէկը,—ինչպէս խոտը դեղ-
նել է: Ամբողջ օրը դէս ու դէն ընկալ, հազիւ մի քանի թի-
թեռ ճարեցի:

—Էլ մի ասի,—ասում էր միւսը.—տերեւները թափւում
են, ծառերը մերկանում, եղէգները չորանում են, մօղով-
ները չեն երևում: Լաւ է՝ գոնէ աղբանոցներում դեռ ճանճեր
են դժվժում:

—Բայց օրը, օրը ինչ կարճացել է,—թևերը թափ տա-
լով մէջ մտաւ երրորդը:—Դեռ կշտացած չես լինում, մէկ էլ

տեսար մթնեց: Գիշերներն էլ էնպէս ցուրտ է լինում:
էսպէս հաւաքւում ու զանգատւում էին ծիծեռնակները:

2.

Մի իրիկուն էլ բոլոր ծիծեռնակները ժողովեցին բարձր
զանգակատան գլխին: Այնքան էին, որ զանգակատունը սեին
էր տալի:

—Չէ, չէ,—ասում էին ծերերը.—էլ դիմանալու բան չի:

Մի քիչ էլ որ մնանք, սովից կը կոտորւենք:

—Բա ի՞նչ անենք,—մոլորւած հարցնում էին ջահելները:

—Պիտի չւենք,—յայտնեցին մեծերը:

Այդ գիշերը ծիծեռնակները բոլորը միասին անց կացրին
եկեղեցու գմբէթին: Իսկ առաւօտը, վաղ լուսաբացին, ամ-
բողջ երամբ վեր կացաւ ու պտոյտներ արաւ տների գլխին
ճուղղելով:

—Մնաք բարով, մեր սիրունիկ բնիկներ,—կանչում էին
ծերերը:

—Մնաք բարով, մեր փափուկ օրօրաններ,—կանչում էին
ջահելները:

Ու բոլորը միասին սլացան դէպի վեր, բարձր, բարձր,
ու ձգւեցին դէպի հարաւ, դէպի տաք երկիրները:

Բարի ճանապարհ, բարի ծիծեռնակներ:

- 1) Էլ ի՞նչ չող թռչուններ գիտէք:
- 2) Ինչո՞ւ են չում թռչունները:

6. Ծիծեռնակ



Ծիծեռնակ, ծիծեռնակ,
դու գարնան սիրուն թռչնակ:
դէպի ուր, ինձ ասա,
թռչում ես այդպէս արագ:

7. Ճանփորդներ

1.



Աբլորը մի օր կտուրը բարձրացաւ, որ աշխարհ տեսնի: Վիզը ձգեց, երկարացրեց, բայց բան չը տեսաւ. դիմացի սարը խանգարում էր:

—Քուշի ախպէր, կարելի է դու գիտենաս, էն սարի ետեւն ի՞նչ կայ,— հարցրեց վերեւից բաւում պառկած շանը:

—Ես էլ չը գիտեմ,—պատասխանեց Քուշին:

—Հապա մինչև երբ պէտք է այսպէս մնանք. արի գնանք մի տեսնենք՝ աշխարհումս ի՞նչ կայ, ինչ չը կայ:

Շունն էլ համաձայնեց: Խօսքը մին արին ու փախան:

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աբլորը բարձրացաւ մօտիկ ծառին. քնեցին:

2.

Հոսադէմին աբլորը կանչեց՝ ծուղորուղով:

Մի աղւէս լսեց աբլորի ձայնը:

—Վահ, սա ռոտեղից դուրս եկաւ, այ լաւ նախաձաշիկ,— մտածեց աղւէսը ու վազեց:

—Բարի լուս, սանհէր աբլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

Գնում ենք աշխարհ տեսնելու, պատասխանեց աբլորը:

—Օ՛, ինչ լաւ բան էք մտածել,—խօսեց աղւէսը:—Քանի ժամանակ է ես էլ մի կարգին ընկերի եմ ման գալի: Ինչ լաւ էր՝ պատահեցինք: Դէ, ցած արի, որ չուշանանք:

—Ես համաձայն եմ,—ասաւ աբլորը.—տես, թէ ընկերս էլ համաձայն է, ցած գամ՝ գնանք:



—Ո՛րտեղ է ընկերդ:

—էն թփի տակին:

«Սրա ընկերն էլ երեւի իր նման մի աբլոր կը լինի. էս էլ իմ ճաշը»,—մտածեց աղւէսը ու վազեց թփի կողմը: Յանկարծ որ շունը դուրս եկաւ, աղւէսը պոճկ, փախաւ, ո՞նց փախաւ:

—Կաց, աղւէս ախպէր, մի վազդի, մենք էլ ենք գալի, էտպէս ընկեր չի լինի,—ծառի գլխից ձայն էր տալիս աբլորը:

1) Ի՞նչպէս ենք ասում էն մարդուն, որ ուզում է աշխարհում շատ բան տեսնի ու իմանայ:

2) Աղւէսն էլ էր ուզո՞ւմ աշխարհ տեսնի:

Հ ա ն ե լ ու կ.—Մի թոփ կտաւ ունեմ փռած, ծալում եմ ծալում, չի ծալում:

8. Եղնիկի տերը



Որսկանը սարերում որսի էր ման գալի: Մին էլ ժայռի ետեւից դէմն է նետւում մի սիրուն եղնիկ:


Եղնիկը շշկած կանգնում է, մնում է աչքերը զցած որսկանի աչքերին:

Որսկանը նշան է դնում, որ սպանի: Յանկարծ նրան այնպէս է թւում, որ առջևը կանգնեց մէկը, կարծես մի կին, ու ձայն տւաւ:

—Կանգնի, անիրաւ, մի սպանի իմ եղնիկին: Դու ապրում ես, սա էլ պիտի ապրի:

Որսկանը սարսափած ետ է գալիս տուն, հրացանը կախում է պատից ու էն օրւանից թողնում է որսկանութիւնը:

Որսկանը ինչո՞ւ թողեց որսկանութիւնը:



9. Աշուն

Դեղնած գաշտերին
իջել է աշուն.

անտառը կրրկին
ներկել է նախշուն:

Պաղ պաղ մէզի հետ
փրշում է քամին,

քրշում է տանում
տերևը դեղին:

Տըխուր հանդերից
մարդ ու անասուն

քաշւում են կամաց
իրենց տունն ու բուն:

ինչո՞ւ են ասում՝ «աշունը իջել է»:

Հանելուկ.—Տասներկու մարդ մի ծառից քաշում են:

10. Դասին

Ամբողջ դասարանը լուռ գրում էր: Լսւում էր միայն
գրիչների ճռճոցը, երբեմն էլ ուսուցչի ձայնը, որը մէկին-
միւսին ուղղում էր:

Սեղրակը գրիչը մատների մէջ ամուր հուպ էր տալիս ու
շատ էր աշխատում, որ գծերը ուղիղ դուրս գան:

Բայց նրա գլուխը աւելի ու աւելի կռանում էր, մատնե-
րը աւելի դանդաղ էին շարժւում, ուսուցչի ձայնն էլ կամաց
կամաց հեռանում էր, կարծես ուրիշ սենեակից գալիս լինէր:

Ու նրան այնպէս թւաց թէ ինքը տանն է ու ցոյց էտա-
լիս մայրիկին իր գրածը. «տես, ինչ գեղեցիկ է, ինչ ուղիղ»:
Ծայրիկն էլ գովում է ու շոյում է նրա գլուխը:

Յանկարծ աչքերը բաց արաւ՝ նայեց դէս ու դէն: Ըն-
կերները դադարել էին գրելուց և բոլորն էլ ծիծաղելով իրեն
էին մտիկ անում:

Սեղրակը վախեցած վեր թռաւ, ուզում էր լաց լինի,
բայց ուսուցիչը քաղցր ժպտում էր ու ասում.

—Քունդ տարաւ, հա՛, յոգնեցի՞ր: Ոչինչ, այս բոպէիս
դանգը կը տան: Կը վազվզես. քունդ կը փախչի:

1) Սեղրակի քունը ինչո՞ւ տարաւ:

2) Քունն ինչի՞ համար է:

3) Սեղրակը ինչո՞ւ երազում տեսաւ, որ մայրը շոյում է իր գլուխը:

Առաժնե՞ր.—1) Աշխատողը անօթի չի մնայ:

2) Ծառի տակը պառկելով բերանդ տանձ չի ընկնի:

Հանելուկ.—Էն ինչն է՝ ինչ: Սպիտակ դաշտ, սև սերմը,

ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ:

11. Փոքրիկ խանութպանը

—Տատիկ ջան, արի խաղանք,—խնդրում էր փոքրիկ եր-
ւանդը:

—Լաւ, խաղանք,—համաձայնեց տատիկը:

—Խանութ խաղանք, հա՛, տատիկ:

—Լաւ, խանութ խաղանք:

Ու երւանդը վազեց, բաշ տւաւ մի երկու աթոռ, շարեց
իրար կողքի:

—Էս սեղանը:

Վրան դարսեց տուփեր, գրքեր, լրագիրներ, բրոջ տիկնիկը,
իր հոլը, ուրիշ խաղալիքներ, էլի տուփեր, էլի գրքեր, մի եր-
կու հատ էլ շիշ, իր խնձորը, որ դեռ չէր կերել, յետոյ իր
փոքրիկ գրչահատը:

Խանութը պատրաստ էր:

Վազեց կողքի սենեակից բերաւ տատիկի մեծ գունաւոր թաշկինակը, կապեց առաջը գոգնոցի պէս, մի մեծ մատիտ անց կացրեց ականջի ետեւ ու կանգնեց խանութի առաջ:

— Էս կողմը համեցէք, էս կողմը համեցէք, ո՞վ է ուզում լաւ խնձոր, կախէթի գինի, կարմիր բոդկ, պան, պան, պան, պան:

— Շաքար ունե՞ս, խանութպան ախպէր, — հարցրեց տատիկը:

— Ինչքան քէֆդ ուզի, տիկին, — պատասխանեց խանութպանը:



Լաւ, մի հինգ արշին տո՛ւր:

Փոքրիկ խանութպանի ծիծաղն եկաւ:

— Ներեցէք, տիկին, մենք շաքարը արշինով չենք ծախում, — ասաւ նա քաղաքավարի կերպով:

— Բաս ինչո՞վ, — հարցրեց տատիկը:

— Ֆունտով:

— Ֆունտով: Հա, ճիշտ որ, — ասաւ տատիկը: — Դէհ, խընդրեմ, ինձ հինգ ֆունտ շաքար տուր, երկու ֆունտ էլ գինի:

— Ներեցէք, տիկին, — ժպտաց խանութպանը, — մենք գինին

ֆունտով չենք ծախում:

— Բաս ինչո՞վ, — հարցրեց տատիկը:

— Գինին ծախում ենք շիշով:

— Շիշով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ երկու շիշ գինի տուր, տասը շիշ էլ ձու:

Փոքրիկ խանութպանը էս անգամ արդէն փռթկաց:

— Ներեցէք, տիկին, մենք ձուն շիշով չենք ծախում:

— Բաս ինչո՞վ, — հարցրեց տատիկը:

— Ձուն ծախում ենք հատով:

— Հատով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ տասը հատ ձու տուր, երեք հատ էլ կաթ:

— Ներեցէք, տիկին, կաթը մենք հատով չենք ծախում:

— Բաս ինչո՞վ, — հարցրեց տատիկը:

— Կաթը ծախում ենք բաժակով:

— Բաժակով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ երեք բաժակ կաթ տուր, վեց բաժակ էլ լուցկի:

Երևանդը ծիծաղու թուլանում էր:

— Ներեցէք, տիկին, մենք լուցկին բաժակով չենք ծախում:

— Բաս ինչո՞վ, — հարցրեց տատիկը:

— Լուցկին ծախում ենք տուփով:

— Տուփով: Հա, ճիշտ որ: Այսօր ինչքան բան սովորեցի: Դէհ, ինձ վեց տուփ լուցկի տուր, չորս տուփ էլ կարմիր բոդկ:

— Ախար, տիկին, — ծիծաղում էր խանութպանը, — ո՞վ է լսել՝ բոդկը տուփով ծախեն:

— Բաս ինչո՞վ, — հարցրեց տատիկը:

— Բոդկը, բոդկը... — կըմկըմաց խանութպանը, ու չիմացաւ թէ ինչով ծախի իր բոդկը:

Դուք գիտե՞ք՝ ինչով են ծախում բոդկը:

12. Աղւեսն ու իր պոչը

Աղւեսն իջաւ սարից ցած,
գիւղի շներն անիծած
հենց որ նրա հոտն առան,
մեծ ու պստիկ դուրս թռան,
հարայ—հրոց հանեցին
ու ետեւից լարւեցին:

էն աղւեսը վազէվազ,
շնչակտուր, հագիւ հագ
մի ծակ գտաւ,
մէջը մտաւ,
հանգստացաւ
ու ետ դարձաւ,
նայեց վրան,
ասաւ իրան.

—էս ի՞նչ բան էր...
Ի՞մ անդամներ,
ո՞րք կուգէր
ինձ, ձեր տէրին
բաժին անէր
էն շներին:

Դձուք, օրինակ,
կարճ ու բարակ,
թեթեւ, արագ
ի՞մ ոտիկներ:

«Ո՛չ, ոչ, մեր տէր,
մեր հէրն ու մէր»,
ասին ոտներ:



—Դձուք, օրինակ,
վառած ճրագ,
լուս արեգակ
ի՞մ աչիկներ:

«Ո՛չ, ոչ, մեր տէր,
մեր հէրն ու մէր»,
ասին աչեր:

—Օրինակ, դձուք,
նարմանագուկ,
սուր-սուր լսուկ
ի՞մ ականջներ:

«Ո՛չ, ոչ, մեր տէր,
մեր հէրն ու մէր»,
ասին ականջներ:


—Եւ դձու պոչիկ,
ի՞մ խուճուճիկ,
խուճուճիկ-մուճուճիկ
ոսկէ-փնջիկ:

«Յո, աղւես,
մաղով մաղւես,
դեղով դեղւես,
աղով աղւես,
պատից կախւես.
Ես կուգէի
քո ոտների
մէջն ընկնէի
խանգարէի,
որ դու գայիր
գլխակոնծի...

—Օհւս, պապանձի,
անպէտ պոչիկ,
ոչ ու փրչիկ,
ինքնահաւան,
ճոթրած բերան,

միշտ մէջընկան,
գետնի տափան,
վազքիս խափան:
էս ըոպէիս ես քեզ ցոյց տամ,
կաց՝ շների բերանը տամ:

Ու աղւեսը
պոչի կէսը
հանեց մէկից
խորը ծակից.
էն շներն էլ,
մեծն էլ, փոքրն էլ,
ողջը կծան,
վրա պրծան,
զգին զգւան,
պոչին լծւան
ու քաշեցին,
քաշքշեցին,
էն աղւեսին
դուրս հանեցին,
բուրդ դրեցին
ու գզեցին:



13. Մուտասանը

1.

Լինում է, չի լինում մի թագաւոր: Էս թագաւորը իր երկրումը յայտնում է.

«Ով էնպէս սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագաւորութեան կէսը կը տամ նրան»:

Գալիս է մի հովիւ: Ասում է.

— Թագաւորն ապրած կենայ, իմ հէրը մի դագանակ ունէր, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

— Կը պատահի, — պատասխանում է թագաւորը: — Իմ պապն էլ մի չիբուխ ունէր, մի ծէրը բերանին էր դնում, միւս ծէրը մեկնում, արեգակիցը վառում:

Ստախօսը գլուխը քորելով դուրս է գնում:

2.

Գալիս է մի դերձակ: Ասում է.

— Ներողութիւն, թագաւոր, ես վաղ պիտի գայի ուշացայ: Երեկ շատ անձրև եկաւ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռուեց, գնացել էի կարկատելու:

— Հա, լաւ ես արել, — ասում է թագաւորը, — բայց լաւ չէիր կարկատել. էս առաւօտ էլ մի քիչ անձրև թափւեց:

Սա էլ է դուրս գնում:

3.

Ներս է մտնում մի աղքատ գիւղացի, կոտր կոնատակին:

— Դճւ ինչ ես ուզում, այ մարդ, — հարցնում է թագաւորը:

— Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ:

— Մի կոտ ոսկի, — զարմանում է թագաւորը: — Սուտ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ:

— Թէ որ սուտ եմ ասում, թագաւորութեանդ կէսը տուր:



— 2է, չէ, ճշմարիտ ես ասում, — խօսքը փոխում է թագաւորը:


— Ծշմարիտ եմ ասում, մի կոտ ոսկին տուր:

1) Թագաւորն ինչ արաւ:

2) Բանի՞ ստախօս կայ այս հեքիաթում՝ եւ ամենից մեծ ստախօսը որն է:

Հանելուկ. Գորգը թափ տալ չի լինի, ոսկին համրել չի լինի:

14. Փիսօն



Փիսօն, փիսօն մլաւան
Թաւրից թողեց, փախաւ վան,
լեզուն թաթխան, երկար պոչ,
ինչ որ ուզեց, ասին՝ ոչ:

Փիսօն գնաց գողէգող,
փորը դատարկ, սիրտը դող,
դունչը մեկնեց կովկրթին,
շերեփն իջաւ ճակատին:

1) Ինչո՞ւ էին փիսօն ծեծում:

2) Ինչո՞ւ էր փիսիկը գողանում:

3) Ապա էլի՞ ինչո՞ւ էին նրան պահում:



15. Զուրք փախաւ

Տանտիկինը ջուրը լցրեց կաթսայի մէջ, դրաւ կրակին:

Քանի կաթսան տաքացաւ, ջուրը սկսեց շոքել, անհանգստանալ: Սիրտը նեղացաւ, շուռ ու մուռ եկաւ, տակն ու

վրա եղաւ: Վեր-վեր էր թռչում, քլթքլթում էր, մըրթմըրթում էր, փշտացնում էր:

Կուռում էր ամանի հետ, թքում էր, հրում, ժաժ էր տալիս, որ կրակի վրայից շուռ տայ նրան ու ինքն ազատւի: Չը կարողացաւ: Տեսաւ՝ կաթսան շատ պինդ է նստել կասկարային, աւելի բարկացաւ, փրփրեց, վեր կացաւ, սկսեց գոլորշի դառնալ ու փախչել դէպի վեր:

Լաւ է որ տանտիկինը վրա հասաւ:

1) Ի՞նչ կը լինէր, եթէ տանտիկինը վրա չը հասնէր:

2) Գոլորշին ո՞ր պիտի փախչէր:

3) Եթէ երկնքում գոլորշի շատ է հաւաքուում, ի՞նչ է դառնում:

16. Ամպի երեխաները

Ամպը ունի չորս երեխայ, չորսին էլ լաւ էք ճանաչում:

Մեծը նա է, որ գալիս ծեծում է մեր լուսամուտը և աղմուկ է բարձրացնում մեր տանիքի վրա: Երբեմն էլ գժուում է, թափւում, թափւում, գնում է լցւում գետերը. նրանք էլ վարարում, ափերից դուրս են գալիս ու ամեն ինչ տակով անում: Թէ չէ, ինքը վատ չի. ընդհակառակը, այնպէս սիրում է ծառն ու կանաչը, իջնում գովացնում է ծառաւ ծաղիկները, ջուր է տալիս չորացած հողին:

Սրա քուրիկը մի ճերմակ աղջիկ է: Յրտերը գալիս են թէ չէ, վրա է հասնում, փռում է իր փափուկ վերմակը մերկ անտառների ու մերկ դաշտերի վրա, որ չը մրսեն փոքրիկ սերմերը հողի տակ:

Բայց ի՞նչ չար է նրա միւս եղբայրը: Գալիս է միշտ իր նման մի անպիտան քամու հետ, իբրեւ թէ հանաք է անում, ջարդում, փշրում է ինչ որ պատահի—ապակի, ծառ ու ճիւղ, փչացնում է խոտ ու արտ:

Ամենից փոքրիկը մի քնքուշ աղջիկ է. նա, որ գարնանը ամեն գիշեր մարգարիտ է շարում ծառերի, ծաղիկների ու խոտերի վրա, իսկ ձմեռը, ցրտին գալիս է մեր լուսամուտին գեղեցիկ կաթնագոյն պատկերներ է քաշում սառած մատիկներով:


Ահա ձեզ ամպի չորս երեխաները—Անձրեք, Ձիւնը, Կարկուտն ու Ցողիկը: Չէ՞ որ ես ասում էի՝ չորսին էլ լաւ էք ճանաչում:

1) Այս չորսից ամեն մէկը տարւայ ո՞ր եղանակին է աւելի լինում:

2) Սառած ցոյին ի՞նչ ենք ասում:

Առաժ.—Ամպի գոռալը անձրեկի նշան է:

17. Աշնան վերջը



Սարի լանջին,
մէգի միջում
խոխոջում է
ու տըրտընջում
ջուրը բարակ,
ջուրը տըխուր.
—Վաշ-վիշ, վաշ-վիշ,
հըր կորան, հըր,
տերե ու խոտ,
վարդը շաղոտ,
սարւորն ուրախ,
սըրինգ ու խաղ:
Շուրջըս դատարկ,
շուրջըս տըխուր...
վաշ-վիշ, վաշ-վիշ,
հըր կորան, հըր:

18. Եկեղեցին կորել է

—Սա ի՞նչ է, ո՞ւր է մեր դիմացի եկեղեցին: Ո՞ւր է մեր եկեղեցին իր սուր գմբէթով: Մայրիկ, մայրիկ, եկ տես, էս գիշեր քանդել են մեր եկեղեցին, եկեղեցին չը կայ, կորել է:

Բայց մայրիկը ուշանում է, խոհանոցում գործ ունի, կաթն է տաքացնում, որ փոքրիկ Արփիկը խմի ու գնայ դպրոց:

Սա ի՞նչ զարմանալի բան է: Մօտիկ տներն անգամ հագիւ են երևում. ցածը, փողոցում, մարդիկ շտապ շտապ իրենց գործին են վազ տալիս, բայց ճանաչել չի կարելի, կարծես ծխի միջով են գնում:

Արփիկը էլ չը համբերեց ու վազեց խոհանոց:

—Մայրիկ, մայրիկ, մեր եկեղեցին այրել են:

—Ի՞նչեր ես խօսում:

—Հապա, այրել են: Մեր եկեղեցին էլ չը կայ, իսկ փողոցը իբր ծուխ է: Եկ տես:

Իսկ մայրիկը հանգիստ իր գործն էր շարունակում ու սրտանց ծիծաղում էր:

—Ինչո՞ւ ես ծիծաղում, մայրիկ:

—Դու դեռ մառախուղ չե՞ս տեսել, աղջիկս. դա մառախուղ է:

—Մառախուղ:

Մառախուղը ամպից ինչո՞վ է զանազանում:

19. Շաղկապար

Լինում է չի լինում մի աղբատ մարդ: Էս աղբատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակտար: Օրական մի քանի

ձուկն է աշխատում, տուն բերում, ու նրանով ապրում են ինքն ու իր կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկն է բռնում, տալիս իր շալակտարին, որ պահի. ինքն էլ ետ ջուրն է մտնում: Էս շալակտարը գետափին նստած՝ նայում է նայում սիրուն ձկանն ու միտք անում:

—Տէր Աստուած, սա էլ, որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՝ սա էլ, մեզ նման, ծնող ունի, ընկեր ունի, աշ-



խարհքից բան է հասկանում, ուրախութիւն կամ ցաւ է զգում՝ թէ չէ...

Հէնց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում:

—Լսի, ասում է, մարդ-ախպէր: Ընկերներիս հետ ես խաղում էի գետի ալիքների մէջ: Ուրախութիւնից ինձ մոռացայ ու անզգուշ ընկայ ձկնորսի ուռկանը: Հիմի, ով գիտի, իմ ծնողը ինձ որոնում է ու լաց լինում, հիմի ընկերներս տխրել են: Ես էլ, տեսնում ես, ինչպէս եմ տանջւում. շունչս

կտրում է ջրից դուրս: Ուզում եմ էլ ետ գնամ, ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրում: Էնպէս եմ ուզում... Էնպէս եմ ուզում... Եկ խեղճ արի, աղատ արա ինձ, բաց թող, բաց թող գնամ...

Էնպէս էր ասում ցած, շատ ցած ձէնով, դամաքած բերանը բաց ու խուփ անելով:

Ջարմանում է աղքատ շալակտարը. մեղքը գալիս է, առնում է, ետ պցում գետը:

— Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չը լինի բո ծնողը: Թող չը տխրեն բո ընկերները: Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի վրա:

— Տօ ախմախ, ասում է, ես էստեղ ջրի մէջ թրջւելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես՝ էլ ետ ջուրը գցում... Ի՛նչ գնա կորի, էլ իմ աչքին՝ չերևաս, գնա սովից մեռի:

Ձեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու ղնում:

Առած.— Լաւութիւն արա՝ ջուրը գցի,
ձուկը չիմանայ, Աստուած կիմանայ:

20. Եղեռնի

Աշուն է: Բոլոր
ծառերը տկուր
տխուր անտառում
դողում են, մըսում:
Եղենին միայն
հսկայի նման
դուզւած է, կանգնած
ցուրտ բամուռ դիմաց:

21. Փոքրիկ մշակը



Խորէնի հայրիկը մշակութիւն էր անում քաղաքում: Մի իրիկուն շատ յոգնած վերադարձաւ տուն: Մէջքը ցաւում էր, ոտներում էլ ուժ չէր մնացել: Հայրիկը անկողին մտաւ ու մի քանի օր չէր կարողանում վեր կենայ, գնայ մշակութիւն անի:

Ո՞վ պէտք է ընտանիքը պահի, ո՞վ պէտք է կերակրի վեց հոգուն: Մայրիկը վերջին աբասին տալու այսօր ու տաւ հացի: Իսկ վաղն ի՞նչ պիտի ուտեն:

Խորէնը մտածում էր ամբողջ գիշերը:

Առաւօտը վաղ, երբ ամենքը քնած էին դեռ, և՛ հայրիկը, և՛ մայրիկը, և՛ փոքրիկ քոյրերն ու

եղբայրները, Խորէնը հագաւ հօր ոտնամանները, գլխին դրաւ փափախը, ուսը գցեց հօր փալանը ու գնաց կանգնեց քաղաքի հրապարակում, որտեղ կանգնում են մշակները:

- 1) Խորէնը ինչո՞ւ էր կանգնել հրապարակում:
- 2) Ի՞նչ էր մտածում՝ թէ իրիկունը ի՞նչպէս կը վերադառնայ տուն:
- 3) Խորէնին կը վարձէին թէ՛ չէ:
- 4) Ի՞նչով պիտի վերջանայ այս պատմութիւնը:

Առած.— Պատիկ է, բայց ճստիկ է:

Հանելուկ.— Կերթայ, կերթայ՝ ճամփայ չը կայ,
ճամփայ կերթայ՝ փոշի չը կայ:

22. Այո եւ Ոչ

1.

Այոն մի պատիկ ժիր աղջիկ էր, աչքերը ժպտուն, շրթունքները ժպտուն, քիթը դողդոջուն: Երբ մայրիկն ասում էր. «Երեսդ լւա, շորերդ սրբի», աղջիկը իսկոյն պատասխանում էր. «Այո, այո, մայրիկ»: Երեսը միշտ մաքուր էր, մազերը սանրած, շորերի վրա՝ ոչ մի բիծ:

Ոչը մի պատիկ դանդաղկոտ տղայ էր, յօնքերը կիտած, աչքերը մուսկ, շրթունքները ուռցրած, քիթը կախած: Երբ մայրը ասում էր. «Երեսդ լւա, շորերդ սրբի», տղան պատասխան էր տալիս. «Ոչ, չեմ ուզում, ոչ»: Երեսն էլ մրոտ էր, մազերը գրգգրզլած, շորերը փռշոտ:

Երբ մայրը ասում էր Այոին՝ «Գնա, թաշկինակս բեր», աղջիկը կանչում էր. «Այո, մայրիկ, իսկոյն»: Վազում էր՝ թաշկինակը բերում:

Ոչը երբէք մեծերի պատւերը չէր կատարի: Երբ հայրիկը կասէր՝ «Գնա, ձեռնափայտս բեր», նա ուսը վեր կը բաշէր և կը մըրթմըրթար. «Ոչ, չեմ բերի, ոչ»:

Ճաշի ժամանակ, երբ մայրիկը կասէր Այոին՝ «Անձեռոցիկը կապի, նստի բաժինդ կեր», աղջիկը կը կանչէր. «Այո, այո, մայրիկ: Օհ, այս ի՞նչ լաւ կերակուր է»:

Իսկ երբ Ոչին կասէին. «Անձեռոցիկը կապի, նստի՝ բաժինդ կեր», կոշտ ու կոպիտ կաղաղակէր. «Ոչ, չեմ կապի, ոչ: Ուժ, այս ի՞նչ վատ կերակուր է»:

2.

Երբ կը մթնէր ու մայրիկը ձայն կը տար Այոին՝ «Ժամանակ է, հանւի ու պառկի», աղջիկը տեղից վեր կը թռչէր ու կը կանչէր. «Այո, այո, ժամանակ է: Բարի գիշեր, հայրիկ. բարի գիշեր, մայրիկ»:

Իսկ Ոչը երբէք ինքը չէր գնայ քնելու, ոտները գետնին կը գարնէր, կը յամառէր. «Ոչ, չեմ քնի, ոչ», ու կը սկսէր լաց լինել: Զոռով շորերը կը հանէին, անկողին կը պառկեցնէին:

Եւ երբ Ոչը մէկ տեղ հիւր կերթար ու զանգը կը տար, նրան որ կը տեսնէին, պիտի կանչէին. «Ոչ, ոչ, այսօր մենք զբաղւած ենք», և շտապով նրա քիթի առջևը դուռը կը փակէին:

Իսկ երբ Այոն զանգը կը տար, առաջը կը վազէին՝ «Այ, բարի ես եկել, բարի ես եկել, ներս հրամմէ, ներս», ու դռները լայն բաց կանէին:

Ի՞նչ ուրախութիւն ու ծիծաղ էր այնտեղ, որտեղ Այոն էր: Ոհ, ի՞նչ տխրութիւն ու լուռութիւն էր այնտեղ, որտեղ Ոչն էր:

23. „Պօղոս-Պետրոս“

1.

Վաղո՛ւց, երբ մօտ էր երկրին երկինքը ու լըսում էր դեռ մարդկանց Տէր-Ինքը, էն լաւ ժամանակ երկու մանուկներ ունէին մի չար, մի անսիրտ խորթ մէր:

— Կորէք, գնացէք, աշխատանք արէք, աշխատանք արէք ու բերէք կերէք. ի՞նչ էք վեր թափել անգործ ու անբան հասած տղերք էք հինգ-վեց տարեկան...

Էսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը, ճիպտոներ տըլաւ, դըրկեց հորթերը: Անհանգիստ հորթեր, ամառւան շոք օր. կէտ արին, փախան ընկան սար ու ձոր: Նըրանց ետևից, լալով, հեալով, փոքրիկ որբերը՝ քարէքար գալով՝ վազ էին տալի անտառի միջում,



վազ էին տալի ու իրար կանչում.

— Պօղոս, գտա՞ր:

— Չէ՛ք:

— Պետրոս, գտա՞ր:

— Չէ՛ք:

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

2.

Շատ ուր ման եկան՝ խեղճերն

յոզնեցին,

եկան՝ խորթ մօրը լալով պատմեցին.

— Նանի, այ նանի, կորան հորթերը...

— Վայ, գետինն անցնէք, ճրչաց խորթ մէրը:

Թող դուք կորչէիք հորթերի տեղակ
անտակ ձորի մէջ, անժաժ քարի տակ:
Մի արջ պատահէր, մի գազան, մի գէլ,
որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ...
Դէ, ետ գընացէք, գընացէք, կորէք,
մինչև չը գտնէք հորթերը բերէք՝
աչքիս չերևաք, այ աչքիս փըշեր,
թէ չէ կը սպանեմ ես ձեզ էս գիշեր...

Ու ճիպոտն էլ ետ իրենց թաթերին,
յոզնած ու սոված, արցունքն այտերին,
փոքրիկ որբերը՝ անտառի միջում,
գիշերւան կիսին լալիս են, կանչում.

— Պօղոս, գտա՞ր:

— Չէ՛ք:

— Պետրոս, գտա՞ր:

— Չէ՛ք:

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

3.

Անտէր հորթերը չը կան ու չը կան:
Ճարները կըտրած խեղճերը՝ եկան,
լալով չոքեցին.

— Տէր Աստուած, ասին,

ի՛նչ կըլի, գըթաս՝

գոնէ թևեր տաս,

թևեր տաս՝ թըռչենք,

թըռչենք ու կորչենք,

որ էլ չը տեսնի մեզ մեր խորթ մէրը,

մինչև որ գըտնենք կորած հորթերը...

Հէնց ասին-չասին անմեղ բերանով,

Աստուած որոտաց իր գըթոտ ձայնով.

— Ահա ձեզ թևեր, սիրուն երեխէք,

թըռչուններ դառէք, թռած ման եկէք,

որ էլ չը տեսնի ձեզ ձեր խորթ մէրը,

մինչև որ գըտնէք կորած հորթերը:

Գիշերը քնեցէք ծառերի ճիւղին,

ծեղն ու ծղօտը արէք անկողին,

ապրուստ էլ կերէք իմ լի սեղանից,

երբ որ դատարկուն եղաք ձեր տանից...

4.

Էսպէս վերևից հէնց կանչեց Աստուած,

փոքրիկ որբերը փոխեցին յանկարծ

ու թևեր առան,

թըռչուններ դառան.

ու թևեր առած՝

թըռչուններ դառած՝



դեռ մինչև էսօր,
ընկած սար ու ձոր,
ծըլուժ են, մընչուժ,
մէկ մէկու կանչում.

— Պօղոս, գտա՛ր:


— Չէ՛:

— Պետրոս, գտա՛ր:

— Չէ՛:

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ:

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ:



24 Կացին ախպերը

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկաւ մի գիւղ: Տեսաւ, այս գիւղի մարդիկ ձեռով են փայտ կտրատում:

— Ախպէր, ապա, ինչո՞ւ էք ձեռով փայտ անում, մի՞թէ կացին չունէք:

— Կացինն ի՞նչ բան է,— հարցրին գիւղացիք:

Մարդը իր կացինը գօտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց միւս կողմը: Գիւղացիք այս ուր տեսան, վազեցին գիւղամէջ, ձայն տւին իրար.

— Տօ, եկէք, տեսէք, կացին ախպէրը ինչ արաւ:

Գիւղացիք հաւաքւեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տւին ու կացինը ձեռիցն առան:

Կացինն առան, որ հերթով կտրատեն իրենց փայտը: Առաջին օրը տանուտէրը տարաւ: Կացինը վրա բերաւ թէ չէ՝ ոտը կտրեց: Գոռալով ընկաւ գիւղամէջ.

— Տօ, եկէք, եկէք, կացին ախպէրը կատաղել է, ոտս կծեց:

Գիւղացիք եկան, հաւաքւեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել: Ծեծեցին, տեսան՝ բան չը դառաւ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացաւ, չորս կողմը բռնեց: Երբ կրակն իջաւ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է:

— Վայ, տղերք, կացին ախպէրը բարկացել է, տեսէ՛ք՝ ոնց է կարմրել. որտեղ ուր է, մեր գլխին մի փորձանք կը բերի: Ի՞նչ անենք:

Մտածեցին, մտածեցին ու վճռեցին տանն բանտը գցեն:

Տարան գցեցին տանուտէրի մարագը: Մարագը լիքը դարման էր. գցեցին թէ չէ՝ կրակն առաւ, բոցը երկինք բարձրացաւ:


Գիւղացիք սարսափած վազեցին տիրոջ ետեւից թէ՛ «Ե՛կ, Աստծու սիրուն, կացին ախպօրը բան հասկացրու»:

1) Կացնի տէրը որ եկաւ, ի՞նչ արաւ:

2) Փայտ կտրելու ու ջարդելու համար ուրիշ էլ ի՞նչ գործիք գիտես:

3) Ի՞նչից են շինած այդ գործիքները:


25. Ուրագ ու սղոց



Մի լինի ուրագի պէս,
միշտ դէպի քեզ, միշտ դէպի քեզ.
այլ եղի՛ր սղոցի պէս,
մին դէպի քեզ, մին դէպի մեզ:



26. Ադեսը բաժանարար



Երկու ագռաւ մի կտոր պանիր էին գտել: Ուզում էին իրենց մէջ բաժանեն: Մինն ասում էր—ես բաժանեմ, միւսը թէ՛ չէ, ես: Ու կռւում էին ծառի վրա: Ոչ մինը չէր համաձայնում որ ընկերը բաժանի:

Մի աղւէս տեսաւ, եկաւ ծառի տակը կանգնեց.
—Ինչո՞ւ էք կռւում, ասաւ. պանիրը ներքե գրցեցէք, էնպէս բաժանեմ, որ ոչ մէկիդ բաժինը աւել պակաս չը լինի:

Վէճը դադարեց. ագռաւները պանիրը գցեցին ծառի տակը:

Աղւէսը երկու կտոր արաւ, բռնեց երկու թաթերի մէջ, ծանր ու թեթեւ արաւ, որ ոչ մինը աւել պակաս չը լինի:

—Էս մինը ծանր է, ասաւ, ու կծեց:
Դարձեալ թաթերով կշռեց, հիմի էլ մէկէլից կծեց:

Կծելով, կծելով բոլորը կերաւ ու սուս ու փուս գնաց իր բանին:

Ագռաւները մնացին ետեւիցնայելիս:

Ագռաւները իրարեղից էին գտել պանիրը:

Ա. Ու ա ծ. — Գողը գողից գողացաւ, Աստուած վերից զարմացաւ:

27. Համլիկի աղօթքը

Իրիկուն է: Համլիկը պատրաստուում է քնի: Մայրիկը շորերը հանեց ու ասաւ.

—Դէ, հիմի աղօթիր:

Երեխան չօքեց իր ճերմակ անկողնում, «Հայր մերն» ասաւ ու մեծ պայծառ աչքերը վեր ուղղելով՝ Աստծուն խնդրեց.

—Աստուած ջան, պահի հայրիկին, մայրիկին, Մուշեղին, Աշխէնին, Նունիկին, Անօին, Արփիկին...

Ու կանգնեց:

—Էլ ո՞ւմ,—հարցրեց մայրիկը:

—Պապին, տատին, հօրեղբայր Վահանին, Սիգուշին, Լեւոնին, Կուտիկին:

Սիգուշն ու Լեւոնը իր ընկերներն էին, իսկ Կուտիկը իրենց շունն էր:

Աղօթքը վերջացնելով՝ նա ուրախ-ուրախ մտաւ վերմակի տակը:

Մայրիկը ծիծաղելով նրան համբուրեց ու ասաւ.

—Ախ, դու անպիտան, Կուտիկին էլ մեր շարքը դրի՞ր...

—Ի՞նչ կայ որ... Ձի կարելի՞: Բաս Կուտիկին չը պահես, Աստուած, նրան թող...

Մայրիկը ծիծաղելով մին էլ համբուրեց ու դուրս գնաց:

Երեխան սկսեց մտածել՝ «Ինչո՞ւ Աստուած չը պահի Կուտիկին, ինչո՞ւ նրան թողնի»...

Մտածեց, մտածեց, գլուխը հանեց անկողնի միջից ու շրջընջաց սենեակի լուսթեան մէջ.

—Ձէ, Աստուած ջան, չէ, Կուտիկին էլ պահի:—Բայց մայրիկին չասես:

Ու նորից մտաւ վերմակի տակ:

1) Համլիկը ինչո՞ւ ասաւ—«մայրիկին չասես»:

28. Եռնն ու կատուն

I.



Ժամանակով կատուն
ճոն էր,
շունն էլ գլխին գդակ
շունէր,
միայն գիտեմ ոչ՝ որ-
դիանց որդի
ճանկել էր մի գառան
մորթի:
Եկաւ մի օր, ձմեռնա-
մտին,
կատուի կուշտը տարաւ
մորթին:
— Բարի աջողում, ուս-
տա Փիսօ,

գլուխս մրսեց, ի սէր Աստծոյ
ան էս մորթին ու ինձ համար
մի գդակ կարի գլխիս յարմար:
Վարձիդ համար միամիտ մընա,
համա-համա շատ չուշանայ:
— Աչքիս վրա, քեռի Քուշի.
մի գրգակ է, հօ մի քուրք չի.
քո թանգագին խաթեր համար
ուրբաթ օրը համեցէք տար:
Փողի մասին աւելորդ է,
մեր մէջ խօսելն էլ ամօթ է.
ինչ մեծ բան է, տօ հէր օրհնած,
միայն-միայն մի գդակի վարձ:
Ուրբաթ օրը քեռի Քուշին՝
ուստից առաջ՝ բաց-բաց կուճին

Թափ թափ տալով՝ ծանդըր ու մեծ
ուստա կատուի շէմքում կանգնեց:
— Ուստէն ուր ա... փափախս ուր ա...
«Մի քիչ կացի—հրէս կերևայ»:

II

Ուստէն եկաւ քուրքը հագին.
շանը տեսաւ, բեխի տակին
իրեն իրեն քիչ փրնթփրնթաց
ու մուշտարու վըրա թընդաց.

— Ցուրտը տարաւ... վահ, տընաշէն,
չես թող անում մի շունչ քաշեն.
հեշտ բան հօ չի, դեռ ես նոր եմ
ցըրցամ տըլել, թէ որ կարեմ:

— Դէ օրհնած, էտէնց ասա,
էտ բարկանալդ էլ էլ ընչիս ա:
Փող եմ տըլել, վախտին կարի,
թէ չէ ասա՝ էգուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
համ խօսում ես, վըրէս գողում.
համ, համ, համ, համ,
բանի՞, ախպէր, զընամ ու գամ...

Ասաւ Քուշին ու նեղացած
վերադարձաւ գլուխը բաց:




III

Մին էլ եկաւ, դարձեալ չը կար.
էս անգամը դիպան իրար.
էլ անպատիւ, անարգ խօսքեր,
էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,
էլ գող Փիսօ, էլ բաշալ Շոնն...
Բանը հասաւ դիւանբաշուն:

Շունը մինչև գընաց, եկաւ,
 ուստա կատուն կոտորն ընկաւ,
 գլուխն առաւ ու մի գիշեր,
 հայդէ, կորաւ. էն կորչիլն էր...

IV

էն օրւանից մինչև օրս էլ
 շունն էս բանը չի մոռացել.
 մըտքում հըլա դեռ պահում է,
 որտեղ կատուն պատահում է,
 վեր է թըռչում, վըրա վազում,
 իրեն մորթին ետ է ուզում.
 իսկ սևերես կատուն յանկարծ
 ետ է դառնում ու բարկացած
 փըշտացնում է. մըթամ նոր եմ
 ցըրցամ տըւել, թէ որ կարեմ:



29. Բրդոտ խաղընկերը

Պանդուկում նստած էր արջ պար ածողը և ճաշում էր,
 իսկ արջը կապած էր դուրսը սիւնից. նա սարսափելի տեսք
 ունէր, բայց ոչորի փնաս չէր տալի:

Պանդուկի գլխին, սենեակում խաղում էին երեք փոքրիկ

երեխաներ: Մեծը վեց տարեկան կը լինէր, իսկ ամենից փոքրը
 հազիւ երկու տարեկան:

Թրախկ, թրոլխկ, մէկը սկսեց բարձրանալ սանդուղքով.
 Պի պիտի լինէր:

Յանկարծ դուռը լայն բացւեց, ու ահագին բրդոտ արջը
 մտաւ ներս: Խեղճը ձանձրացել էր ներքևում կանգնելուց,
 կապը բացւել էր, և ահա նա գտել էր սանդուղքը:

Երեխաները սաստիկ վախեցան, ամեն մէկը մտաւ մի



անկիւն: Արջը մօտեցաւ երեքին էլ, հոտոտեց իր լայն դնչով,
 բայց ոչինչ չարաւ նրանց: «Երևի սա մի մեծ շուն է», սիրտ
 առան երեխաները ու սկսեցին փաղաքշել:

Արջը փուլեց յատակին. փոքրիկը ընկաւ նրա վրա, թաւալ
 էր տալիս ու խաղում:

Խաղում էր ու իր ոսկեհեր գլխիկը թաղում էր արջի խիտ
 ու սև բրդի մէջ:

Իսկ մեծ եղբայրը բերեց իր թմբուկը և սկսեց զարկել:

Հէնց որ թմբուկը թնդաց, արջը տեղից վեր կացաւ, կանգնեց ետեւի թաթերի վրա ու սկսեց պար գալ:

Մի ուրախութիւն էր ճիւղ...

Իսկոյն երեխաներից ամեն մէկը վերցրեց մի մի հրացան, արջն էլ իր հրացանը ստացաւ, մի աւելի կոթ, որ շատ կարգին ու ամուր էր բռնում:

Հիանալի ընկեր էին գտել: Ու իրար ետեւից շարւած՝ ոտները խփում էին գետնին ու գնում:

—Մէկ-երկու, մէկ-երկու:

Յանկարծ դուռը բացւեց ու մայրը սարսափահար կանգնեց դռան մէջ: Երեխաներից մէկը ուրախ-ուրախ գլխով արաւ ու գոռաց:

—Մայրիկ, տես, գինւոր ենք խաղում...

Հէնց այդ վայրկեանին էր, որ վրա հասաւ արջ պար ածողը:

1) Ի՞նչ արաւ արջ պար ածողը:

2) Ինչո՞ւ ամենից առաջ փոքրիկը սկսեց արջի հետ խաղալ:

3) Էլ ի՞նչ կենդանի գիտես, որ պար են ածում:

Առաժ.—Արջը խաղով եղաւ, տանձը մտքից ընկաւ:

30. Անպն ու սարը



Ամպը եկաւ նստեց սարին,
նստեց սարի սուր կատարին:
—«Լրսի, պապի, ասաւ նրան.
լաւ օրերդ անցան, կորան.
խիստ, սոսկալի ցուրտ է գալի»:

Ասաւ, գնաց:

Սարը կամաց

մտաւ սիպտակ

վերմակի տակ:

Ինչո՞ւ ծիւնը ամենից առաջ սարի գլխին է նստում:

Առաժ.—Աստուած սարը կը տեսնի, ձիւնը կը դնի:

31. Իշուկի գանգաւոր

1.

Այգեպանը մի էշ ունէր: Լաւ կերակրում էր, լաւ խնամում, բայց լաւ էլ բանեցնում էր: Էս մէկը իշուկին դուր չէր գալիս:

Գարնանը ամեն օր այգեպանը ծաղկով ու կանաչով լիբը քթոցները բարձում էր իշուկին ու բշում քաղաք:

—Ի՞նչ յիմար են էս մարդիկ,—մտածում էր իշուկը ճանապարհին.—ծաղիկն էլ ի՞նչ բան է, որ սիրում են: Ախ, մի ամառը գայ, պրծնենք էս անպիտան վարդերից, շուշաններից, յասմիկներից, էս սպանախից ու ծնեբեկից, էս սիբեխից ու սինդրիկից, էս բոխից ու բոխկից, հանգիստ գնամ՝ քէֆիս արածեմ:

2.


Ահա և ամառը:

Այգոււմ արդէն հասել էին լոբին ու բադրիջանը, սեխն ու ձմերուկը, դդուճն ու վարունկը, գազարն ու բազունկը:

Էշը հազիւ էր տեղից շարժւում էտ ծանրութեան տակ ամառուայ շոքին:

—Ա՛խ,—տնքում էր էշը բրտինքի մէջ կորած.—Երբ է գալու աշունը, կանաչից էլ պրծնենք,

բանջարեղէնից էլ ու մի ազատ շունչ քաշենք:



Եկաւ աշունը: Խաղողը հասաւ, տանձ ու խնձորից կոտորատում են ծառերի ճիւղերը, նուազ կարմրին է տալիս, սերկերը դեղնին: Էլ դեղձ, էլ ընկոյզ, ո՞ր մէկն ասեմ: Ծանր բթոցները բարձում էին իշուկին ու քշում բաղաբ:

— Էս ի՞նչ տանջանք է, տժ,— գլուխը կախ գցած թառանջ էր քաշում իշուկը: Գոնէ շուտով մի ձմեռը գայ, երկիրը սառչի, էս անտէր բոյսերը չորանան, ես էլ ազատեմ: Թողնեն ինձ հանգիստ ախոռում, ուտեմ ու պառկեմ:

Հասաւ ձմեռը: Սարսափելի ցուրտ: Այգեպանը իշուկին քշում էր անտառ, փայտ էր կտրում, ցախ էր հաւաքում, խռիւ ժողովում, բարձում իշին ու բերում տուն:

— Ի՞նչ անիծած եղանակ է, — մրսելով ու սայթաքելով գանգատում էր իշուկը: — Ամեն ինչ քար է կտրել, խոտ չը կայ, բան չը կայ: Երանի մի գարունը բացելի:

Ի՞նչպէս կը գանգատուէր արատիւրը իշուկը:

Առաժ.— Իշին հարսանիք կանչեցին, ասա՛ւ կամ ջուրը պակաս կը լինի, կամ փայտը:

32. Հետաքրքիր Բարեկէներ

Բարեկէներ կանգնել էր իրենց հարեան ատաղձագործի խանութի առջև և նայում էր թէ ինչպէս է աշխատում:

Նայեց, նայեց ու ասաւ.

— Վարպետ, ի՞նչ կը լինի, ինձ էլ սովորեցնես բո արհեստը:

— Աչքիս վրա, — պատասխանեց ատաղձագործը ծիծաղելով. — սովորեցնեմ: Տես, պահարան եմ շինում, կողբերը արդէն պատրաստ են, հիմա դռներն եմ շինելու...

Վարպետի խօսքը բերնումն էր, ներս մտաւ հացթուխի աշակերտը:

— Քանի՞ հաց թողնեմ, բեռի, — հարցրեց նա:

— Էտ հացը ի՞նչպէս էք թխում, — մէջ ընկաւ Բարեկէներ, ներս քաշելով թաժա հացերի անուշ հոտը:

— Ուզում ես տեսնես, հետո արի մեր փուռը. էստեղ ի՞նչ ասեմ, — պատասխանեց տղան:

— Գնանք, — ասաւ Բարեկէներ:

Հացթուխի աշակերտը տարաւ նրան փուռը ու ցոյց տաւ ալիւրն ու թթիւմորը և սկսեց պատմել թէ ինչպէս են խմորը շաղախում ու հունցում:

— Ա՛յ, տղայ, մի երկու գրեւորայ հաց քաշիր, — լսեց յանկարծ փռան դռնից:

Բարեկէներ ետ նայեց, տեսաւ՝ կանգնած է մի մարդ կաշւէ գոգնոցով, վզովը թելերը գցած:

— Բիձա, էտ երկար ու հաստ թելերը ի՞նչ ես անում:

— Կօշիկ եմ կարում, ի՞նչ պիտի անեմ, — պատասխանեց մարդը:

«Գնամ տեսնեմ կօշիկը ոնց են կարում», — մտածեց նա, թողեց փուռը ու շտապեց կօշկակարի ետեւից:

— Դանակ, մկրատ ո՞վ ունի, սրելու դանակ, մկրատ, — կանչում էր մէկը փողոցում:

Բարեկէներ թողեց կօշկակարին ու վազեց այն կողմը, կանգնեց սրելու գործիքի դէմը, որ տեսնի՝ ինչպէս է սրում:

Սրողը իր գործիքը դրել էր մի մուխ խանութի դռան առջև: Բարեկէնի աչքը յանկարծ ներս ընկաւ, տեսաւ՝ այնտեղ կիտած են մեխեր և ուրիշ երկաթի կտորներ:

«Սա՛ ինչ բանի համար է», — մտածեց նա:

Այդ միջոցին մի կառապան ձին կանգնեցրեց խանութի առջև ու կանչեց.

— Զիռս մի պայտը ընկել է: Պայտես, ախպէր:

— Ըհ, ինչ լաւ եղաւ, էս էլ կը տեսնեմ, — խօսեց ինքն իրան Բարեկէներ ու մօտեցաւ ձիուն, որի ոտը կապում էին ու վեր քաշում:

—Մի տեղ տւէք, է, տեսնեմ՝ ինչպէս էք անում,—ասաւ Բաբկէնը մէջ մտնելով:

—Դէնը կորի, ա՛յ տղայ, բացի կը տայ, գլխներիս ցաւ կը դառնաս,—բարկացաւ պայտառը:

Բաբկէնը վիրաւորւեց այդ կոպիտ պատասխանից, խռովեց ու գնաց տուն:

—Գիտե՞ս, մայրիկ, ես այսօր ինչքան բան եմ սովորել,—դիմեց նա մօրը.—սովորել եմ թէ ինչպէս են պահարան շինում, յետոյ ինչպէս են հաց թխում, յետոյ...

—Հապա, պատմիր տեսնեմ, ինչպէս են թխում,—ընդհատեց մայրը:

—Ա՛յ, ամենից առաջ... ամենից առաջ...—կազդեց Բաբկէնը ու էլ չը կարողացաւ շարունակի:

1) Բաբկէնը ինչո՞ւ չը կարողացաւ շարունակել:

2) Իսկապէս հետաքրքիր տղայ էր Բաբկէնը:

3) Ձին ինչո՞ւ են պայտում:



33. Յուրտը փչեց

Յուրտը փչեց, ձմեռը սաստիկ,
ծիւնը ծածկեց գետինը.
ամեն մի մարդ մտաւ իր տուն՝
պատըսպարւի ցըրտիցը:
Ժամի դռան դողդողալով
կանգնած է մի աղքատ կին.
Նրա հանդերձ պատառ-պատառ,
չունի շապիկ իր հագին:
Անհամարձակ նա իր ձեռքը
պարզում է անցկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
անտուն, անտէր աղքատին»:

Առաժ.—Ողորմութիւնն այնպէս տուր, որ շապիկդ չիմանայ:

34. Քեռի Սիմօնի նապաստակը

1.

Քեռի Սիմօնը շատ լաւ մարդ է. ափսոս որ գինին մի քիչ շատ է սիրում:

Մէկ օր աղան նապաստակ է ուղարկում նրա ձեռքով բաղաք ընկերոջը նւէր:

Քեռի Սիմօնը լօլօզականջ—կարճպոչանուն ձգում է մի պարկի մէջ, պարկը շալակում ու ճամփայ ընկնում: Ո՞նց է գնում... Իսկ նապաստակը պարկում կուչ է եկել, կծիկ կտրել:

Ճամփի կիսին մի գինետուն կար: Քեռի Սիմօնը ուզում էր առանց նայելու արագ մօտովն անց կենայ. մի տասը բայլ էլ արդէն անցել էր դէնը, բայց... չը համբերեց, ետ նայեց: Խանութի շէմքում ծանօթներ տեսաւ:

Մտածեց. «Ամօթ է որ մէկ բարի լուս էլ է չասեմ»...

Քեռի Սիմօնը մտաւ գինետուն: Պարկը դուրսը վայր է դրել ու ծանօթների կենացն է խմում: Չը գիտի թէ էտ ծանօթները գլխին ի՞նչ են բերելու:

Խմեց, պարկը շալակը գցեց ու բայեաթին կկկացնելով՝ առաջ է գնում:

Մենակ էս նապաստակը ինչ որ շատ է վեր-վեր թռչում պարկի մէջ: Պա՛, էս ի՞նչ էլ սուր ատամներ է ունեցել: Քեռի Սիմօնի մէջքը կարծես ասեղներով ծակծկելիս լինէր:

—Ա՛յ, հանգիստ կաց, շղիկ խնամի: Շոքեցիր հա՛: Էս է կը հասնենք, մուշտակդ կը հանեն, դէ գնա ու էնտեղ տկլոր տկլոր տրտինգ տո՛ւր:

Քեռի Սիմօնի քէֆը տեղն էր:

Էս էլ ահա աղայի ընկերոջ տունը:

—Թրը՛խկ, թրը՛խկ: Բաց արէք, բաց արէք: Մէկ նապաստակ եմ բերել, մէկ նապաստակ որ... Դէ, շտապեցէք, շոքել է:

Ողջ տանեցիք դուրս թափւեցին: Քեռի Սիմօնը նապաստակը առօր-փառօք պարկից հանում է:

Կատոն:

Քեռի Սիմօնը շշկլած՝ կանգնել է կատարկ պոչից բարձր բռնած:

—Այդ նապաստակը բեզ լինի, բեզ,— կանչում է տանտիկինը:

Աղայի ընկերը բարկանում է, երեխաները ծիծաղում են, տան շները հաջում են:

Քեռի Սիմօնը վերջապէս կատուն գրցում է նորից պարկը, շալակում, և հայդէ ետ, դէպի գիւղը:

2.

Ճամփին մտածում է և ինքն իրան ասում:

«Քեռի Սիմօն, տեսա՞ր հօ, հօ տեսա՞ր: Ախր նապաստակ բռնողը դժու չէիր, դժու, խելքի տուպրակ: Չը լինի թէ աղէն հանաք է արել, որ ինձ խայտառակի»:

Գնում է քեռի Սիմօնը, առաջւանից շտապ է գնում: Էլի գինետան մօտից է անցնում:

Մտնի, թէ՞ չը մտնի: Չէ, ի՞նչպէս կարելի է. պէտք է շուտով տուն հասնի. էս բան է՝ որ իր տարիքի մարդուն էսպէս խայտառակեցին ժողովրդի միջին: Չէ, չէ, չի մտնի:

Ու մի քսան քայլ անց է կենում դէնը:

—Բա էս այրւած սիրտն էլ է չը հովացնեմ,— մտածում է մէկ էլ, պարկը մէկ ուսից միւսն է գցում ու շուռ տալիս դէպի գինետունը:

Նորից մի երկու բաժակ կոնծում է ծանօթների կենացը: Նրանք էլ հօ անում են իրենց անելուն:

Պարկը շալակին ահա մտնում է մեր քեռին գիւղը:

«Ո՛նց է սուս կացել, սրան տես: Հիմի թռչկոտիւր պարկի մէջ, է... գիտես՝ որ էս է զրիկ եմ անելու քեզ, հա... Մէկ աղին տեսնեմ դեռ: Էսպէս էլ խայտառակութիւն: Քեռի

Սիմօնը ո՞վ, կատուն ո՞վ: Տօ, էն աշխարհքի պարծանք որսկանը ո՞վ, մկան գողը ո՞վ»:

Թրըխկ, հա թրըխկ, հնց է ծեծում Քեռի Սիմօնը աղայի դուռը:

—Բաց արէք էլի, բաց արէք: Ալևորիս խայտառակեցիք: Չեզ մի կատու ցոյց տամ, մի կատու ո՞ր...

Տանեցիք դուրս են թափւում:

—Ահա, աղա, ընկերդ բեզ ետ է զրկում: Ասում է. «էս դու, էս էլ քո նապաստակը»:

Մէկ էլ զորթ՝ նապաստակը չը հանի պարկից:

Քեռի Սիմօնը շշկլած կանգնել է՝ նապաստակի երկար ականջներից բարձր բռնած: Աղան աչքերը չռած նայում է, թէ նապաստակը ինչո՞ւ է ետ բերել:

Թո՛ւ, սատանի ճուտ,—յանկարձ աղաղակում է Քեռի Սիմօնը: Նապաստակը ձեռքից վայր է ընկնում ու փախչում: Աղան կանգնած հարայ է տալիս, շները վազում են:

3.

Էն է ու էն՝ քեռի Սիմօնը նապաստակ չի որսում:

Էն է ու էն՝ աղան և իր ընկերը իրար հետ վիճում են:

Դու ինձ ինչո՞ւ էիր կատու ուղարկում, ես քո մասխաւան եմ:

—Աստուած, երկինք, նապաստակ էր, նապաստակ:

Հարցնում են քեռի Սիմօնին.

—Այ ալևոր, քո բռնածը, բաղաք տարածը նապաստակ չէ՞ր:

—Նապաստակ էր, աղա ջան, դու շատ ապրես, նապաստակ էր:


—Այ մարդ, քո բերածը կատու չէ՞ր, սե կատո՞ւ,—հարցնում է աղայի բարեկամը:

—Կատու էր, աղա ջան, բաս կատու չէ՞ր:

Էսպէս մինչև էսօր էլ վիճում են:

Գուցէ դո՞ւք սրանց քացատրէք, թէ ի՞նչպէս է որ նապաստակը կատու դարձաւ, կատուն էլ՝ ետ նապաստակ:





35. Մի քաղ-նաւակ արեւնքին

Դաշտ ու անտառ, գիւղի ճամփան
ծածկըւել է մի թիզ ձիւնով.
էլ չի ճարւում ուտելու բան,
նով էր տեսել էս տեսակ սով.
ոչ մի ցորեն, ոչ մի հատիկ...
Խնդրում ենք ձեզ, բարի մարդիկ,
Աստծու սիրուն, մի կըտոր հաց,
կոտորւեցինք, մեռանք սոված:

Շուտով կը քան օրեր գարնան,
մենք ձեզ համար կերգենք զըլարթ,
ու փոխարէն ձեր լաւութեան
ձեր պարտէզը, այգին ու արտ
կը մաքրենք մենք թրթուրներից,
ճիճուններից ու որդերից.
միայն թէ հիմի մի կըտոր հաց,
կոտորւեցինք, մեռանք սոված:

Մի խումբ ծրտերի կողմից

Ժիտիկ ժնձողուեան

Թռչունները մեզ ինչ օգուտ են տալիս:

Շ ու տ ա ս ե լ ու կ. — Միտը ճմբան ծէրին, ծախ ճուտի ճիտը ծուռ:

36. Փող

Շատ ժամանակ չէ, ինչ կոտորել է Հռիփսիկի ոտը: Հայրը
շատ դէս ու դէն ընկաւ, շատ բժիշկների դիմեց, բայց ոչինչ
չօգնեց:

Աղջկայ ոտը կտրեցին:

Մի օր հայրը նստել գրում էր սեղանի առաջ. Հռիփսիկը,
փայտէ ոտը թրխկթրխկացնելով՝ մօտեցաւ նրան:

— Հայրիկ ջան, հերիք չի՞. ինչո՞ւ ես այդքան նստում, գր-
րում, հա գրում:

— Բաս ի՞նչ անեմ, աղջիկս, չէ՞ որ պէտք է փող աշխատեմ:

— Ինչի՞դ է պէտք փողը, հայրիկ ջան: Մի կտոր թուղթ է
կամ մի պստիկ ոսկի, հօ էլ ոչինչ:

— Բայց ինչ որ ուզենաս, փողով կարող ես առնել, — ասաւ
հայրը: — Ա՛յ, քեզ համար խաղալիք, քաղցրեղէն, սիրուն շոր,
գլխարկ, ինչ որ ուզենաս...

Հռիփսիկը մտածեց, մտածեց և յանկարծ ասաւ.

— Ինչ որ ուզենամ, հայրիկ...

— Այո, աղջիկս:

— Մի ոտ գնի ինձ համար, հայրիկ ջան, մի իսկական ոտ:
Այնպէս ուզում եմ երկու ոտով վազեմ, ուզում եմ թռչկո-
տեմ, ուզում եմ խաղամ. մի ոտ, հայրիկ ջան, մի ոտ:


Հայրը ոչինչ չը պատասխանեց, գրկեց աղջկան, սեղմեց
կրծքին ու սկսաւ համբուրել:

Հռիփսիկը զգաց թէ ինչպէս ամուր զարկում էր հայրիկի
սիրտը, ու նայեց նրա աչքերին:

Հայրիկի աչքերում արցունքներ էին փայլում:

1) Ինչո՞ւ էին արցունքներ փայլում հայրիկի աչքերում:

2) Ի՞նչ մտածեց Հռիփսիկը հայրիկի արցունքները տեսնելով:



37. Ծաղիկները

—Ո՛ր գնացին ծաղիկները:

—Սո՛ւս. քնած են հողի տակ,
տաք ծածկւած ողջ ձմեռը
ձիւն-ծածկոցով ըսպիտակ:

Կը գայ գարնան արևն էլ ետ
իր շողերով կենդանի,
ձմրան սաստիկ ցրտերի հետ
ձիւն-ծածկոցը կը տանի:

«Ելէք, կասի, իմ մանուկներ».
ու հէնց նրանք իմանան,
դուրս կը հանեն գլխիկները,
աչիկները կը բանան:

1) Ինչո՞ւ ձմեռը խոտ ու ծաղիկ չի լինում:

2) Ինչո՞ւ ձմեռը խոտն ու ծաղիկները չեն ունենում:

38. Զվեռը

1.

—Օ՛ֆ, երբ պէտք է անցնի էս անպիտան ձմեռը,—ասում
էին մարդիկ փակ սենեակներում:

—Օ՛ֆ, երբ պէտք է վերջանայ էս անիրաւ ձմեռը,—գան-
գատւում էին կենդանիները նեղ որջերում:

—Օ՛ֆ, երբ պէտք է ազատւենք էս անտանելի ձմեռայ
ձեռքից,—տրտնջում էին թռչունները մերկ ճիւղերին:

Ու սաստիկ բարկացաւ ձմեռը: Վճռեց մէկ անգամից
վերջացնի բոլորին:

Ձայն տւաւ բուք ու բորանին, կանչեց սառնամանիքները,
հաւաքեց իր բոլոր զօրութիւնը ու յարձակեց աշխարհի վրա:

Խոր ձիւնով բռնեց ճամփաները, կապեց ջրերը, կախ տւաւ
սառցէ լուլաներ տանիքներից ու ծառերից, սառցէ վարա-
գոյրներ քաշեց լուսամուտներին, խցկեց որջերի բերանները
և դանակի պէս կտրող սուր բամին բաց թողեց դաշտերի,
սարերի ու ձորերի վրա:

2.

Բայց իզուր:

Թէև թռչուններից մի բանիսը ցրտահար եղան, բայց մը-
նացածները կուշ եկան տների ծածկերի տակ, ծխնելոյզների
մօտ, տաք ճեղքերում և չը մեռան:

Վայրի կենդանիները մուշտակները հագնեցին՝ չէին վա-
խենում ձմեռայ բարկութիւնից և դուրս էին գալիս որս ա-
նելու:

Մարդիկ աւելի պնդացրին պատուհաններն ու դռները,
աւելացրին վառարանի կրակը, հագան իրենց ամենատաք շո-
րերը ու գնացին իրենց գործերին:

Ձմեռը տեսաւ այս բոլորը, տեսաւ ու յուսահատւեց:

Ցուրտը օրէցօր թուլացաւ, արևը քանի գնաց աւելի տա-
քացաւ, ջրերը խոխոջացին, թռչունները երգեցին, դաշտերը
կանաչ հագան ու մարդիկ բաց արին դուռն ու պատուհան:
Գարուն էր:

1) Ի՞նչպէս են ձմեռայ ցրտից պատսպարում ծիծուն, ծանծը,
մեղուն, օձը, կրիան, գորտը, ձուկը:

2) Երեխաները ձմեռը ի՞նչպէս են զլարձանում:

39. Վեճ

Գետինը ասաւ. ես աշխարհքի թագաւորն եմ:
 Զիւնը ասաւ. Բայց ես կը գամ, բեզ կը ծածկեմ:
 Քամին ասաւ. Զիւն, ես որ գամ, ուր կը մտնես:
 Զիւնը ասաւ. Գաս, կը մտնեմ քարերի տակ:
 Անձրեն ասաւ. Բա ես որ գամ՝ ուր կը մտնես:
 Զիւնը ասաւ. Քեզ հե՛տ ով է, տօ թաց-ըռերս:

Առած.—Պարծեցողը պարկը կը մտնի:

Հանելուկ.—Պոչը ջրում, գլուխը կրակում:

40. Մի կաթիլ մեղրը

1.

Մի գիւղացի իրենց գիւղում
 խանութ սարքել, բան էր ծախում:
 Օրւան մի օր մօտիկ գիւղից,
 մահակն ուսին, շունն ետևից
 ներս է մտնում մի զրո չորան:
 —Բարի օր բեզ, այ խանութպան.
 մեղր չունե՞ս,
 մի քիչ տաս մեզ:
 —Ունեմ, ունեմ, չորան ախպէր.
 ամանդ ուր է. ամանդ բեր,
 ինչ տեղից որ ինքդ կուզես,
 էս սըհաթին քաշեմ տամ քեզ:

Էսպէս սիրով,

լաւ խօսքերով

մեղր են քաշում. մին էլ յանկարծ
 մի կաթ մեղրը ծորում է ցած:

2.

Տ՛ըզզ. էն կողմից մի ճանճ գալի,
 էս կաթիլին վէր է գալի:

Ճանճի վրա թաքուն-թաքուն,
 էս խանութի տիրոջ կատուն
 դուրս է ցատկում,
 թաթով զարկում...

Բայց հէնց կատուի ցատկելու հետ
 հովւի շունը իսկոյն և եթ
 հաֆ է անում,
 վեր է կենում,
 խեղճ փսիկին
 դնում տակին,
 ձեռաց խեղդում
 ու ջրպրտում:

3.



—Խեղդեց, խեղդեց, վայ, իմ կատուն.
 ա սատկես դու, շան որդի շուն.—
 բարկանում է խանութպանը
 ու ձեռն ընկած մօտիկ բանը
 տուր՝ թէ կը տաս շան ճակատին,
 շուռ է տալի կատուի կողքին:

Վայ, ձեզ մատաղ, ասլան շունըս,
 իմ ապրուստը՝ տեղը՛ս, տունը՛ս...
 տունդ բանդւի, այ խանութպան,
 անխիղճ, լիրբ, չար, ֆըլան, ֆըստան.



Թե՛ դու իմ շանը զարկես,
 դէ՛, զարկելը հիմի դու տես...
 Գոռում է մեր աժդահակը,
 մեծագլուխ իր մահակը
 ետ է տանում ու ցած բերում,
 խանութպանին շէմքում փռում:


4.

«Սպանեցին... հայ, օգնութիւն...»
 Ու թաղից թաղ, ու տանից տուն
 ձէն է տալի մէկը միւսին.
 «Հէյ, օգնութիւն... սպանեցին...»
 Վերի թաղից, ներքի թաղից,
 ճամփի վերից, գործի տեղից,
 ճիչով, լալով,
 հարայ տալով—
 էլ հէ՛րն ու մէ՛ր,
 քուր ու ախպէր,
 կին, երեխէք,
 ընկեր տղէք,
 զոքանչ, աներ,
 քաւոր, սանհէր,
 բեռի, փեսայ...
 Ի՛նչ իմանաս էլ՝ ո՞վ է սա—
 գալիս են ու անվերջ գալիս,
 ով գալիս է՝ տուր թէ տալիս.
 —Տօ, կոպիտ արջ, տօ, վայրենի,
 էս տեսակ էլ բան կը լինի՞.
 դու առուտուր եկար անես,
 թէ՛ իր շէմքում մարդ սպանես...
 Մին ասում են, տասը զարկում,
 աղցան անում, մէջտեղ ձըգում

իր շան կողքին երկար ու մէկ:
 —Դէ, ձեր մեռելն եկէք տարէք:

5.

Ու էստեղից բօթը գընում,
 գընում մօտիկ գիւղն է հասնում.
 —Հէյ, օգնեցէք,
 մեռած հօ չէ՞ք,
 սպանեցին մեր գիւղացուն...
 Ինչպէս շնաճանճի մի բուն
 քանդես, թողնես,
 էն ճանճի պէս
 ամբողջ գիւղով օրդու կապում,
 «բո՛հ» են անում, դուրս են թափւում՝
 ամեն միւր առած մի բան.



որը ձեռին մի հրացան,
 որը եղան, ցաքատ կամ սուր,
 որը թի, բահ, որը շամփուր,
 որը կացնով, որը փէտով,
 որը ձիով, որը ոտով,
 որն անգրդակ, որը բոբիկ,
 դէպի դիւշման գիւղը մօտիկ:
 —Տօ, էսպէս էլ անիրաւ գիւղ.
 ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկիւղ.
 մարդ գնում է առուտաւրի,
 հաւաքւում են քաշում սրի:
 Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,

ձեր նամուսին, ձեր աղաթին...
 գնանք, զարկենք,
 ջարդենք, կրակենք...
 —Հայ, հո՛ւյ, յառաջ, դէ՛, ձեզ տեսնեմ...


Ու դուրս եկան իրարու դէմ:
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
կոտորեցին, կրակեցին.
ինչքան աւել կոտորեցին,
էնքան աւել կատաղեցին:

Ջարդեցին իրար,
ջնջեցին իրար,
կորան, գընացին
գետնին հաւասար:

6.

Դու մի ասիլ, մէկը մէկից
էսքան մօտիկ, սահմանակից
էս գիւղերը հարկ են տալի
ամեն մինը մի տէրութեան:
Մի տէրութեան թագաւորը,
երբ լսում է էս բոլորը,
արձակում է հրովարտակ
ժողովրդին իր հպատակ:
«Յայտնի լինի մեր տէրութեան,
զինւոր, բանւոր, ազնւական,
ամեն շարքին
ու աշխարհքին,

որ անօրէն ու դաւաճան
մեր դրացի ազգը դաժան,
երբ մենք բնած էինք սիրով,
մեր սահմանը մտաւ զօրով
ու կոտորեց սուրը ձեռին
մեր սիրելի գաւազներին:
Արդ, մենք, ընդդէմ մեր իսկ կամքին,
պատէր տւինք մեր բանակին,
յանուն արդար ու սուրբ ոխի
մըտնի հողը մեր ոսոխի»:



Միւսը նոյնպէս իրեն հերթին
գրեց զօրքին, ժողովրդին:
Ու սկսեց կռուին անդ:
Թնդանօթներ էստեղ, էստեղ:
Կըրակն ընկաւ շէն ու քաղաք.
արիւն, աւեր, ճիշ, աղաղակ.
ամեն կողմից սարսափ ու բօթ,
ամեն կողմից մեռելի հոտ...

7.

Ամառ, ձմեռ,
ողջ տարիներ,
մշակն անբան,
դաշտերն անցան...

Ու կռիւը չը դադարած,
սովը եկաւ համատարած.
սովը եկաւ, սովի հետ ցաւ,
ծաղկած երկիրն ամայացաւ...

Իսկ մնացած մարդիկ իրար
հարցնում էին սարսափահար,
թէ հրտեղից արդեօք ծագեց
էս ընդհանուր աղէտը մեծ:



41. Ածխարարն ու պարոնը

Արմենակն ու Գէորգը դասընկերներ էին:

Արմենակը մի հարուստ պարոնի որդի էր, իսկ Գէորգը ածխարարի: Մի օր, վէճի ժամանակ, Արմենակը Գէորգին անւանեց «աղքատի ճուտ»: Գէորգը կարմրեց, աչքերը արտասուքով լցւեցին, ու ոչինչ չը պատասխանեց: Գնաց տուն, հօրը գանգատեց:



Ածխարարը միւս օրը վարժարան եկաւ որդու հետ ու ամբողջ դասարանի առջև պատմեց ուսուցչին: Այդ միջոցին վրա հասաւ Արմենակի հայրը, հարուստ պարոնը:

—Այս բանւորը գանգատում է ձեր որդուց,— դիմեց նրան ուսուցիչը:

—Պատճառը,— հարցրեց պարոնը:

—Պատճառն այն է, որ ձեր որդին սրա որդուն անւանել է «աղքատի ճուտ»:

Պարոնը յօնքերը կիտեց, կարմրեց ու որդուն հարցրեց.

—Ճշմարիտ է, ասե՛լ ես դու այդ խօսքը:

Արմենակը գլուխը կախ գցած՝ լուռ կանգնած էր: Հայրը բռնեց նրա ձեռքից ու հրեց դէպի Գէորգը:

—Ներողութիւն խնդրի:

Ածխարարը կամենում էր արգելել, բայց պարոնը մտիկ չարաւ ու կրկնեց.

—Ներողութիւն խնդրի ու կրկնի իմ ետեից. «Խնդրում եմ, ների ինձ հօրդ դէմ ասած յիմար խօսքիս համար: Իմ հայրը պատիւ է համարում նրա ձեռքը սեղմելը»:

Ածխարարը դարձեալ ուզում էր ընդդիմանայ, բայց պարոնը նրա վրա ուշք չը դարձրեց, և Արմենակը կամացուկ, կակաղելով կրկնեց հօր ետեից.

—Խնդրում եմ... ների ինձ... հօրդ դէմ... ասած... յիմար խօսքիս համար: Իմ հայրը... պատիւ է համարում... նրա ձեռքը սեղմելը:

Եւ պարոնը սեղմեց ածխարարի ձեռքը:

—Խնդրեմ այս երկուսին իրար կողքի նստեցնէք,— ասաւ պարոնը ուսուցչին:

Ուսուցիչը Արմենակին ու Գէորգին նստեցրեց մի նստարանի վրա:

1) Ինչո՞ւ համար էր Արմենակի ասած խօսքը վատ:

2) Ինչո՞ւ համար նրա հայրը պատիւ էր համարում ածխարարի ձեռքը սեղմելը:

Ա. ռ. ծ.— Դու աղա, ես աղա, մեր աղունը ո՞վ աղայ:



42. Գարնան կարօտ

Կարօտ ենք տեսքիդ, աննման գարուն.
 շուտ արի մեզ մօտ, բեր մեզ տաք օրեր,
 բեր պայծառ արև, բեր ծաղիկ սիրուն,
 ճրվրվող թռչուն, բեր կանաչ դաշտեր:
 Թող բացեն ծաղիկն վարդ, մեխակ, շուշան,
 բաց մեր դռները, բաց մեր պատուհան.
 փակած սենեակից ելնենք ազատենք,
 կանաչ դաշտ երթանք, խաղանք, գլորենք:

43. Խաղը

Երեխաները խաղում էին: Արամը յան-
 կարծ մի բան բշփչաց բուրիկի ալանջին
 ու երկուսն էլ ծածուկ ժպտացին:

—Հա, էտպէս անենք,—փսփսաց բու-
 րիկը ու բարձր կանչեց.—Եկէք պահմը-
 տոցիկ խաղանք:

—Խաղանք, խաղանք,—ուրախ-ուրախ
 մօտ վազեց փոքրիկ Անահիտը, թողնե-
 լով իր խաղալիքները:

—Առաջ ո՞վ թաք կենայ,—հարցրեց
 Արամը:

—Ես, ես,—կանչեց Անահիտը:

—Դու կարող ես որ...

—Էնպէս լաւ թաք կենամ: Իսկի չէք գտնի:

—Թաք կաց, ասաւ Արամը՝ բրոշը աչքով անելով:—Միայն
 տես, շուտով դուրս չը գաս, որ մենք քեզ շատ փնտրենք:

—Գնացէք, գնացէք, ես գիտեմ,—ասաւ Անահիտը:

Արամն ու քոյրը գնացին միւս սենեակը:

Անահիտը ոտի ծայրերին գնաց դէս, գնաց դէն, փորձեց
 մի յարմար տեղ գտնի, վերջը մտաւ նախասենեակում հօր

երկար վերարկուի տակը ու տապ արաւ:

—Սպասեց, երկար սպասեց, բայց Արամն ու քուրիկը չէին
 գալիս: Նրան այնպէս էր թւում, թէ բակից լսում էր նրանց
 ուրախ ձայները: Մէկ ուզում էր դուրս գայ, նայի թէ ուր
 մնացին, մէկ էլ յիշում էր որ դուրս գալ չի կարելի:

Կծկւել էր վերարկուի տակ, սպասում էր ու սպասում:
 Իսկ Արամն ու քուրիկը բակում ծիծաղելով պատմում էին
 դրացի Զաքէլին, թէ ինչ խաղ խաղացին իրենց Անահիտի գլխին:

Ինչո՞ւ էր Արամի ու քուրիկի խաղացած խաղը վատ:

Շուտ ասելուկ. — Զը թռչի, թող չը թռչի:

44. Կանանչ ախպեր


էյ կանանչ ախպեր,
 էյ ճանանչ ախպեր,
 արի, քեզ հետ բեր
 արևի շողեր:

բեր անուշահոտ
 ծիլ, ծաղիկ ու խոտ,
 կարկաչուն վրտակ,
 երկինք կապուտակ,
 խատուտիկ հաւքեր,
 զրնգան երգեր,
 գառների մայիւն,
 խաղ, ուրախութիւն.
 էյ կանանչ ախպեր,
 էյ ճանանչ ախպեր:

1) Ինչո՞ւ ենք ասում՝ զարնանք «կանանչ ախպեր»:

2) Զուտան ի՞նչ ախպեր կասէք:

Առաժ.—Մէկ ծաղկով գարուն չի գայ:



45. Առիւծի երազը

1.

Առիւծի կորիւնը փակւած էր վանդակում: Նա մռայլ նայում էր երկաթէ ամուր ձողերի ետեւից: Կարօտով յիշում էր իր հայրենի տաք անապատը, յիշում էր թէ ինչպէս գիշերները աստղերի լուսով, իր մօր հետ ընկնում էր արագավազ եղնիկների ետեւից, ինչպէս ազատ, ուրախ, իր բոյր ու եղբայրների հետ, մօր կողքին, խաղում էր արմաւենիների տակ:

Այժմ անցել է ամեն բան, և գազանանոցում փակւած, գերի, տխուր նայում էր նա հաստ ձողերի ետեւից:

Գիշեր էր: Շուրջը լուռ ու խաղաղ: Գազանանոցի գերիները—վագրը, արջը, գայլը, կապիկները, շայլամը, եղջերուները,—ամենքը իրենց վանդակներում, յարդի վրա ընկած՝ սպասում էին լուսանալուն:

Վերջապէս յոգնած առիւծի ձագն էլ գլուխը դրաւ թաթերի վրա ու բնեց:

2.

Գիշերւայ մի ժամանակ յանկարծ գազանանոցի դուռը ետ բացւեց ու ներս մտաւ նրա մայրը: Ներս մտաւ հպարտ ու հզօր, կրակոտ աչքերը ման ածաւ վանդակների վրա ու տեսաւ...

Նա տեսաւ իր զաւակին: Աչքերը փայլատակեցին, մրոնչաց, յարձակւեց, իր զօրեղ զարկով ջարդեց վանդակի ձողերը...

Կորիւնը ուրախութիւնից ճչաց, վրա թռաւ, որ ընկնի մօր գիրկը, դիպաւ երկաթի ձողերին ու զարթնեց...

Տեսաւ՝ երազի մէջ էր...

Գիշեր էր: Շուրջը լուռ ու խաղաղ: Գազանանոցի գերիները—վագրը, արջը, գայլը, կապիկները, շայլամը, եղջերուները,—ամենքը իրենց վանդակներում, յարդի վրա ընկած՝ սպասում էին լուսանալուն:

Կորիւնը երկար ու ձիգ մոնչում էր գիշերւայ լուռութեան մէջ:

Ինչո՞ւ էր մոնչում Կորիւնը:

46. Մարտը

Ա՛խ, Էսպէս էլ գիժ ամիս.
մարդու հանգիստ չի տալիս:
էսօր ուրախ օր կանի,
վաղը անձրև ու բամի.
առաւօտը պայծառ օդ,
կէսօրը մութ ու ամպոտ:
Մին հագնում է սպիտակ,
մին կանաչին է տալիս.
մի օր ցուրտ է, մի օր տաք,
մին խնդում է, մին լալիս...
Ա՛խ, Էսպէս էլ գիժ ամիս:

47. Թե ինչու են ծաղկում մանուշակները

Ձմեռը նոր էր անցել: Գարնան մի պայծառ առաւօտ,
երբ արեւը ծագում էր շքեղ, երբ թռչունները երգում էին ու-
րախ ու հովը խաղում էր թփերի հետ, այդ ժամանակ անտա-
ռում բացեցին թարմ անուշահոտ մանուշակները: Ճերմակ
ձնծաղիկները նրանց ողջունեցին թփի տակից, դեղին գինե-
րուկը ժպտաց միւս կողմից, շուրջը սկսեցին թրթռալ գոյն-
գոյն թիթեռները, թաւամազ ճանճերը ու ժիր մեղունները:

—Ի՞նչ հրաշալի մանուշակներ են,—կանչեց փոքրիկ աղ-
ջիկը:—Կը քաղեմ, փունջ կը կապեմ, կը դնեմ ծաղկամանիս
մէջ, իմ պատուհանում:

Ասաւ, ձեռքը մեկնեց որ քաղի, մին էլ յանկարծ վախեցած
ետ քաշեց:

Մի մեծ բրդոտ ճանճ թռաւ ծաղկի վրայից բռնացնելով:

—Յիմար աղջիկ, չը համարձակես իմ ծաղիկները քա-
ղելու: Նրանք ինձ համար են բացել, ինձ համար են անուշ
փոշի պատրաստել ու քաղցը հիւթ ամբարել իրենց մէջ:

Սկսեցին ժլժլալ և՛ մեղունները, և՛ թիթեռները, և՛ բը-
զէզները: Ամեն մէկն ասում էր.

Իմն են ծաղիկները:

Արեւը լսեց, ժպտաց ու ասաւ.

—Անմիտներ, ինչո՞ւ համար են վիճում: Երկրի վրա ամեն
ապրող բան ծնւած է իմ լուսից ու տաքութիւնից: Ձեն իմա-
նում որ այդ ծաղիկներն էլ իմն են:

Աղջիկը մնացել էր մէջ տեղը կանգնած: Ամենքին էլ լսում
էր ու չէր իմանում՝ ո՞րին հաւատայ:


Վերջապէս դարձաւ մանուշակներին.

Ասացէք, սիրուն մանուշակներ, ինչո՞ւ համար էք ծաղ-
կում դուք, ինչո՞ւ համար են բացւում ձեր հոտաւէտ պսակ-
ները և ո՞ւմ համար էք ապրում:

Ծաղիկները պատասխանեցին.

Մենք ապրում ենք ապրելու համար. և ծաղկում ենք,
սերմեր ենք թողնում, որ մեզնից յետոյ էլ մեզ նման մա-
նուշակներ ծաղկեն ու ապրեն:

Արեւը իրաւո՞ւնք ունի ասելու՝ թէ «երկրի վրա ամեն ապրող բան
ծնւած է իմ լուսից ու տաքութիւնից»:



48. Մանուշակ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով,
ես ծաղիկ եմ անուշ հոտով:
Թէև տունկա փոքրիկ է, ցած,
արօտներում միշտ թաք կացած,
բայց իմ փունջը ամենի տան,
թէ աղբատի, թէ մեծատան,
իբրև գարնան առաջին զարդ,
տեսնում է միշտ ամեն մի մարդ:
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
իմ անունըս է մանուշակ:

49. Մշտական ճարտար

1.

Գարնան շողը դիպաւ սարերի ձիւնին, և ձիւնը կամացուկ արտասուեց: Զինչ կաթիլը ընկաւ գետնին, գրկեց ուրիշ կաթիլների հետ, և գլորեցին ցած:

Գլորում են ու փսփսում:

— Ճամփա...

— Էս ո՞վ է փսփսում, — մտածեց ձնծաղիկը, վեր հանեց գլուխը, պայծառ արեւ տեսաւ և ուրախութիւնից անուշ բուրմունք արձակեց:

2.

Սահում է ջրի թելը, սահում են բազմաթիւ թելեր, հանդիպում են աղբիւրի կաթիլներին ու մրմնջում:

— Դձեք որտեղից էք գալիս, քուրիկներ:

— Այնպէս նեղ էր, այնպէս մոռեց էր մեր ճամփան, — պատասխանում են աղբիւրի կաթիլները. — գետնի տակ հազիւ հազ գտանք իրար ու դուրս վազեցինք ակնից: Ի՞նչ լոյս է այստեղ, ի՞նչ ազատ: Մեր ընկերները վաղուց անցել են առաջ. շտապում ենք նրանց ետևից...

— Մենք էլ ենք գալիս ձեզ հետ, — կանչեցին ձիւնի կաթիլները:

Ու կայտառ առակը կարկաչելով սուրաց ցած:

— Էս ի՞նչ աղմուկ է, մի՞թէ գարուն է արդէն, — զարթեցին բողբոջները ծառերի ճիւղերին ու սկսեցին մուշտակները հանել:

3.

Առակը գրկեց առակի հետ ու գիծ գետակը փրփրալով վիժեց ցած, քարից քար, տանելով իր հետ աւազ ու չորացած տերևներ:

Ըսկերների հետ վըշշում, բւրձր կանչում էր մեր կաթիլը:

— Ճամփա...

Ջաղացպանը դուրս վազեց, շտապով կապեց նաւի դուռը, որ գետակը ջաղացի անիւը չը ջախջախի: Ճամփորդը զգոյշ մօտեցաւ կամուրջին տեսնելու՝ շուրը հօ տարել չի:

4.

Գետակն ընկաւ արտերի մէջ, քար ու աւազ կուտակեց այստեղ ու այնտեղ, շուտով էլ միացաւ իր նման գծերի հետ:

Գետը ուռաւ, վարարեց. կատաղած գլորում էր ահագին քարեր, արմատահան անում դարևոր ծառերը, ափերը ծածում, տներ քանդում, այգիներ սրբում: Իր ընկերների հետ դղրդում է և մեր կաթիլը:

— Ճամփա...

Գիւղացիք ու քաղաքացիք յուսահատ իրար են անցնում... Իսկ գետը շտապում է դէպի ցած:

5.

Քամու հետ ճօճւում են ահագին ալիքները ծովի երեսին, շաշում, փրփրում: Մեր կաթիլը հեծել է մի ահագին կոհակի կատարին, ու ի՞նչպէս ուստոստում է ու խաղում կայտառ:

Յանկարծ զգում է, որ պոկւում է ալիքի վրայից. արեւ այնպէս մեղմ շոյում էր նրան ու իրեն կանչում:

Թեթեւ-թեթեւ բարձրանում է վեր, թռչում է դէպի կապուտակ երկինքը, դէպի պայծառ արեւը: Թռչում է նա, մօտենում իր քոյրերին և կրկնում նրանց հետ ամպի մէջ:

Ճամփա...

6.

Բարձրում ամպը միացաւ ուրիշ ամպերին ու կախ ընկան երկնքից: Սև-սև թուխպերը կռիւ գցեցին, գողգողում էին, կայծակներ շարտում իրար վրա: Մեր կաթիլն էլ դէս ու դէն է ընկնում, ոլորում է, պտտում, հրում ու անդադար որոտում:

— Ճամփա...

— Ճամփա, կրկնում են բոլորը և յանկարծ մեծ թափով սլանում, թափւում են ցած դէպի երկիրը:

7.

Անձրևը տեղաց պապակած գետնին: Մեր կաթիլը ընկաւ արտի մէջ, մի հասկի ոտի տակ: Հասկը թրթռաց ու կանչեց:

— Բարով ես եկել, մշտական ճամփորդ: Ի՞նչպէս կարօտել էի բեզ:

Առաջ. — Զուրն իր ճամփէն կը գտնի:

50. Արագիլ


Արագիլ, բարով եկար,
հայ, արագիլ, բարով եկար.
դու մեզ գարնան նշան բերիր,
մեր սրտերը ուրախ արիր:
Արագիլ, երբ գնացիր,
դու մեզանից երբ գնացիր,
հա փչեցին բուք ու բորան,
ծաղիկները ամեն տարան:
Արագիլ, բարով եկար,
հայ, արագիլ, բարով եկար,
բունըդ շինի դու մեր ծառին,
մեզ մօտ մնա ամբողջ տարին:

51. Արագիլներ

1.

Մի փոքրիկ գիւղի
ծայրին, մի բարձր ծա-
ռի վրա, արագիլները
դրել էին իրենց բունը:
Մայրը նստել էր չորս
ճուռիկների վրա, իսկ
մի քիչ հեռու, տանիքի
վրա պահապան էր
կանգնել հայր արագիլը:
Նա մի ոտը վեր բաշած,
տնկւել էր այնպէս ան-
շարժ, կարծես փայտից լինէր շինած:

Ներքևը փողոցում խաղում էին մի խումբ երեխաներ:
Հէնց որ աչքներին ընկաւ արագիլը, մինը սկսեց արագիլի
հին երգը, ու ամբողջ խումբն էլ նրա հետ:



Հէյ, արագիլ, տո՛ւն գնա,
ցից մի ոտիդ մի մնա,
կինըդ նստած բնի մէջ՝
օրօրում է քնի մէջ:
էս մի ճուռիդ կախ կանեն,
էն մէկէլին դադ կանեն,
էս մի ճուռիդ կը մորթեն,
էն մէկէլին կը բերթեն:

Մայրիկ, լսում ես, էտ տղերքը ի՞նչ են երգում,—ճշա-
ցին փոքրիկ ճուռիկները:—Ասում են՝ մեզ պէտք է կախ անեն:

—Ականջ մի դնէք, ոչինչ էլ չի լինի:
Բայց երեխաները շարունակում էին
երգել ու ջգրացնել արագիլին:

Իսկ մայր արագիլը սիրտ էր տալիս
փոքրիկներին.

—Մի վախենաք. տեսէք, հայրիկը
ինչպէս հանգիստ կանգնել է, էն էլ մի
ոտի վրա:

—Ախ, մենք շատ ենք վախում,—
ասին ճուռիկները ու գլուխները քաշե-
ցին ետ բնի խորքը:

2.

Միւս օրը, երբ տղերքը նորից հաւաք-
ւել էին խաղալու, էլի սկսեցին իրենց
երգը.

էս մի ճուռիդ կախ կանեն,
էն մէկէլին դադ կանեն...

—Ուրեմն իրա՛ւ մեզ պէտք է կախ անեն,—հարցրին ճու-
ռիկները:

—Չէ, ի՞նչ էք խօսում,—ասաւ մայրը:—Դուք պէտք է

Թռչել սովորէք. ես ձեզ կը սովորեցնեմ: Յետոյ միասին կը թռչենք դաշտ, գորտերին հիւր կը գնանք: Մեզ տեսնեն թէ չէ, խորը գլուխ կը տան ու կը սկսեն երգել. «Եկա՞ք, եկա՞ք. եկէ՛ք, եկէ՛ք, եկէ՛ք»: Մենք էլ կը սկսենք ուտել. էնպէս քէֆ կանենք իր...
— Իսկ յետոյ, — հարցրին ճուտիկները.

— Յետոյ կը հաւաքուենք էս կողմերի բոլոր արագիւններս ու կը սկսենք մեր աշնան վարժութիւնները: Չէ՞ որ պէտք է լաւ թռչել իմանաք. էտ շատ հարկաւոր բան է: Ով լաւ թռչել չիմանայ, մեր խմբապետը նրան կը սատկացնի կտուցով:

— Էհ, ի՞նչ անենք. մի բան որ մեզ պէտք է մորթեն: Այ տես, տղերքը ինչ են ասում:

— Դուք ինձ ականջ արէք, — պատասխանեց արագիւրը: — Աշնան մեծ վարժութիւններից յետոյ կը թռչենք սարերի, անտառների վրայով, հեռով, հեռով, դէպի տաք երկիրները: Էնտեղ մեծ գետեր կան, ահագին ճահիճներ կան, մէջը լիքը գորտ. մտիր ցեխը ու կեր, ինչքան կուզես:

— Ա՛յ, — բացականչեցին ճուտիկները:

— Հապա, տեսնում էք: Եւ երբ էնտեղ էսպէս հրաշալի է լինում, էստեղ էնպէս ցուրտ է անում, որ ամպերը սառչում ու կտոր-կտոր, սպիտակ-սպիտակ թափւում են ցած:

Արագիւրը իբրեւ թէ ուզում էր ասել՝ «ձիւն է գալիս»:

Էն չար տղերքն էլ պէտք է սառչեն ու կտոր-կտոր լինեն, — հարցրին ճուտիկները:

— Չէ, բայց դրա նման մի բան: Պէտք է փախչեն, մտնեն իրենց մութ սենեակները ու մկների պէս թաք կենան:

3.

Անցաւ մի քանի ժամանակ: Փոքրիկ արագիւնները արդէն այնքան էին մեծացել, որ կարողանում էին կանգնել բնի մէջ և դիտել իրենց չորս կողմը: Հայր արագիւրը ամեն օր նրանց համար բերում էր գորտեր, փոքրիկ օձեր ու այդ տեսակ հա-

մեզ պատառներ, ինչ որ ընկնում էր կտուցը: Եւ զանազան պատմութիւններ էր անում միշտ ճահճի մասին:

— Դէհ, ժամանակ է վերջապէս, պէտք է թռչել սովորէք թէ չէ, — ասաւ մի օր մայր արագիւրը:

Ու չորս ճուտերն էլ դուրս պիտի ելնէին բնից: Առաջ էին գալիս, թեքը բաց անում, բայց վախում էին ցած թափւեն:

— Տեսէք, ես ինչպէս եմ անում, սովորեցնում էր մայրը: — Գլուխներդ էսպէս առաջ ձգեցէք, ոտներդ էլ էսպէս ետև: Մէկ-երկու, մէկ-երկու... Էս է որ կեանքի մէջ պէտք է ձեզ պահի: Յետոյ ինքը թռաւ մի կտոր տեղ: Փոքրիկներն էլ ետևից, թրը՛մփ, ընկան կողքի կտուրը:

— Ես չեմ ուզում թռչեմ, — ասաւ փոքրիկներից մինը ու նորից մտաւ բունը: Իսկի էլ պէտք չեն տաք երկիրները:

— Ուզում ես ցրտից փետանաս, երբ ձմեռը հասնի: Թէ՞ ուզում ես տղերքը քեզ կախ անեն, խորովեն ու շամփրեն: Լաւ, ուզում ես կանչեմ, — բարկացաւ մայրը:

— Չէ, չէ, մի կանչի, ճչաց փոքրիկը ու նորից թռաւ կտուրը միւսների մօտ:

4.

Երեք օրից յետոյ ճուտերը մի քիչ կարողանում էին թռչել ու կարծում էին արդէն, թէ էն է կարող են օդի մէջ բարձր սալառնեն և թեքը փռեն ու հանգստանան:

Փորձում էին, բայց իսկոյն գլուխկոնծի ցած էին ընկնում ու ստիպւում էին նորից արագ թեքը շարժելու:

Յածը, փողոցով անց էին կենում երեխաներն ու երգում իրենց երգը.

Հէյ, արագիւր, տո՛ւն գնա,

ցից մի ոտիդ մի մնա:


— Մայրիկ, հիմա ցած չը թռչե՞նք ու դրանց աչքերը չը հանե՞նք, — հարցնում էին ճուտերը:

— Դուք ձեր բանին կացէք, — պատասխանում էր մայր

արագիլը:—Մեր արածը շատ աւելի կարևոր է: Մէկ, երկու, երեք: Թռչենք աջ, զանգակատան շուրջը, հիմա էլ ձախ, մէկ, երկու, երեք: Այ, էտ մինը քէֆս եկաւ: Էսպէս որ գնայ, վաղը ձեզ կը տանեմ ճահիճ: Էնտեղ ուրիշ շատ արագիլներ կան. էնպէս արէք, որ ամենքն էլ ձեզ հաւանեն. ասեն՝ էս ի՞նչ լաւն են էս երեխէքը, էս ումն են:

—Իսկ էտ անպիտան տղաներից մեր վրէժը հանելու չե՞նք,—նորից հարցրին փոքրիկ արագիլները:

—Թող արէք գոռան, ինչքան կուզեն: Չէ՞ որ դուք պէտք է թռչէք դէպի ամպերը, գնաք տաք երկիրներ, իսկ նրանք էստեղ պէտք է մըսեն: Ոչ կանաչ տերև են ունենալու, ոչ էլ գորտ:



52. Ծիծեռնակ

Մարտն անցաւ, հասաւ ապրիլ գեղեցիկ, հեռու աշխարհից եկաւ ծիծեռնիկ, բարով դու եկար, գարնան կարապետ, բուն շինողներից ամենից վարպետ:

Պատուհանիս մօտ շինի քո բունը, անուշ ճըռողով երգի գարունը, ձու ածա՛, հանի գեղեցիկ ձագեր ու մնա՛ մեզ մօտ մինչև սեպտեմբեր:

53. Մժղուկը

1.

Ոչ որ չը տեսաւ թէ ինչպէս ծնւեց փոքրիկ մժղուկը: Գարնան մի արև օր էր: Աչքը բաց արաւ, նայեց չորս կողմը ու կանչեց.

—Ի՞նչ լաւ է:

Մին էլ ոտիկներն իրար բսեց ու թռաւ: Թռչում է և ուրախանում ամեն բանով: Իսկ ներքևում խոտը կանաչին է տալի, և խոտի մէջ թաքնւած մի կակաշ ժպտում է ու ժպտում:

—Ինձ մօտ արի, փոքրիկ մժղուկ,—կանչում է ծաղիկը:

Մժղուկը իջաւ ծաղկի վրա, ծծեց նրա հիւթն ու ասաւ.

—Ի՞նչ լաւ է, և էս բոլորն իմն է:

Բայց դեռ խօսքը բերնումն էր, որ բըռնացնելով եկաւ բրդոտ բոռը:

—Բը՛ռռ... էտ հիվ է նստել իմ ծաղկի վրա, բը՛ռռ... հիվ է խմում իմ քաղցր հիւթը, բը՛ռռ... Դէնը կորի, անպիտան մժղուկ:

—Սպասի, էս ինչ բան է,—տըզտըզաց մժղուկը.—չէ՞ որ էս բոլորն իմն է:

—Բը՛ռռ... չէ, իմն է:

2.

Մժղուկը ոտները զօրով ազատեց կատաղի բոռից: Նստեց խոտի վրա, լիզում էր ծաղկի հիւթով թաթախւած ոտիկները ու բարկացած խօսում.

—Ի՞նչ կոպիտ է էտ բոռը, զարմանալի բան է: Ախր չէ՞ որ բոլորն իմն է, արեւն էլ, խոտն էլ, ծաղիկն էլ:

—Ո՛հ, ներեցէք, իմն է,—խօսեց բրդոտ ճիճուն, որ բարձրանում էր խոտի ցօղունի վրա:

Մժղուկը գլխի ընկաւ, որ ճիճուն թռչել չը գիտի, համարձակ ձայնը բարձրացրեց.

—Ներողութիւն, բարեկամ, սխալուում ես. բոլորն իմն է. բայց ես հօ չեմ արգելում քեզ:

—Լաւ, լաւ, մտիկ արա, որ իմ խոտին չը դիպչես. ձեզանից էստեղ էնքան թռչում են որ... Դուք թեթևամիտ ժողովուրդ էք, իսկ ես ծանր ճիճու: Դէ, հայդէ, գնաս բարով:

3.

Մժղուկը թողեց ու թռաւ հեռու. տեսաւ ջուր:

—էս հօ իմն է ու իմը, իմ ջուրը: Ա՛խ, ի՞նչ լաւն է. էստեղ խոտ էլ կայ, ծաղիկ էլ կայ:

Եւ ահա թռչում գալիս են ուրիշ մժղուկներ էլ:


—Բարի օր, քուրիկ:

—Աստծու բարին ձեզ, քուրիկներ: Էտ ո՞ւր էք թռչում:

—Խաղ ենք անում, դու էլ արի մեզ հետ: Էնպէս ուրախանում ենք:

Ու գնացին, խաղում էին ջրի վրա, պտտւում ու թռչկոտում:

Յանկարծ, պրժժ, ոնց որ մինը մի բար գցի, ճնճղուկն ընկաւ մժեղների մէջ:



—Վայ, վայ,—ժըլժըլացին բոլորն ու ցրեցին դէս ու դէն:

Մին էլ՝ երբ ուշքի եկան, տեսան՝ շատերն էին պակասել:

—Ա՛խ, անզգամ,—հայհոյում էին ծեր մժեղները.—ամբողջ տասը հոգի փչացրեց:

«Վահ, ամբողջ տասը հոգի. էս հօ բոռից էլ անց կացաւ»:

4.

Մեր մժղուկի սիրտն ահ ընկաւ ու միւս նորեւուկների հետ միասին մտաւ ճահճի խոտերի արանքը, տապ արաւ:

Բայց էստեղ էլ մի ուրիշ փորձանք: Երեք մժղուկի ձուկը կերաւ, երկուսին էլ գորտը տարաւ:

—էսպէս էլ բան կը լինի...—զարմացած մնացել էր մեր մժղուկը:—Մի՞թէ կարելի է ապրել էսպէս:

Գիշերն ընկաւ, մութը վրա հասաւ, ու բոլոր մժղուկները մտան եղէգնուտի տաք տեղերը, թաք կացան:

Վերև երկինքը լցեց աստղերով, լուսինն էլ ծագեց, ու բոլորը միասին ցոլացին ջրի մէջ:

Էնպէս սիրուն էր:

—Ախ, իմ լուսնեակը, իմ աստղերը... շընչում էր մըժղուկը, բայց ահից էնպէս կամաց էր շընչում, որ ոչ ոք չը լսի:

—Ա՛խ, իմ աստղերը...—շընչաց կամաց ու քնեց:



1) Մժղուկը վերջում՝ ինչո՞ւ կամաց էր ասում՝ էս բոլորն իմն է:

2) Բացի մժղուկից, էլ ո՞վ է կարծում, որ էս բոլորն իրն է:

3) Ո՞ւմն է այս բոլորը:



54. Արօր

Ահա ծագեց կարմիր արև,
տաք ու պայծառ է օրը,
դէհ, քաշեցէք, սիրուն եգներ,
առաջ տարէք արօրը:

Վարը վարենք, ահօս փորենք,
խոր ահօսներ հողի մէջ,
սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
խուրձեր դիզենք կալի մէջ:

Կը գայ ձրմեռ, մենք վախ չունենք,
ուրախ կանցնի մեր օրը,
ուտելու միշտ պաշար ունենք,
երբ լիք լինի մեր հորը:

Դէհ, քաշեցէք, սիրուն եգներ,
տաք ու պայծառ է օրը,
ահա ծագեց կարմիր արև,
առաջ տարէք արօրը:


1) Արօրը գուժանից ինչո՞վ է զանազանում:

2) Ե՞րբ են վարում հողը. ե՞րբ են ցանում:

Ա. ո. ա. ծ. — Ինչ որ ցանես, էն կը հնձես:

Հ. ա. ն. ե. լ. ո. լ. — Սև հինեմ, կանաչ գործեմ, դեղին կարեմ:

55. Զիռ տրտունջը



Գիւղացին գարի էր ցանում:

— Էս ի՞նչ ես անում, ինչո՞ւ ես էտ
գարին հողին խառնում, — տրտնջում էր
ձին. — Ի՞նչ կը լինէր ինձ տայի՞ր՝ ուտէի,
քան թէ էտպէս փչացնում ես:

Տէրը ոչինչ չէր պատասխանում
ու իր ցանն էր անում:

— Թէ ինձ չես ուզում տաս, իշին
տուր: Ուտի, ոյժ առնի, որ բարձես,
ջաղացը տանես:

— Թէ իշին էլ չես ուզում տաս, գոնէ հաւերին տուր:
Կուտեն, քեզ համար ձու կածեն:

Տէրը շարունակում էր գարին շարտել աջ ու ձախ:

— Ինչո՞ւ չես պատասխան տալիս, — հարցրեց նեղացած
ձին:

— Քո պատասխանը ամառը կը տամ, — ասաւ գիւղացին:

1) Ամառը ի՞նչ պատասխան պիտի տար գիւղացին:

2) Էլ ի՞նչ կենդանիներ են գարի ուտում:

Հ. ա. ն. ե. լ. ո. լ. — Մի կով ունեմ, տարէնը մի անգամ կաթ կը
տայ ու իսկի տուն չի գայ:

56. Աքլորն ու մարգարիտը

Օրւան մէկը մի աքլոր
քջուջ-մջուջ անելիս՝
տեսաւ մի հատ մարգարիտ՝
աղբի միջին փայլելիս:

Կտցեց, ասաւ. «էս ի՞նչ է.
ինձ հարցընես՝ ոչինչ է:
Ա՛յ, վայր տամ էն մարդին,
որ գին կը տայ էս զատին.
Իսկ ինձ համար մի գարին
արժէր էսպէս հազարին»:

57. Հատիկի զարթնելը



Յորենի հատիկը պառկած էր հողի տակ:
Եւ հատիկի մէջ քնած էր փոքրիկ սաղմը:
Քնած էր ամբողջ ձմեռը:
Գարնան արևի շողը եկաւ կանչեց նրան.
— Զարթիր, գարուն է:

Եւ հատիկի մէջ զարթնեց սաղմը: Զարթնեց, սաստիկ քաղց զգաց, սկսեց ծծել իր մօտի պաշարը: Ծծեց, ծծեց ու մեծացաւ. պատռեց պարուրները ու արմատիկները խրեց ցած, փափուկ հողի մէջ, նոր կերակուր որոնելու:

Իսկ արևի ջերմութիւնը շարունակ քաշում էր նրան վերևից ու սաղմը ձգւում էր դէպի այն կողմը, դէպի վեր:

Զգւեց, ձգւեց ու յանկարծ նրա դալար ծիլը դուրս նայեց հողի մի կողմի տակից:

Ինչ տա՛ք էր, ինչ պայծա՛ռ ու ինչ ազա՛տ նրա շուրջը:

Առաւօտեան հովիկը քնքուշ գգւեց նրան, դրաւ ցօղի մի կաթիլ նրա կիսաբաց թերթիկին ու փսփսաց.

— Բարի լոյս:

1) Սրանից յետոյ ծիլը ի՞նչպէս է մեծանալու եւ ի՞նչ է դառնալու:

2) Բացի ցորենից ուրիշ ի՞նչ հացաբոյս գիտէք:

3) Հացաբոյսերն ու խոտերը ի՞նչքան ժամանակ են ապրում:

Հ ա ն ե լ ու կ. — Բռնեմ ափովս, շող տամ թաթովս, մեռնի տա-
րով, ապրի բարով:

58. Գիւղացին ու արջը

1.

Գիւղացին իր բոստանում
գարնանը սերմ էր ցանում.
արջը եկաւ՝ «Բարեքեզ,
ի՞նչ ես անում քեզ ու քեզ.
արի, այ մարդ, միանանք,
մէկտեղ անենք վար ու ցանք.
վար ու ցանքը մեր կիսրար,
հունձն էլ անենք հաւասար»:
— Աչքիս վրա, արջ ապէր,
օտար խօմ չե՛նք. կուգես բեր
հէնց առաջին անգամը
ցանենք մօտիս շաղկամը:
ինձ արմատը հողումը,
քեզ փրերն ու ցօղունը:

2.



Քաղցր ու խոշոր շաղկամը
հողում տոգեց աշնանը:
Մեր ապէրն ու գիւղացին
շաղկամն հողից հանեցին:
Ապէրն առաւ փրերը,
ընկերը արմատները:

Արջը տեսաւ որ խաբւեց,
մարդու դէմը քիչ լարւեց.
«Վա՛յ, ինձ խաբե՞ գիւղացին.
կաց, էն միւս ցանոցին,
ինչ որ ցանենք հողումը,
նրան կը տամ ցօղունը»:



3.

Միւս տարի ցանոցին
արջին ասաւ գիւղացին.
—Ախպէր, արի մենք էլի
մի բան ցանենք կիսովի:
Արջը թէ՛ «Հա, շատ բարի,
միայն անշուշտ էս տարի
ինձ արմատը հողումը,
բեղ փրերն ու ցօղունը»:

—Համաձայն եմ ես նորէն.
էս հետ ցանենք մենք ցորեն:

Մարդը գիտէր իր բանը.
ապօրը հետ՝ իր տանը
ցորենն ածեց տոպրակը,
տւեց նրա շալակը.
տարան ցանեցին արտը
բրդոտ ապէրն ու մարդը:

4.

Հնկերները յունիսին
արտն հնձեցին միասին:
Հասկերն ընկաւ գիւղացուն,
արմատները սարեցուն:
Արջը էլ չը համբերեց,
էստեղ մի լաւ փրփրեց.



սաստիկ, սաստիկ նեղացաւ,
թքեց, մարդից հեռացաւ:
Ու էն օրից մինչ հիմի
շատ է մարդին թշնամի:



59. Շունն ու նապաստակը

Նապաստակը վագում էր, շունն էլ ետեից, և այնպէս
արագ էր վագում, որ շունը չէր կարողանում հասնի:


—Է՛յ, բարեկամ, այդ փոքրիկը բեզնից լաւ է վագում,—
ասաւ շան տէրը:

—Ի հարկէ,—պատասխանեց շունը,—ես վագում եմ իմ
փորի համար, նա վագում է իր կեանքի համար:

60. Կորեկի հատիկ

Քնել էր ծիտը իր փոքրիկ բնում
ու իր քնի մէջ երազ էր տեսնում,
իբրեւ թէ լուսին գիշեր է պայծառ,
ու անթիւ աստղեր վառ իրար մօտիկ,
բոլորն էլ մի-մի կորեկի հատիկ,
և իբրեւ ինքն էլ թռչում անընդհատ,
կտցում է՝ տիբ-տիբ,
երկնի երեսից աստղերը հատ-հատ:
Բայց երբ արեւ նայեց ճիւղերից,
զարթնեց ծիտիկը իր խորունկ քնից,
կտուցը մի քիչ բսեց դէս ու դէն
ու շատ զարմացած ասաւ իր մտքում.
«Ամբողջ գիշերը չէ՞ որ երկընթում
ես ուտում էի կորեկի հատիկ
ու կտցում՝ տիբ-տիբ.
էլ ինչո՞ւ եմ ես այսպէս քաղց զգում»:

Ա.ռ.ա.ծ.—Հաւը երագում կուտ կը տեսնի:



61. Չախչախ թագաւորը

1.

Լինում է, չի լինում մի աղբատ շաղաքական:

Մի պատուած քուրք հագին, մի ալրոտ փոստալ գլխին ապրելիս է լինում գետի ափին, իր կիսաւեր շաղաքում: Ունենում է մի մոխրոտ բաղարճ ու մի կտոր պանիր:

Մի օր գնում է, որ շաղաքի շուրը թողնի, գալիս է տեսնում՝ պանիրը չը կայ:

Մին էլ գնում է շուրը կապի, գալիս է տեսնում բաղարճը չը կայ:

Էս ով կը լինի, ով չի լինի: Մտածում է մտածում ու շաղաքի շէմքում թակարդ լարում: Առաւօտը վեր է կենում, տեսնում՝ մի աղւէս է ընկել մէջը:

—Հը՛, գող անիծւած, դու ես կերել իմ պանիրն ու բաղարճը հա՛. կաց՝ հիմի ես քեզ պանիր ցոյց տամ:—Ասում է

ու լինգը վերցնում է, որ աղւէսին սպանի:

Աղւէսը աղաչանք պաղատանք է անում. «Ինձ մի սպանի,—ասում է,—մի կտոր պանիրն ինչ է, որ դրա համար ինձ սպանում ես: Կենդանի բաց թող, ես քեզ շատ լաւութիւն կանեմ»:

Ջաղացպանն էլ լսում է, կենդանի բաց է թողնում:

2.


Էս աղւէսը գնում է էտ երկրի թագաւորի աղբանոցում ման է գալի ման, մի ոսկի է գտնում: Վազ է տալի թագաւորի մօտ.

—Թագաւորն ապրած կենայ, ձեր կոտը մի տւէք, Չախչախ թագաւորը մի քիչ ոսկի ունի, չափենք, ետ կը բերենք:

—Չախչախ թագաւորն ով է:

—Դու դեռ չե՛ս ճանաչում,—պատասխանում է աղւէսը: Չախչախը մի շատ հարուստ թագաւոր է, ես էլ իր վեզին եմ: Կոտը տուր, տանենք ոսկին չափենք, յետոյ կը ճանաչես:

Կոտը առնում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամբողջում կոտի ճեղքում, իրիկունը բերում, ետ տալի:



—Օ՜ֆ, ասում է, զօրով չափեցինք:

—Մի՞թէ ճշմարիտ սրանք կոտով ոսկի են չափել,—մտածում է թագաւորը: Կոտը թափ է տալի, զրնգալէն մի ոսկի է վէր

ընկնում:

Միւս օրը աղւէսը ետ է գալիս՝ թէ Չախչախ թագաւորը քիչ ակն ու մարգարիտ ունի, ձեր կոտը տւէք, չափենք, կը բերենք:

Կոտն առնում է տանում: Մի մարգարիտ է գտնում, կոխում է կոտի արանքը, իրիկունը ետ բերում:

—Օ՜ֆ, ասում է, մեռանք մինչև չափեցինք:

Թագաւորը կոտոր թափ է տալի, մարգարիտը դուրս է թըռ-
շում:

Մնում է զարմացած, թէ էս Չախչախ թագաւորն ինչ-
քան հարուստ պէտք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը
կոտով է չափում:

3.

Անց է կենում մի քանի օր: Մի օր էլ աղէսը գալիս է
թագաւորի մօտ խնամախօս, թէ՛ Չախչախ թագաւորը պէտք
ամուսնանայ, քո աղջիկն ուզում է:

Թագաւորն ուրախանում, աշխարհքով մին է լինում:

— Դէ, գնացէք, ասում է, շուտ արէք, հարսանիքի պատ-
րաստութիւն տեսէք:

Թագաւորի պալատում իրար են անցնում, հարսանիքի
պատրաստութիւն են տեսնում, իսկ աղէսը ջաղացն է վա-
զում:

Վազում է, ջաղացպանին աչքալուս տալի թէ՛ հապա
թագաւորի աղջիկը քեզ համար ուզել եմ: Պատրաստ կաց, որ
գնանք հարսանիք անենք:

— Վայ, քո տունը քանդուի, այ աղէս, էտ ի՞նչ ես խել:
— Ես ո՞վ, թագաւորի աղջիկը ո՞վ: Ոչ ապրուստ ունեմ, ոչ տուն
ու տեղ, ոչ մի ձեռք շոր... Հիմի ես ի՞նչ անեմ...

— Դու մի վախենայ, ես ամեն բան կանեմ, — հանգստաց-
նում է աղէսն ու ետ վազում թագաւորի մօտ:

Վազելով ընկնում է պալատը. «Հայ, հարայ, Չախչախ
թագաւորը մեծ հանդէսով գալիս էր, որ պսակւի: Ճամփին
թշնամի զօրքերը յանկարծ վրա տւին, մարդկանց կոտորեցին,
ամեն բան տարան: Ինքը ազատւեց փախաւ: Ձորում մի ջա-
ղաց կայ, եկել է մէջը մտել: Ինձ ուղարկեց, որ գամ իմաց
անեմ, շոր տանեմ, ձի տանեմ, գայ պսակւի, շուտով գնայ,
որ թշնամիներէից վրէժն առնի»:

Թագաւորն իսկոյն ամեն բան պատրաստում է, տալիս

աղէսին, հետն էլ շատ ձիաւորներ է դնում, որ պատուով ու
փառքով իր փեսին քաղաք բերեն:

4.

Գալիս են հանդէսով ջաղացի դռանը կանգնում: Ջաղաց-
պանի բուրբը հանում, թագաւորի շորերը հագցնում, նստեց-
նում են նոյն ձիուն: Շրջապատւած մեծամեծներով, առ-
ջևից ձիաւորներ, ետևից ձիաւորներ — էսպէս հանդէսով բե-
րում են թագաւորի պալատը: Իր օրումը պալատ չը տեսած
ջաղացպան — շրջկլւած, բերանը բաց, մին շորս կողմը, մին
հագի շորերին է նայում, խլրջկոտում ու զարմանում:

— Էս ինչո՞ւ չըտեսի նման դէս ու դէն է նայում, աղէս
ախպէր, — հարցնում է թագաւորը: — Կարծես տուն չը լինի
տեսած, շոր չը լինի հագած:

— Ձէ, դրանից չի, պատասխանում է աղէսը: — Նայում
է ու համեմատում իր ունեցածի հետ, թէ իր ունեցածը որ-
տեղ, էս որտեղ...

Նստում են ճաշի: Տեսակ տեսակ կերակուրներ են բե-
րում: Ջաղացպանը չի իմանում՝ որին ձեռք տայ կամ ինչ-
պէս ուտի:

— Ինչո՞ւ չի ուտում, աղէս ախպէր, — հարցնում է թագա-
ւորը:

— Գալու ժամանակ ճամփին որ կողոպտեցին, նրա համար
միտք է անում: Ձէք կարող երևակայել, տէր թագաւոր, թէ
ինչքան բան տարան և վերջապէս ինչ անպատուութիւն էր էտ
մեր թագաւորի համար: Ի՞նչպէս հաց ուտի, — պատասխա-
նում է աղէսը հառաչելով:

Բան չը կայ, դարդ մի անի, սիրելի փեսայ, աշխարհք է,
էտպէս էլ կը պատահի, — խնդրում է թագաւորը: — Այժմ հար-
սանիք է, ուրախանանք, բէֆ անենք:

Ու բէֆ են անում, ուտում, խմում, ածում, պար գալի.
Եօթն օր, եօթը գիշեր հարսանիք անում: Աղէսն էլ դառնում
է բաւոր:

Հարսանիքից յետոյ թագաւորը իր աղջկան մեծ բաժինը է տալիս ու հանդէսով ճամփայ դնում Չախչախ թագաւորի հետ:


— Կացէք, ես առաջ գնամ, տունը պատրաստեմ, դուք իմ ետեից եկէք, — ասում է բաւոր աղէսը ու վազ տալի:

— Վազ է տալի վազ. տեսնում է՝ մի դաշտում մեծ նախիր է արածում:

— Էս ում նախիրն է:

Ասում են, — Շահ-Մարինը:

— Պա՛, Շահ-Մարի անունը էլ չը տաք, որ թագաւորը նրա վրա բարկացել է, զօրքով իմ ետեից գալիս է. ովնրա անունը



տւաւ՝ գլուխը կտրել կը տայ: Որ հարցնի թէ ումն է, ասէք՝ Չախչախ թագաւորինը, թէ չէ՝ վայն եկել է ձեզ տարել:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ ոչխարի հօտը սարերը բռնել է:

— Էս ումն է:

— Շահ-Մարինը:

Հովիւներին էլ նոյնն է ասում:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ ընդարձակ արտեր, հրնձ-ւորները միջին հնձում են:

— Էս ում արտերն են:

— Շահ-Մարինը:

Հնձւորներին էլ նոյնն է պատւիրում:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ անվերջ խոտհարքներ:

— Էս ումն են:

— Շահ-Մարինը:

Խոտ հարողներին էլ նոյնն է ասում:

Հասնում է Շահ-Մարի պալատին:

— Շահ-Մար, ա՛ Շահ-Մար, — գոռում է հեռւից վազելով. —

բո տունը չը քանդւի, միամիտ նստել ես: Թագաւորը քեզ վրա բարկացել է, մեծ զօրքով գալիս է, որ քեզ սպանի, տուն ու տեղդ քանդի, տակն ու վրա անի, ունեցած չունեցածդ էլ թագաւորական գրի: Մի անգամ քեզ մօտ մի վառիկ եմ կերել, էն աղուհացը դեռ չեմ մոռացել: Վազեցի, եկայ, որ քեզ իմացնեմ: Շուտ արա, գլխիդ ճարը տես, քանի չի եկել:

— Ի՞նչ անեմ, ուր գնամ, — հարցնում է սարսափած Շահ-Մարը ու տեսնում է, որ ճշմարիտ, հեռւից փոշի բարձրացնելով գալիս է թագաւորը:

— Փախի, շուտով ձի նստի, փախի, էս երկրից կորի, էլ ետ չը նայես:

Շահ-Մարը իսկոյն նստում է իր լաւ ձին ու փախչում իր երկրից:

Աղէսի ետեից գալիս են հարսանքաւորները: Գալիս են զուռնով, թմբուկով, երգով, զօրքով, հրացան արձակելով ու աղմուկով:

Գալիս են Չախչախ թագաւորն ու իր կինը ոսկեգօծ կառքի մէջ. նրանց առջևից ու ետեից անհամար ձիաւորներ:

Հասնում են մի դաշտի: Տեսնում են՝ մեծ նախիր է արածում:

— Էս ում նախիրն է, — հարցնում են ձիաւորները:

— Չախչախ թագաւորինը, — պատասխանում են նախրապանները:

Անց են կենում: Հասնում են սարերին, տեսնում են ոչխարի սպիտակ հօտը սարերը բռնել է:

—էս ունի է,—հարցնում են ձիաւորները:
 —Չախչախ թագաւորինը,—պատասխանում են հովիւները:
 Անց են կենում: Հասնում են ընդարձակ արտերի:
 —էս ունի արտերն են:
 —Չախչախ թագաւորինը:
 Հասնում են խոտհարքներին:
 —է՞ս ունի են:
 —Չախչախ թագաւորինը:

Ամենքը մնացել են զարմացած, Չախչախ թագաւորն ինքն էլ քիչ է մնում խելքը թռցնի:

Էսպէսով աղւէսի ետեից գալիս են հասնում Շահ-Մարի պալատին:

Քաւոր աղւէսն էնտեղ արդէն տէր է դառել, կարգադրութիւններ է անում: Ընդունում է խնամիներին ու նորից ըսկսում են քէֆը:

Հէյ, ջան երեխէք, քէֆ արէք դուք էլ:
 Էսպէս հարսանիք երբ կը լինի մէկ էլ,
 որ ջաղացպանը դառնայ թագաւոր,
 ջաղացը՝ պալատ, աղւէսը՝ բաւոր:

62. Ուշուք

Պարունը եկաւ ամպերով,
 ամպերը եկան անձրևով.
 անձրևը տանեմ արտին տամ,
 արտը ինձի ցորեն տայ.
 ցորենը տանեմ ջաղացին տամ,
 ջաղացը ինձ ալիւր տայ.
 ալիւրը տանեմ տաշտին տամ,
 տաշտը ինձ խմոր տայ:

Խմորը տանեմ թոնրին տամ,
 թոնիրը ինձ հաց տայ.
 հացը տանեմ բոշին տամ,
 բոշէն ինձ ուլունք տայ.
 ուլունքը տանեմ նանիս տամ,
 նանս ինձ ծեծի, ծեծի,
 տանից քշի, դուրս անի:

- 1) Էս աստղը աղջիկ է, (թէ տղայ):
- 2) Նանը ի՞նչի պիտի ծեծի:

63. Կարմրակաւար



Աստած թռչուններին ստեղծելիս՝
 ոտներ տաւ ոտոստեն, թևեր տաւ
 որ թռչեն, կտուց տաւ որ ուտեն, ու-
 տեն ու երգեն:

Երբ բոլոր թռչունները պատրաստ
 կանգնած էին նրա չորս կողմը, Աստած
 բաց արաւ իր ներկերի տուփը և սկսեց գոյն գոյն ներկել
 նրանց փետուրները:

Աղաւնին դուրս եկաւ կապոյտ, դեղձանիկը դեղին, ագ-
 ոււր սև, ճայր սպիտակ, և այսպէս բոլոր թռչուններին ներ-
 կեց Աստած ու գոյն գոյն զարդարեց:

Միայն մնաց մէկը, որ չէր ուզեցել միւսներին հըրմշտի ու
 առաջ անցնի, և վերջապէս նա էլ որ մօտ եկաւ, էլ ներկ չէր
 մնացել. Աստած բոլոր գոյները հատել էին: Մնացել էին դա-
 տարկ ամանները:

Խեղճ թռչունը սկսեց լաց լինել, որ բոլոր ընկերները սի-
 րուն-սիրուն փետուրներ ունեն, իսկ ինքը չէ:

—Լաց՛մի լինի,—ասաւ Աստած,—մի բան կանենք: Ա-
 մեն մի ամանում դեռ քիչ մնացել է: Մօտ արի, տեսնեմ:

Ասաւ, առաւ վրձինը ու մնացած ներկերը քսեց թռչունի փետուրներին: Այստեղ կապոյտ, այնտեղ գորշ, մի կտոր դեղին, մի կտոր կանաչ, մի կէտը սպիտակ, էն մի կէտը սև, գլխին կարմիր, ու դուրս եկաւ խառնուտիկ կարմրակատարը:

64. Թռչունի մտածմունքը



Ես ապրում էի մի փոքրիկ տան մէջ

առատ ու անփոյթ.

աշխարհքն ինձ համար կըր էր անվերջ,
կեղևը կապոյտ:

Նըրանից յետոյ աչքըս բաց արի
մի փոքրիկ բընում.

ասի՝ աշխարհքը յարդից է շինած
ու մայրս է շինում:

Մի օր էլ բընից գլուխս հանած՝
Նայում եմ դէս դէն.
տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած,
մեր բունը վըրէն:

Հիմի թըռչում եմ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,
ամեն տեղ գընում,
բայց թէ աշխարհքը ի՞նչից է շինած,
էլ չեմ հասկանում:

1) Էլ ի՞նչ կենդանի գիտէք, որ ձեից է ծնում:

2) Ի՞նչպէս կը մտածէր արաուտը, ծիծեռնակը:

65. Ո՛ւր է իմ արեւը

1.

Կար ու չըկար մի փոքրիկ սիրուն աղջիկ:

Մի օր այդ փոքրիկ աղջիկը զարթնեց, նայեց չորս կողմը, տեսաւ՝ մուլթն է: Այնպէս մուլթն է, որ հագիւ գտաւ իր գուլպաները:

Նայեց լուսամուտի կողմը: «Ո՛ւր է իմ արեւը», ասաւ, «նըր է իմ պայծառ արեւը»:

Վեր կացաւ, հագաւ կօշիկները, հագաւ վերարկուն ու գնաց իմանայ՝ ո՛ւր է կորել իր արեւը:

2.

Երբ տանից դուրս էր գալիս, շրփշրփալի դէմն ելաւ անձրևը:

— Բարև բեզ, անձրև, — ասաւ փոքրիկ աղջիկը: — Իմ արեւը չե՞ս տեսել:

— Այ, կը թըջեմ, շը՛փ, — ասաւ անձրևը:

— Ապա տեսնենք, — ծիծաղեց փոքրիկ աղջիկը ու բաց արաւ հայրիկի մեծ հովանոցը:

3.

Դէմն ելաւ քամին:

— Այ, քամի, դու հեռու աշխարհներից ես գալիս, չը գիտե՞ս, էսօր ո՛ւր է կորել իմ արեւը:



—Հո՛ւ, հո՛ւ, ճամփայ տո՛ւր,—բարկացաւ քամին և կորաւ գնաց:

—Ահ, ի՞նչ կոպիտն է,—մտածեց աղջիկը ու առաջ գնաց:

4.

Գնաց գնաց ու տեսաւ՝ երկնքում իրար ետևից վազ են տալիս սև-սև ամպեր:

—Է՛յ, ամպեր, ամպեր, իմ արեւին չէ՞ք տեսել: Դուք արեւին էնքան մօտ էք ապրում:

Ամպերը ոչինչ չը պատասխանեցին, յօնքերը կիտած անցան գնացին:

5.

Մի քիչ էլ գնաց ու պատահեց վարդի թփին:

—Սիրուն թփիկ, դու լաւն ես, չը գիտե՞ս էսօր ուր է կորել իմ պայծառ արեւը:

—Ախ, ես այնպէս ծարաւ էի, տերեւներս այնպէս փոշոտ, կոկոններս էլ թառամում էին.—փրսփրսաց վարդի թուփը, անձրեւի կաթիլները վրայից թափ տալով:

—Ես քեզ իմ արեւն եմ հարցնում,—ասաւ փոքրիկ աղջիկը:

—Ախ, ես այնպէս ծարաւել էի, այնպէս շոքել: Անձրեւը եկաւ, արմատներիս ջուր տւաւ, տերեւներս լաց:

6.

Մի քիչ էլ գնաց, տեսաւ ծիտիկին:

—Ծիտիկ պիծիկ, չը գիտե՞ս ուր է իմ արեւը:

—Արեւը: Կուզե՞ս կանչեմ,—ասաւ ծիտիկը:


Ծիտիկը թռաւ, նստեց մի բարձր ճիւղի ծայրին ու սկսեց երգել:

Առաջ երգում էր կամաց ու քնքուշ, ու ծաղիկները իրանց թաց երեսները բարձրացրին:

Յետոյ աւելի զլարթ ու աշխուժ. բոլոր կենդանիները դուրս եկան իրենց թաքնւած տեղերից:

Վերջը՝ այնպէս սրտանց ու հրաշալի, որ ինքը արեւը գլուխը դուրս հանեց սև ամպերի ետևից ու ժպտաց:

Ա. ու ա. ծ.—Անուշ լեզուն օձը բնից կը հանի:



66 Տղան ու արեւը

—Արե՛, նորի՞ց գնում ես դու.
սարի ետև ի՞նչ ունես դու:
Քիչ էլ մնա՛ լեռան կողին,
դեռ չեմ ուզում ես անկողին.
վազվրզել եմ ես դեռ ուզում
զով ու զըւարթ այս պարտէզում:

—Սարի ետև, այ ժիր տղայ,
քեզ պէս առոյգ մանուկ շատ կայ,
որոնք՝ ամբողջ գիշերը քուն,
սպասում են իմ գրնալուն.
Նրանք նոյնպէս զով պարտէզում
խաղալ, վազել շատ են ուզում:

Ի՞նչպէս է, որ մի տեղ նոր են գնում անկողին, իսկ մի ուրիշ տեղ անկողնից արդէն պիտի վեր կընան:

67. Երկրի շուրջը

—Հայրիկ ջան, ի՞նչ կայ մեր այգիներից դէնը,—հարցրեց Յասմիկը:

—Զը գիտե՞ս, աղջիկս: Արտեր:

—Իսկ արտերից դէ՞նը, հայրիկ:

—Սարեր: Տես:

—Իսկ սարերից դէ՞նը:

—Կրկին սարեր, կրկին ձորեր, ծովեր:

—Իսկ ծովերից դէ՞նը:

—Ուրիշ երկրներ, ուրիշ աշխարհներ, էլի ծով, էլի ցամաք:
Եւ գիտե՞ս, հոգիս, եթէ այդպէս գնաս ու գնաս՝ ո՞ւր կը հասնես:

—Ո՞ւր:

—Հէնց այնտեղ, որտեղ հիմա կանգնած ես:

—Վա՛հ, զարմացաւ Յասմիկը:

1) Խնձորի վրա նստել էին երկու ծանձ. մէկը ծամփայ ընկաւ
գնաց ուղիղ, միշտ առաջ: Ո՞ւր հասաւ:

2) Գիտե՞ս՝ ինչ ծնւ ունի երկիրը:

3) Ինչո՞վ են ծամփորդում ցամաքի վրա. ինչո՞վ են ծամփորդում
ջրի վրա:

68. Անճոռնի ճուտիկը


Երեք շաբաթ թուխսը վեր չէր կենում ձւերի վրայից:
Տասներկու բրդոտ ճուտեր դուրս էին եկել, մնում էր միայն
մի կանաչաւուն փոքրիկ ճու:

Վերջապէս մի առաւօտ թուխսը նկատեց, որ ձւի ներսից
մէկը թրխկթրխկացնում է: Սաստիկ ուրախացաւ, իսկոյն
շարդեց ձուն կտուցով, ու միջից դուրս եկաւ ճուտիկը:

Սա նման չէր իր եղբայրներին ու բոյրերին: Աւելի բըր-
դոտ էր, աւելի դեղին, ոտիկները կարճ-կարճ, գլուխը լայն,
կտուցը տափակ:

«Էս ինչ անճոռնի է», մտածեց մայրը, մի քիչ տխրեց,
բայց շուտով ինքն իրեն սիրտ տաւ թէ՛ ոչինչ, կը մեծանայ,
կը գեղեցկանայ:

Հաւաքեց իր բոլոր ճուտիկներին ու հպատ-հպարտ կռիւ-
կալով գնաց բակը: Փոքրիկները աշխուժ ու արագ վազվզում
էին նրա շուրջը. միայն նորածինը քայլում էր ծանր ու
օրօրելով:



Մայրը տարաւ նրանց
առւի ափը բուջուջ ա-
նելու: Անճոռնի ճուտի-
կը շուրջ տեսաւ թէ չէ՝
ընկաւ մէջը:

Մայրը սարսափած
ճչում էր, կանչում,
թևերը թափ տալիս,
նետուում դէպի շուրջ:
ճուտիկներն էլ ծոււմ
էին, դէս ու դէն ընկ-
նում:

—Օգնեցէք, օգնեցէք, եղբայրիկը խեղդւում է:

Ամբողջ բակը իրար անցաւ. հաւերը կը չկըջացին, արևարը
բարձր ծղրտաց, փքւած հնդկահաւն էլ ամուր դուտդու-
տում էր:

Իսկ անճոռնի ճուտիկը թեթև շարժում էր իր թաղան-
թաւոր թաթերը ու հանգիստ լող տալիս ջրի երեսին:

Պառաւ նանը լսեց թուխսի ճիչն ու բակի աղմուկը,
դուրս վազեց, տեսնի՝ ինչ է պատահել: Ու խփեց ծնկանը:

—Վա՛յ, բոռանամ ես, էս ի՞նչ եմ արել. հաւի տակ բադի
ճու եմ դրել:

1) Խնձը քաղիկը կարողանում է լող տալ, իսկ միւս ճուտիկները՝ ոչ:

2) Եթէ թխսամէքը ոչ թէ հաւ, այլ քաղ լինէր, նրա աչքին այն
տասերեք ճուտիկներից քանիսը անճոռնի կերեալին:

3) Ի՞նչպէս կը լինէր այս պատմութիւնը, եթէ պառաւը այդ նոյն
տասերեք ծոռն մի թխսկան քաղի տակ դրած լինէր:

69. Չարի վերջը


1.

Լինում է մի սար,
էն սարում մի ծառ,
էն ծառում փրշակ,
փրշակում մի բուն,
բնում երեք ձագ,
ու վրէն Կրկուն:

— Կռկու, կռկու, իմ կուկուներ,
Թրք պիտի դուր առնէք թներ,
թըռչէք, գընաք,
ուրախանաք...

Երգում է մարիկ Կրկուն:
Մին էլ, ընդ՝ Աղւեսն եկաւ:
— Էս սարը իմն է,
էս ծառը իմն է,
ծառում փրշակ կայ,
փրշակում մի բուն,
էս ու վ է եկել,
տիրացել թաքուն:

Ախ, դու Կրկու, յիմար Կրկու,
քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
— Երեք հատ ձագ, աղա աղւես:
— Երեք հատ ձագ ցոյց կը տամ քեզ,
ու չես ասել, դու անամօթ,
մինը ծառայ զրրկես ինձ մօտ:
Չրգի շուտով մի հատը ցած,
թէ չէ կացինս՝ չըրէն սըրած,
գընամ բերեմ,
ծառը կըտրեմ...
— Վայ, չը կտրես,



Աստուած սիրես.

էս մինն ահա
տար քեզ ծառայ,
միայն թէ էտպէս
մի ջընջի մեզ
բընով — տեղով,
ամբողջ ցեղով:

Խնդրեց մարիկ Կրկուն ու ձագերից մինը ձրգեց ներքև:
Աղւեսը հափ, առաւ գնաց:

— Վայ-վայ, դո՛ւ-դո՛ւ,
իմ լաւ կուկու,
ո՞ր սե սարում,
ո՞ր անտառում,
ո՞ր թըփի տակ
կորար մենակ...
վայ-վայ, դո՛ւ-դո՛ւ,
իմ լաւ կուկու...

2.

Լաց է լինում մարիկ Կրկուն, մին էլ, ընդ՝ Աղւեսը ետ
եկաւ.


— Էս սարը իմն է,
էս ծառը իմն է,
ծառում փրշակ կայ,
փրշակում մի բուն,
էս ու վ է եկել,
տիրացել թաքուն:

Ախ, դու Կրկու, յիմար Կրկու,
քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
— Երկու հատ ձագ, աղա Աղւես:
— Երկու հատ ձագ ցոյց կը տամ քեզ.
Ախ, չարամիտ, դու աւաղակ,
ի՞նչ խաբար է, երկու հատ ձագ:

Ի՞նչ, ուզում ես՝ էստեղ զօրով
լըցնես ամբողջ կրկուններով...
Ձրգի շուտով մի հատը ցած,
թէ չէ կացինս՝ հըրէն սըրած,
զընամ բերեմ,
ծառը կըտրեմ...
—Վայ, չը կտրես,
Աստուած սիրես.
էս էլ առ տար
ու թող դադար.
վերջինը գէթ
մընայ ինձ հետ...

Աղաչեց մարիկ Կրկուն ու երկրորդ ձագն էլ ձրգեց ներ-
քե։ Աղւէսը հափ, էս էլ առաւ ու գնաց։

—Վայ-վայ,
վոյ-վոյ,
ընչի համար
եկայ ես սար,
բուն շինեցի,
ձագ հանեցի...
Աղւէսն եկաւ,
տարաւ, կերաւ,
երկու, երկու,
կուկու... կուկու...
Հաց էր լինում մարիկ
Կրկուն։



3.

էս միջոցին, դա՛, դա՛, դա՛, Ագռաւն անց էր կենում էն
կողմերով։ Լըսեց Կրկնի լացի ձայնը։

—էսպէս տխուր ու զարհուրիկ
ի՞նչ ես լալիս, Կրկու քուրիկ։
—Ի՞նչպէս չը լամ, ա՛ սանամէր։

Աղւէսն եկաւ, էն սըրտամեռ,
գըլխիս էսպէս փորձանք բերաւ,
ձագուկներս տարաւ կերաւ։
—Վոյ իմ աչքին, անխելք Կրկու,
ի՞նչպէս իգուր խաբել ես դու
սուտ խօսքերից չար Աղւէսի։
Ո՞րք թէ սարը իմն է՝ կասի։
Ո՞վ է տըւել էն լըրբին սար.
սարն ամենքինս է հաւասար...
Ո՞վ կը թողնի՝ վեր կենայ նա,
ամբողջ սարին գայ տիրանայ,
անունը տայ սրած կացնի,
սրան, նրան սուտ վախեցնի,
ու մինն էսօր, միւսը երէկ,
ձագեր տանի ուտի մէկ-մէկ...
Սե Գրողի էն տարածին
ո՞վ է տըւել սրած կացին.
մին էլ որ գայ ու սպառնայ,
մի վախենայ, քըշի զընայ։

էսպէս ասաւ Ագռաւն ու թռաւ գնաց։ Ահա կրկին Աղ-
ւէսն եկաւ.

—էս սարը իմն է,
էս ծառը իմն է...

Հազիւ էր ասել, Կրկուն բնից գլուխը հանեց.

—Սուտ ես ասում, դու խաբեբայ,
անխիղճ գազան, անկուշտ, ագահ։
Ո՞վ է տըւել էստեղ քեզ սար,
սարն ամենքինս է հաւասար.
Ի՞նչ ես եկել, սուտ տէր դարձել,
ես էլ՝ յիմար, ճիշտ եմ կարծել,
ձագուկներըս տըւել եմ քեզ...

Կորի, գընա՛, դու չար Աղւէս,
հերիք ինչքան սուտ ես խաբել,
հիմի գիտեմ, չեմ վախում էլ.
կացին չունես՝ ծառը կըտրես:


—Ո՛վ ասաւ քեզ:

—Ագռաւն ասաւ:

—Ագռաւը. լա՛ւ:

4.

Ու ագռաւի վրա բարկացած Աղւէսը պոչը քաշեց, հեռա-
ցաւ: Գնաց մի դաշտում սուտմեռուկի տւաւ, վէր ընկաւ,
իբրեւ թէ սատկել է:



Ագռաւն էլ կարծեց՝ իրաւ սատկել է, թռաւ եկաւ վրէն
վէր եկաւ, որ աչքերը հանի: Աղւէսը հափ, յանկարծ բռնեց:

—Ղա՛-ղա՛, դա՛-դա՛,

Աղւէս աղա...

—Ա՛յ, դու կռաւան, չարալեզու,

ոնց թէ Կրկին ասել ես դու՝

թէ ես կացին չունեմ սըրած...

Կացին չունեմ... դէ, հիմի կաց...

—Վա՛յ քեզ մեղայ,

Աղւէս աղա,

ես եմ ասել, չեմ ուրանում,
ինձ քըրքըրի, ինձ կեր հում-հում,
տո՛ւր՝ ինչ պատիժ սիրտըդ կուզի,
բայց մի վերջին խօսքըս լըսի:
Ես էն սարում, հէնց դէմ ու դէմ,
էնպէս մի թանգ պահուստ ունեմ,
որ չես գըտնի դու քո օրում
ոչ մի թառում կամ անտառում:
Ընչի՞ համար էն ահագին
գանձը կորչի հողի տակին:
Արի գնանք, հանեմ տամ քեզ,
էնքան ուտես, էնքան ուտես...
Թէ չը լինի ու սուտ դուրս գամ,
ես հօ էստեղ միշտ կամ ու կամ...

«Գնանք, ասաւ աղւէսը: Թէ կը լինի՝ շատ լաւ, թէ չի
լինի՝ էլի քեզ կուտեմ»:

5.

Գնացին:

Վերեկից թռչելիս Ագռաւը նկատել էր, որ մի թփում
պառկած էր գիւղացու շունը: Աղւէսին տարաւ, տարաւ դուրս
բերաւ ուղիղ էն թփի վրա:

—Ա՛յ, ասաւ, էս թփումն է իմ պահուստը:

Աղւէսը ագահ վրա ընկաւ թփին. շունը վեր թռաւ, կո-
կորդից բռնեց ու դրաւ տակին: Աղւէսը խեղդելով սկսաւ
խրխուլ:

—Ա՛խ, ես... ա՛խ, ես...

զգոյշ Աղւէս,

փորձանքի մէջ

ընկնեմ էսպէս...

Ա՛խ, անիրաւ,

դու սե ագռաւ...

—Ինչքան էլ որ լինի զգուշ,

չարի առջև թէ վաղ, թէ ուշ

էտ է պահած, Աղւէս աղա,

ղա՛, դա՛, դա՛, դա՛...

Պատասխանեց Ագռաւն ու թռաւ. ինքն էլ աղատեց,
Կրկուն էլ:

Առաժ.—Գայլի անունն է դուրս եկել, աղւէսը աշխարհ քանդեց:



70. Կապիկը

1.

Բակից դայիրի ձայն լսեց:

Աշտոր իսկոյն ճանաչեց այդ ձայնը:

— Կապիկ, մայրիկ ջան, կապիկ են բերել, — կանչեց նա ու վազեց պատշգամբ:

Տան բոլոր երեխաները դուրս էին թափւել: Դարպասի մօտ հաւաքւել էին փողոցից տղայ ու աղջիկ, մշակներ, ծառաներ: Բակի մէջտեղը մի թուրք դայիրա էր դըմբղըմբացնում, իսկ միւսը պար էր ածում մի կապիկ ու երգում՝ քաջքելով շղթայից:

Կապիկ, ցոյց տուր՝ մեր աշխարհում

աղջիկները հնց են պարում:

Դայիրա խփողը փոխէփոխ կրկնում էր ընկերոջ խօսքերը: Երեխաները հրհուում էին. բակի շունը հաչում էր:

Կապիկը չորսթաթ վեր-վեր էր թռչում, իբրև թէ պարում է. նրա մարդանման դէմքը ամեն ըոպէ անհանգիստ դառնում էր մէկ տիրոջ աչքերին, մէկ հաչող շան կողմը:

Կապիկ, ցոյց տուր՝ մեր քաղաքում
աղէն գործից հնց է դառնում:

Կապիկը փայտին էր յենւում, մի ձեռքը դնում մէջքին ու պոչը գետնին թրեւելով՝ առաջ էր գալիս:

Կապիկ, ցոյց տուր՝ մեր սարերում
հովիւն հօտը հնց է պահում:

Կապիկը վզին էր դնում փայտը, գլխի ետեւից երկու թեւերով գրկում էր ծայրերը և պտտւում տիրոջ շուրջը:

2.

Երեխաները ուրախութիւնից աղաղակում էին, իսկ շունը աւելի ու աւելի կատաղի էր հաչում:

Ամեն հաչոցին կապիկը ցնցւում էր և յաճախ սխալւում: Այն ժամանակ տիրոջ փայտը իջնում էր նրա գլխին ու վզի շղթան այնպէս ամուր էր թափ տալիս, որ կենդանին վախեցած ատամները կրճտացնում էր, մի անորոշ ձայն էր հանում և իսկոյն սխալը ուղղում:

Կապիկ, ցոյց տուր՝ վերի թաղում

մեր բրուտը հնց է կաղում:

Կապիկը ետևի թաթերով բռնում էր փայտից և առջևի թաթերի վրա ման գալիս՝ պոչը ցից արած:

Կապիկ, ցոյց տուր՝ փոշիներում

հարբածները հնց են փռւում:

Կապիկը փռւեց մէջքի վրա ու ոտքի կանգնեց, գլուխը ու նորից կանգնեց... Այդ միջոցին շունը ամբողջ ուժով ձիգ տւաւ իր շղթան ու, չը կարողանալով կտրել, ծառս ելաւ ետևի ոտների վրա ու խռպոտ ձայնով, խեղդւելով, գաղազած հաչում էր:

Կապիկը սարսափահար դէնը թռաւ, երկու ձեռքով աշխատեց ազատւել վզնոցից, աւելի վախեցաւ շուրջը բարձրացած ճիչ ու աղաղակից, յանկարծ մի վայրենի ճիչ արձակեց, մագլցեց իր տիրոջ շորերով ու կպաւ նրա կրծքին:

Կալաւ ու չռած աչքերը սոսկումով չէր հեռացնում զա-
գագած շնից:

Ամեն կողմից թափւեցին շաքար, կանֆետ, տխիլ, խնձոր,
սև փող, բայց կապիկը պոկ չէր գալիս տիրոջ կրծքից, նոյն իսկ
այն ժամանակ, երբ տէրը կռանում հաւաքում էր այդ ամենը:

3.

Ամբողջ օրը Աշոտը չէր մոռանում կապիկի սարսափահար
հայեացքը: Եւ երբ պառկեց անկողին, նորից երկար մտածում
էր: Յանկարծ նրան այնպէս թւաց, թէ մի բան իր կոկորդը
խեղդում է. ձեռքը տարաւ դէպի պարանոցը ու տեսաւ՝ վզնոց
է: Վզնոցը ամուր հուպ էր տալիս, և ամեն րոպէ մէկը շրդ-
թայից ամուր քաշքշում էր: Աշոտը աչքը բարձրացրեց ու
տեսաւ, որ իր վզի շղթայի ծայրից բռնել էր մի մեծ կապիկ,
իսկ կողքին մի ուրիշ կապիկ դայիրա էր ածում և երգում:

Յոյց տուր, Աշոտ, մեր աշխարհում

աղջիկները հնց են պարում:

Եւ Աշոտը պարզ լսում էր պատշգամբներին, դարպասի
մօտը, շուրջը կանգնած մեծ ու փոքր կապիկների հրհռոցն
ու ծիծաղը, շան սարսափելի հաչոցը... Իսկ գլխին պտտւում
էր պար ածող կապիկի փայտը:

Աշոտ, ցոյց տուր՝ փռչիներում

հարբածները հնց են փռւում:


Աշոտը գլորւում է ու կանգնում, նորից է գլորւում...

Յանկարծ շունը կատաղած պոկ է գալիս, կտրում է շրդ-
թան ու յարձակւում Աշոտի վրա: Եւ Աշոտը զգում է, թէ
ինչպէս շան սուր ատամները ցցւում են իր ոտի մէջ. ցաւից
սարսափահար ճչում է ու վեր թռչում...

—Մայրիկ, մայրիկ...

Անկողնի մօտ կանգնած էր մայրիկը՝ մոմը ձեռքին ու
անհանգիստ նայում էր նրան:

71. Սարդը



Յանց է գցում ճարպիկ սարդը
երկար-բարակ ոտներով.
Վ, ճանճերն են նրա դարդը,
բան չի կերել օրերով:
Շուրջ է գալի, շուրջ է գալի,
իր նուրբ թելերն է հինում,
դէն է գնում, ետ է գալի,
մինչև գործը աւարտում:

Ձիգ կախել է, տես, գերանից.

խնչ արւեստ է, խնչ ոստայն.

և ճանճերը ամեն կողմից

շտապում են՝ մտիկ տան:

Շուրջ են գալի, շուրջ են գալի,

և՛ նայում են, և՛ վազում,

դէն են գնում, ետ են գալի,

անվերջ աշխուժ տրգտրգում:

Իսկ վարպետը սոված փորով

պրպրգել է մի կէտում

և անհամար իր աչքերով

այդ ժիր ճանճերն է դիտում:

Շուրջ են գալի, շուրջ են գալի,

բայց միշտ ըզգուշ են թռչում,

հասկանում են, մօտ չեն գալի,

տրգտրգում են ու կորչում:

Սարդը ինչիւ համար է ոստայն հինում:

Ա. ռ. ա. ծ. — Ճանճն ինչ է՝ ճենճն ինչ լինի:

72. Մեխի պատմութիւնը

—Ըհը՛, հւֆ,—խորը տնքաց մեխը, հէնց որ պինդ խրւեց տախտակի կուրծքը:

—Վահ, մի քիչ քաղաքավարի, էտպէս հուպ չեն տայ,— բողբոջեց տախտակը, նորեկին տեղ տալով իր ծոցում:

—Ի՞նչ քաղաքավարութեան ժամանակ է, գլուխս ջարդեց էտ անիծածը,—վրա տուաւ մեխը չարացած:

Իսկ երբ մուրճի վերջին հարւածը անց կացաւ ու մեխի գլուխը քիչ հանգստացաւ, փոխւեց և տրամադրութիւնը:

—Դէ, սրանից յետոյ երևի կը հանգստանամ. էսպէս էլ չարչարանք,—բացականչեց ինքն իրեն:

—Չարչարանք, չարչարանք. մարդ իմանայ՝ էտ ի՞նչ էք անում դուք, մեխերդ, որ բոլորդ էլ շարունակ տրտնջում էք,—զայրացաւ տախտակը: Չարչարանքը այ մերն է. էնքան տաշում են, տաշտշում, հոգի են հանում. վերջն էլ ամեն կողմից ծակծկում. թէ չէ՝ ձե՞զ ինչ է եղել:

—Կարծում ես,—պատասխանեց մեխը.—էտպէս չէիր խօսի, եթէ իմանայիր՝ որտեղից եմ գալի և ինչեր է անցել զրլ-խովս:

—Ո՞րտեղից ես գալի:

—Մութ աշխարհից:

—Մութը աշխարհից:

—Է՛յ, քանի հազար տարի է, թաղւած էի գետնի տակ, քարերի հետ միասին:

—Բա ի՞նչպէս դուրս եկար:

—Ես ի՞նչ գիտեմ: Եկան, ծակեցին, ջարդեցին, լոյս աշխարհք հանեցին:

—Յետոյ:

—Յետոյ ածեցին հնոցը, սարսափելի կրակի մէջ: Վահ, էտ տաքութեանը երկամի կը դիմանայ. թուլացանք, հալւեցինք, ջուր կտրեցինք. վերևից մտել էինք, ներքևից դուրս

հոսեցինք: Հազիւ էինք քիչ հովացել, էլ ի՞նչ ծեծ ու չարչարանք. բարակացրին, վերջն էլ ահագին մկրատներով կտրեցին, բաժանեցին ինձ միւսներից, գլխիս տւին, տափակացրին, յետոյ էլ ոտքս խարտոցի զրին: Բայց, էհ,—աւելացրեց նա յանկարծ արհամարհանքով,—դու ի՞նչ պիտի հասկանաս էս բոլորից. դո՛ւ, որ ոչ այդ հարւածների մասին գաղափար ունես, ոչ կրակ ես զգացել մարմնիդ, ոչ էլ լոյս աշխարհից դուրս բան ես տեսել կեանքումդ...

1) Բացի երկաթից էլ ի՞նչ քաներ են հանում՝ գետնի խորքից:

2) Ի՞նչ անուն ենք տալիս այդ հանած քաներին. ի՞նչ անուն ենք տալիս այն տեղին, որտեղից հանում ենք:



73. Խրտուիլակ

1.

Գիւղացին մի գարու արտ ունէր: Գարին հասել էր. ճնճղուկները ամեն կողմից հաւաքւում էին, ուտում հա ուտում:

Հէնց գիւղացին գալիս էր թէ չէ, թողնում էին փախչում, վէր էին գալի արտից քիչ հեռու թփերի վրա, թռչկոտում էին ու ծրլծրլում, կարծես մարդուն ծաղրել էին ուղղում:

Գիւղացին տեսաւ՝ էսպէս որ շարունակելի իրեն բան չի մնայ:

Մտածեց, մտածեց ու գնաց մի ձող բերաւ, ցցեց արտի մէջտեղում, մի ուրիշ փայտ էլ խաչի նման կապեց նրան, իր հին, մաշված արխալուխը գցեց վրան, մի քրքրւած փափախանց կացրեց գլխին, մի քիչ յարդ էլ կապեց, կախ արաւ թևից ու հեռացաւ:

Կարծես իսկը մարդ լինէր կանգնած արտի մէջտեղում, մանաւանդ երբ քամին էլ փչում էր և փէշերն ու արխալուխի երկար թևքերը շարժում:

«Դէ, հիմի տեսնեմ, անիծածներ, ոնց էք մօտ գալու», — մտածեց մարդը ու գնաց իր բանին:

2.

— Գնաց, գնաց, ծըլծըլացին ճնճողուկները ու բոլորը մէկանց վեր թռան թփերից, որ վրա թափեն արտին:

— Է՞ս ինչ բան է. էտ անպիտանը դեռ չի գնացել, զարմացան բոլորը. օդի մէջ մի-երկու շրջան արին ու նորից իջան ցած թփերի վրա:

Եւ սպասում էին, ծըլծըլում, ծղրտում, մինչև որ մարդը վեր կենայ կորչի: Բայց մարդը պինդ կանգնել էր մի ոտի վրա, արտի մէջտեղում ու շարժում էր թևերը:

«Հապա թէ մօտ կը գնա»:

Ճնճողուկները համբերեցին, համբերեցին ու համբերութիւնները հատաւ:

— Է՛, վեր կացէք, գնանք արտի կողքերից գոնէ կտցենք մի քանի կտուց, — ասաւ նրանցից ամենից համարձակը:

— Կը խփի, — պատասխանեց մի վախկոտ:


— Կը խփի՝ կը փախչենք:

Ու մի երկուսը մօտեցան արտին:

Իսկ միւսները ասին.

— Է՛, անպէ՛ր, ով գիտի ի՞նչ սատանութիւն կը լինի: Տակից մի փորձանք դուրս կը գայ: Էն որ թևերը էնպէս շարժում է ու գլուխն էլ էնպէս տրմբտրմբացնում, էտ լաւ նշան չի:

Ասին ու թռան գնացին ուրիշ արտեր:



74. Ճնճողուկներ

Կոտ ու կէս կորեկ ունեմ ցանելու համար,
ճնճողուկներ թռան եկան ուտելու համար,
կռացայ քար վեր առայ զարկելու համար:
Ղասաբներ դանակ բերին մորթելու համար,
աղջիկներ թև քաշեցին փետրելու համար,
պառաւներ պղինձ դրին եփելու համար:
Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,
տէրտէրներ խաչով եկան օրհնելու համար,
աշուղներ սազով եկան գովելու համար:

Ա՛յ ճնճողուկիկ,
կարմիր տոտիկ,
սիպտակ փորիկ,
ուտեն կուտիկ,
խմեն ջրիկ
առւի եզրիկ,
պստիկ-մստիկ,

փախչեն երթան ման գալու համար:

1) Քար որ վեր կալայ, քանի՞ ճնճողուկ զարկեցի:

2) Այնքան մարդ ի՞նչ պիտի մորթէին, ուտէին:

Առա՞ծ. — Ջուրը չը տեսած, ոտներդ մի հանի:

Հանելուկ. — Մի մարագ, մէջը լիքը ուրագ:

75. Մրջնոց

1.



Անտառի բերանին մի բլրակ կար. դա մի ամբողջ բաղաբ էր: Այդ բաղաբում կային երկար փողոցներ, լայն ու կոկիկ բնակարաններ, լիքը ամբարներ, մի խօսքով ամեն բան իր տեղը, կարգին ու խելօք:

Վարպետները տներ էին շինում, մշակները պաշար էին հաւաքում մայրերի ու հայրերի համար, դայեակները երեխաներին էին մտիկ տալիս, իսկ զինւորները պահպանում էին բաղաբը:

Եւ հանգիստ, բախտաւոր ապրում էր այս բաղաբը: Եւ այդ բաղաբը մըջնոցն էր:

2.

Մի օր մի սարսափելի հսկայ, այսինքն մօտիկ գիւղի տղաներից մէկը, տեսաւ այդ բաղաբը, իր ահագին ոտը դրաւ բաղաբի վրա ու, Տէր Աստուած, ի՞նչ աւերմունք արաւ:

Բնակարաններն ու ամբարները փռւի եկան, հողը լցեց փողոցները: Դայեակները մանուկ մըջիւններին առան, անտառը փախան. հայրեր, մայրեր, մշակներ—մոլորւած դէս ու դէն ընկան: Իսկ ահագին ոտը շարունակում էր փորփրել:

Միայն կտրիչ զինւորներն էին, որ գլուխները չը կորցրին: —Կռիւ,—կանչեցին նրանք,—կծոտենք, սպանենք այս անիրաւին:

Ու առաջ ընկան. նրանց ետեւից բոլոր մըջիւնները: Յարձակեցին հսկայի վրա, կծեցին ու թոյն լցրին, ուռցրին կծած տեղերը:

Հսկան ոտները թափ էր տալիս ու ճխլում յարձակողներին: Քաղաքի քաջ պաշտպանողներից շատերն ընկան այս մեծ պատերազմում, բայց թշնամին վերջապէս յաղթւած թողեց բաղաբն ու հեռացաւ:

Կենդանի մնացածները վերադարձան բաղաբ: Նորից շինեցին իրենց բնակարաններն ու ամբարները, մաքրեցին փողոցներն ու հրապարակները: Նորից հանգստութիւն և կարգ հաստատեցին բաղաբում:

Եւ նորից վարպետներն ու մշակները ուրախ-ուրախ աշխատում են, իսկ դայեակները կրթում են մանուկ մըջիւններին, որ մեծանան ու դառնան իրենց բաղաբի համար կտրիչ մշակներ ու քաջ պահպաններ:

1) Տղան ինչո՞ւ էր քանդում մըջնոցը:

2) Ի՞նչով յաղթեցին մըջիւնները:

Առաժ.—Մէկն ամենքի համար, ամենքը մէկի:

Հանելուկ.—Մի գոմ ունեմ, հազար գլուխ ոչխար կը տանի, մէկ կապ խոտ չի տանի:

76. Վուշ

1.



Վուշը ծաղկել էր. կապոյտ, փոքրիկ ծաղիկներ, թիթեռնիկի թևերի նման փափուկ ու բնրուշ:

Արևի շողը գուրգուրում էր նրան, ցօղի կաթիլը փայլում էր նրա վրա, և վուշը հրճւում էր:

—Ի՞նչ բաղցր է արևը, ի՞նչ անուշ է ցօղը: Ձէ, աշխարհիս երեսին ինձանից բախտաւոր ոչ ոք չը կայ:

2.

Բայց մի օր եկան մարդիկ, բռնեցին վուշը ու արմատով հողից դուրս բաշեցին: «Պրծաւ», մտածեց վուշը:

Դրին ջուրը, կարծես ուզում էին խեղդեն, յետոյ դրին արևի դէմ ու չորացրին:

Բայց դրանով չը վերջացաւ: Խեղճին բռնեցին, մի լաւ թակեցին, զրզրեցին, յետոյ էլ սանրեցին, անց կացրին ճա-

խարակին, ֆը՛ռ, ֆը՛ռ, ֆը՛ռ, մանեցին: Վուշը դարձաւ թել:
Թելը հինեցին դազգահի վրա, գործեցին, դուրս եկաւ մի
կտոր սպիտակ կտաւ:

—Էս ի՞նչ սիրուն բան դառայ,—զարմանում էր նա,—
թէն մի բիշ շատ տրորեցին:

3.

Քիչ յետոյ կտաւը տարան, չափեցին, ձևեցին, մկրատով
կտրտեցին, ասեղով ծակծկեցին, վերջապէս կարեցին մի սի-
րուն շապիկ: Ու դրին խանութի ցուցափեղկը:

—Դէհ, հիմա ինձ մտիկ արէք,—փբւել էր նա, ցուցա-
փեղկում պառկած:

4.

Տարիներ անցան, շապիկը հագան ու մաշեցին: Թելերը
բրբրւել էին և ընկնում էին իրարից:

Շապիկը դարձաւ փալաս: Փալասով դռներն ու պատու-
հաններն էին սրբում, մի օր էլ շպրտեցին աղբանոց:

—Էլ պրծա՛ւ,—մտածում էր վուշը տխուր-տխուր:

Էտ միջոցին էր, որ մէկը եկաւ, նրան վերցրեց, գցեց իր
զամբիւղն ու տարաւ:

5.

Խեղձին մանր-մանր կտրտեցին, ածեցին ջրի մէջ, եփե-
ցին, խառնեցին, քամեցին, լւացին, չորացրին, փռեցին, հար-
թեցին, ճզմեցին, մինչև որ դարձաւ մի երկար բարակ սպի-
տակ թուղթ:

—Վայ, էս ի՞նչ սիրուն բան դարձայ,—մտածում էր վուշը:

Թուղթը թերթ թերթ դարսեցին, տարան տպարան, գցեցին
մեքենայի տակ ու վրան տառեր տպեցին: Յետոյ էլ ծալեցին,
կարեցին, կազմեցին, դուրս եկաւ մի գիրք:

Ահա, այդ գիրքը հիմա քո առաջն է, որի վրա կարդում
ես վուշի պատմութիւնը:

Վուշի սերմից ի՞նչ են պատրաստում:

Ա. ու ա ծ.—Էս քեզ խրատ, էլ չը ցանես կտաւատ:

77. Կաղնու վարձուորները

Մեր ծեր կաղնին իր հին տունը
տւել է չորս վարձուորի:

Արմատի մօտ ներքնատունը
մուկն է բռնել այս տարի:

Ատաղձագործ փայտփորիկը
ցածի յարկի խանութում
անց է կացնում իր օրիկը,
թակում, կտցում, ծակոտում:

Իսկ վերևի յարկում տիտիկ
շէկ սկիւռն է բնակւում,
կաղին, ընկոյզ, սերմ ու հատիկ
դիզած իր լի փըշակում:

Թաւ ճիւղքումը դրել է բուն
մի զիւ երգիչ դուրալի
ու ճըլւըլում է օրն ի բուն:
Իսկ վարձ ոչ ոք չի տալի:


78. Ոգնին եւ օձը

1.

Ամառւայ մի խաբ օր էր: Արևի կիզիչ շողերը այրում
խորովում էին արտն ու արօտը: Դրսում ամեն ինչ լուռ էր:
Ձէր լսւում ոչ կովի բառաչը, ոչ ձիու խրխինջը, ոչ շան
հաչոցը, ոչ այծի մկկոցը, ոչ ոչխարի մայիւնը, ոչ հաւի
կչկչոցը և ոչ էլ թռչունի ծլւլոցը: Գիւղի առջևից հոսող վտա-
կի վշտոցն էլ չէր լսւում: Նա էլ էր պապանձւել:

Օրւայ այդ շոգ պահին գիւղի բոլոր երեխաները հաւաք-
ւել էին ձորի գլխին ու նայում էին ցած:

2.



Ներքե, ձորի մէջ կը ու-
լում էին ոգնին ու օձը:
Կռիւր կատաղի էր:
Օձը սուլում էր, թռիչք-
ներ էր անում փշոտ
ոգնու շուրջը, բայց ոչ
մի կերպ չէր կարողա-
նում բռնել: Ոգնին էլ
փոքրիկ գլուխը հանում

էր ու յարմար ըռպէից օգտւում, կծում օձի մէջքը, փորը,
վիզը ու կծկւում: Վերջին անգամ փշերի միջից հանեց նա
իր գլուխը, յանկարծ բռնեց օձի պոչը և կրկին կծկեց:

Օձը ինչքան աշխատում էր, չէր կարողանում ազատւի,
ցաւից ֆշշացնում էր, երբեմն գլուխն էր մօտեցնում պոչին,
երբեմն մարմինն էր դէս ու դէն նետում: Ոգնու փշերը ամուր
ու սուր էին և անխնայ քրքրում էին նրա մարմինն ու գլուխը:

3.

Հետզհետէ օձը թուլացաւ: Մարմնի վրա բազմաթիւ վէր-
քեր կային, այլևս չէր սուլում, միայն ցնցւում էր ամբողջ
մարմնով:

Ոգնին կծկած էր ամուր, օձի պոչը պինդ կծած:


Բաւական ժամանակ անցաւ, մինչև օձը բոլորովին ան-
շարժացաւ: Արդէն սատկել էր:

Ոգնին բաց թողեց նրա պոչը, զգուշութեամբ մի քանի
անգամ հանեց իր գլուխը, դիտեց շուրջը, նայեց օձին, գնաց
ու ծածկեց մօտակայ թփերի տակ:

Ա. ռ. ա. ծ. — Օձը իր շապիկը կը փոխի, բնութիւնը չի փոխի:

Հանելուկ. — Ձու կածի՝ հաւ չի, խոտ կուտի՝ կով չի:

79. Երեք դեղձ



Արուսեակը թռչ-
կոտելով վազեց իր
սենեակը ու ձեռքի
երեք դեղձը շարեց
սեղանի վրա, ինքն
էլ կանգնեց դի-

մացը ու երկար դիտում էր: «Ի՜նչ լաւն են, չեմ ուտի, կը-
պահեմ», — մտածում էր նա: Բայց մի քանի ըռպէից յետոյ
մօտեցրեց մէկը բերանին ու կծեց: Եւ շուտով կարմիր դեղձից
մնաց միայն մեծ կորիզը:

«Մնաց երկուսը, էլ չեմ ուտի», — հաստատ վճռեց Արու-
սեակը, վերցրեց դեղձերը ու վազեց խոհանոց:

Խոհանոցում կանգնած էր լւացք անողի փոքրիկ, գունատ
աղջիկը իր պատռտած շորերով: Յանկարծ կարմիր դեղձերից
մէկը դուրս պրծաւ Արուսեակի ձեռքից ու գլորւեց աղբատ
աղջկայ կողմը: Արուսեակը շտապով կռացաւ, բռնեց դեղձը,
ինքն էլ չէր իմանում ինչու՝ կարմրեց ու փախաւ խոհանո-
ցից դուրս:

Երկար մտածում էր: Վերջն ինքն իրան ասաւ.

— Էս մէկը կուտեմ, միւսը կը տանեմ նրան:

Ու մէկն էլ կերաւ: Մնաց ամենից մեծը. փափուկ, կար-
միր, սիրուն, թաւիշի նման:

Շուտով վերջին դեղձիցն էլ միայն կորիզը մնաց:

Արուսեակը շփոթւած վազեց մօր սենեակը:

— Մայրիկ, դու հօ ասացիր, որ այն դեղձերը իմն են:

— Այո, աղջիկս:

Եւ որ ինչ ուզենամ՝ կանեմ, չէ՞:

— Այո:

Արուսեակը ոչինչ չը պատաս-
խանեց, բայց անհանգիստ էր:



—Իմն էր ու կերայ: Ի՞նչ վատ բան եմ արել որ...
Բայց ինչ էլ որ անում էր՝ լացք անողի աղջիկը աչքից
չէր հեռանում:

Առաժ.—Կուշտը քաղցածին մանր կը բրդի:

80. Գետակը

—Ո՛ւր ես վազում
այդպէս արագ,
ա՛յ դ՛ու կայտառ
սիրուն գետակ.
կանգ առ, խաղանք
էս ծառի տակ:

«Չէ, փոքրիկըս,
գնամ պիտի.
տես ջաղացը
գիւղի մօտի.
պէտք է ուժ տամ,
որ պըտըտի:

«Յաճն էլ հովտում
անուշահոտ
ինձ են մնում
ծաղիկ ու խոտ,
յոգնած ծարաւ
տաւարն ու հօտ:

«Սառն աղբիւրը
բարձրը սարի
դրանց համար
է ինձ տալի
իր գով ջուրը
կըլկըլալի:

«Իսկ կամուրջի
տակն էլ որ կայ,
կայ լացքը
պառաւ կընկայ,
պէտք է լամ
բանի լոյս կայ:

«Դէ, տեսնո՞ւմ ես.
մնաս բարով.
ճամփաս ցանած
հազար գործով,
դադար չունեմ
ես մինչև ծով»:

Հանելուկ.—Օրան օրան շուռ է գալիս,
ոտներ չունի՝ ման է գալիս,
բերան չունի՝ կուլ է տալիս:

81. Թրթուրն ու խխունքը

1.

Կաղամբի տերևի վրա ապրում էր մի խխունք:

Այդ տերևի մի անկիւնում արդէն վաղուց ընկած էր մի
դեղին հատիկ: Այդ հատիկը թիթեռնիկի ձու էր:

Մի տաք օր ձւից դուրս սողաց մի փոքրիկ թրթուր.
խխունքը զարմանքով նայում էր այդ նոր արարածին:

«Ի՞նչ չնչին, ի՞նչ ողորմելի դատ է», մտածում էր նա:

Իսկ թրթուրը շատ ուրախ էր. նա սիրում էր տաք արևը,
իր կաղամբի տերևը ու երջանիկ էր:

Մի օր խխունքը մօտ եկաւ
ու պոզերը շարժելով ասաւ.

—Ձարմանում եմ, ինչո՞ւ
ես այդպէս միշտ ուրախ: Մեր
կեանքը իսկի էլ այդպէս թե-
թե չէ:

—Ինչո՞ւ,—պատասխանեց թրթուրը,—շատ լաւ է: Շու-
տով էլ մի սիրուն թիթեռ կը դառնամ, կը թռչեմ վեր, արևի
ոսկի շողերի տակ. ան, ինչ լաւ կը լինի:

Խխունքը երեսը շուռ տաւ ու ծիծաղեց.

—Ի՞նչ յիմար բաներ է դուրս տալիս սա:


2.

Քիչ յետոյ թրթուրի ուրախութիւնը կորաւ: Թմրել մնա-
ցել էր մի տեղում:


Մի անգամ խխունքը անց էր կենում նրա կողքից, տե-
սաւ որ թրթուրը փաթաթւել էր մի տեսակ կաշւի մէջ ու
անշարժ ընկել:

—Ա՛յսպէս էլ յիմար,—բացականչեց խխունքը.— ասում
էր թիթեռնիկ պիտի դառնամ, ընկել սատկել է:

Մի բանի ժամանակ էլ անց կացաւ, խխունքը բոլորովին
մոռացել էր իր հարևանին և ապրում էր առաջւայ պէս կա-
ղամբի վրա: Մի օր էլ անց էր կենում նրա գերեզմանի մօ-



տով ու յանկարծ զարմացած կանգ առաւ. թրթուրի պատը-
ւած կաշւի մօտ նըս-
տած էր մի սիրուն
թիթեռնիկ և նրա
թաւիշ թւերը փայ-
լում էին արևի շողե-
րի տակ:



— Մնաս - բարով,
խխունջ, ես գնում
եմ, — կանչեց թիթեռնիկը, թւերը թեթև թափ տւաւ, բարձ-
րացաւ վեր ու կորաւ արևի պայծառ շողերի մէջ:

1) Խխունջը փոքրիկ թրթուրին ինչո՞ւ էր ողորմելի համարում:

2) Ուրիշ ի՞նչ կենդանի գիտէք, որ պատեան ունի:

3) Ինչի՞ համար են խխունջի պոգերը:

Հանելուկ. — Պառաւը նստել է գետնին, քուրքը հագել է քուր-
քին, ասում է՝ մըսում եմ, հա մըսում եմ:

82. Կես խնձոր

1.

Դասարանում մի խումբ աղջիկ ու տղայ խոնկել էին
վառարանի մօտ: Յուրա առաւօտ էր: Ուրախ-ուրախ խօսում
էին նրանք ու ծիծաղում իրար հետ:

Իսկ նրանցից քիչ հեռու, բոլորովին առանձին, կանգնել
էր մի նորեկ աշակերտուհի, որի վրա հները կարծես ոչ-մի
ուշադրութիւն չէին դարձնում. երբեմն մէկը, երբեմն միւսը
թէև նայում էին աղջկայ կողմը, բայց ոչ-մէկը հետը չէր
խօսում:

Նորեկը այս առաջին անգամն էր ոտք դնում դպրոց:
Մայրը զեռ նոր էր թողել ու հեռացել. և աղջիկը այժմ շատ
մենակ ու անյարմար էր զգում այդ օտար սենեակի ու օտար
բազմութեան մէջ: Սիրտը սաստիկ ուզում էր իրենց տունը,
ուզում էր թողնի ամեն բան ու վազ տայ մօր ետևից:

Աչքերը լցւել էին և ուզում էր արդէն լաց լինի, երբ յան-
կարծ դասարանի դուռը թափով բացւեց ու մի սևաչւի կար-
մրաթշիկ աղջիկ նետւեց ներս:

Գնաց ուղիղ դէպի վառարանը ու ձեռները տաքացնելով
սկսեց խօսել, ծիծաղել այնտեղ կանգնած խմբի հետ:

2.

Մէկ էլ յանկարծ աչքովն ընկաւ նորեկ աղջիկը:

— Բարև, ասաւ նա անուշ ձայնով ու շատ սիրալիր, և
մօտեցաւ:

Նորեկի դէմքը պայծառացաւ և
խկոյն պատասխանեց.

— Բարև:

— Յուրա է, չէ՞, — ասաւ սևաչ-
ւին, պայուսակը ուսից հանեց,
դրեց սեղանին, ձեռքերը քիչ շփեց
ու անմիջապէս գրպանի խորքից
դուրս քաշեց մի մեծ կարմիր
խնձոր:

Հանեց, կէս արաւ ու կէսը մեկ-
նեց նորեկին՝ ժպտալով.

— Սիրում ես, չէ՞, խնձոր:

— Այո, — պատասխանեց նորեկը՝ վերցնելով խնձորի կէսը:

— Իմ անունը Հուսիկ է, — ասաւ խնձորի տէրը, — իսկ քոնը:

— Իմ անունը Սեդա է:

— Էտ ի՞նչ սիրուն անուն ունես: Տես, իմ մօտս մի ազատ
տեղ կայ. ուզո՞ւմ ես՝ մօտս նստես:

— Սիրով:

Ու երկու աղջիկները միասին գնացին նստեցին Հուսիկի
նստարանին իրար կողքի, կրծում էին իրենց խնձորն ու
ճրթճրթում իրար հետ, մինչև որ տւին դասի զանգը:

Ուսուցիչը ներս եկաւ թէ չէ, աչքը ման ածեց դասարա-
նի վրա, կարծես փնտռում էր մէկին: Տեսաւ նորեկին Հու-
սիկի կողքին, նայեց նրանց զլարթ աչքերին ու ժպտաց.

— Ոչինչ, լաւ ընկերուհի ես ճարել:



Ու այդպէս էլ էր:

Հոռիկը, որ հիմա մեծացել ու դարձել է կին, դարձել է տիկին Հռիփսիմէ, հէնց ինքը պատմեց ինձ այս պատմութիւնը և աւելացրեց, թէ ինչպէս կէս խնձորով ձեռք էր բերել իր ամբողջ կեանքի լաւագոյն ու մտերիմ ընկերուհուն:

1) Ծիջտ է, կէս խնձորով էր ձեռք բերել իր ընկերուհուն:

2) Ի՞նչ տեսակ աղջիկ էր Հռիփսիկը:

83. Աղբիւրը

Սարի լանջին, ժայռի տակ,
ջուր էր բըխում սառնորակ
ու ցրւելով խոտերում
իզուր ճահիճ էր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ
շինեց հովիւն ու անուշ
խաղ ասելով նա տարաւ
ջրեց հօտը իր ծարաւ:

Պախրէն անցաւ էն սարից՝
շոքից հանած չոր լեզուն.
կուշտ-կուշտ խմեց աղբիւրից,
ապա նայեց Աստծուն:

Անցւորն եկաւ տօթակէզ,
սառն աղբիւրին որ հասաւ,
գլխարկն առաւ ու չոքեց՝
խմեց, սիրտը հովացաւ:

Ու տըլաւ իր օրհնանքը
անցւոր մարդը էն բարի.

«Քո շինողի օր-կեանքը
ջրի նըման երկարի...»

84. Մոռ քաղերու

1.

Եղբայրներս իրենց ընկերների հետ խօսք էին կապել զնան մոռի: Այնքան արի, որ համաձայնեցին ինձ էլ հետները առնեն:

Յուլիսի կէսն էր: Մորին արդէն վերջացել էր. մոռն էլ գտնւում էր միայն աւելի բարձր տեղերում:

Արևը հազիւ էր դուրսնայել դիմացի սարի ետևից, երբ մենք ամարանոցները թողինք: Շարունակ պիտի բարձրանայինք:

Շուտով հասանք վերի արտերին:

Այնտեղ հունձը դեռ նոր էին անում: Գիւղացիք կեռ ման-դաղները ձեռներին, անընդհատ կռանում էին, հնձում, գրկի մէջ հաւաքում, ապա խուրձեր կապոտում ու ցից կանգնեցնում:

— Բարի աջողում, — ողջունեցինք մենք:

— Աստծու բարին, — պատասխանեցին հնձուրները միաձայն: Մէկը նրանցից բաժանւեց և մի մեծ խուրձ բարձր պահած՝ մօտեցաւ մեզ: «Փէշքէշ է», — կանչեց նա:

Եղբայրս սև փող տւաւ նրան, ու առաջ անցանք:

Շաւիղը աւելի դիք էր դառնում և հետզհետէ անյայտանում էր թուփերի մէջ:

Մէկ էլ ետ նայեցի:

Ցածրում երևում էին գիւղերը գետնափոր տներով. տեղ տեղ միայն կարմրին էին տալիս կղմինտրով ծածկւած տանիքներ: Սայլի ճամփան ոլոր-մոլոր ձգւում էր գիւղերի միջով: Դաշտերում և արտերում շարք-շարք բազմած էին խոտի դէզերն ու ցորենի կիտուկները. մէջէմէջ, գորգերի նման, սև-սև փռւած էին նոր վարած ցելերը: Հեռւում, դիմացի սարի անտառի միջից, մի ծուխ ուղիղ բարձրանում էր վեր. ածխարարները ածուխ էին այրում:

2.

Շաւիղը կորցրինք: Մագլցում էինք, թուփերից բռնում,

իրար ձեռք տալիս, իրար վեր քաշում, ժայռից ժայռ բարձրանում. վերջապէս տեղ հասանք:

Տէր Աստուած. ինչքան մոռ կար: Թուփերը կարմրել էին: Իսկոյն ցրւեցինք կանաչ թուփերի մէջ և ագահութեամբ ըսկսեցինք ուտել հիւթալի պտուղները ու հաւաքել զամբիւղների մէջ: Իրար հրում էինք, ձգում էինք փշոտ ճիւղերի մէջ, ձեռներս չանգռում, ծիծաղում, երգում, շլացնում:

Ձը նկատեցինք էլ՝ թէ ինչպէս մեր զամբիւղները լցւեցին: Թարմ տերեւներով ծածկեցինք ու ճամփայ ընկանք: Որոշեցինք իջնել սարի միւս լանջով, որտեղ մի գետակ էր վազում. ուղում էինք սառը ջրի մէջ լողանալ, գովանալ:

Անցանք միւս լանջը: Այնտեղ աւելի անտառոտ էր: Հեռւից լսում էր մի կրկնող զրնգոց:

—Տղերք, խոտ են հարում,—կանչեց մեր ուղեցոյցը:

Եւ ճիշտ որ մի քիչ յետոյ դուրս եկանք մի ընդարձակ բացատ (թալա): Խոտ հարողները, կուրծքերը բաց, գոռնաւոր թաշկինակները գլուխներին, իրարից հաւասար հեռաւորութեան վրա առաջ էին քայլում և երկար գերանդիները կանոնաւոր շարժում: Ամեն շարժումից բարձր խոտը կիսաշրջան պառկում փռում էր գետնին:

3.

Ծառերը աւելի ու աւելի խիտ և վիթխարի էին դառնում: Անտառի զովութիւնը անչափ ախորժելի էր: Յանկարծ երեսներին դիպաւ ջրի խոնաւութիւնը: Զրկէժի քաղցր շառաշը ըսկսեց խառնել տերեւների սօսափիւնի ու թռչունների կանչերի հետ:

—Գետակը, գետակը... Տղէք, ապա տեսնենք՝ ով աւելի շուտ կը հասնի...

Բոլորս էլ սկսեցինք ցած վազել: Եջըր դժւար էր: Ոտներս սահում էին շուտ-շուտ. ամուր բռնում էի ծառերի բներից ու թփերից, որ չը լինի թէ թափեմ զամբիւղներս:

Քարքարոտ ձորի խորքում կայտառ թռչկոտում էր լեռ-

նային վտակը: Զամբիւղներս արևի շոքից թաքցրի մի թփի տակ ու բարից քար ցատկոտելով՝ հասայ ընկերներին: Շրջակայ քարերը շուտով ծածկւեցին մեր գոյնգոյն շապիկներով, գուլպաներով, գլխարկներով: Գրեթէ միաժամանակ թափւեցինք ջուրը:

Յրաից ճշացի: Գոռում գոչում էինք, իրար ջուրն էինք կոխում, սրսկում, ջրի տակն էինք սուզում, մէջքի վրա ձգւում, դուրս վազում ափը, նորից վտակի մէջ թռչում, անցնում ջրվէժի տակ ու փրփուրի մէջ պառկում: Մեծերը նկատեցին որ ես ցայտերից շատ էի վախենում, բոլորն էլ ինձ վրա յարձակւեցին ու ջուր էին ածում աչքերիս, բերանիս, ախանջներին: Շնչակտուր դուրս պրծայ ջրի միջից, վազեցի հեռու, նստեցի մի չոր քարի գլխի ու սկսեցի արևի տակ տաքանալ: Յետոյ կամացուկ մօտեցայ, շորերս արագ հաւաքեցի ու փախայ լողացողների մօտից:

Այնպէս թեթև էի զգում ինձ լողանալուց յետոյ. ոչ մի յոգնածութիւն: Ախորժակս բացւել էր: Շտապեցնում էի ընկերներին, որ դուրս գան շուտով, նստենք ճաշի:

Ուտելեղէնները շարեցինք կանաչ խոտերի ու լայն-լայն տերեւների վրա, ծառերի խիտ սաղարթի տակ և անուշ ճաշ արինք: Ծառաւում էինք թէ չէ, վազ էինք տալիս ցած վտակի մօտ. այնտեղ քարի տակից բխում էր մի սառնորակ աղբիւր. կռանում էինք ու հէնց վճիտ ակնից ջուր ծծում...

Ճաշից յետոյ, երբ բոլորը դէս ու դէն ցրւեցին, զամբիւղներս տարայ մի հաստարմատ թխկու տակ ու ինքս էլ կողքին ձգւեցի, կանաչ խոտի վրա: Անտառը լցած էր մեղմ ձայներով. երբեմն հովիկը սրւալաւանում էր տերեւները: Իսկոյն քնեցի. առաւօտը շատ վաղ էի դարթնել:

4.

—Հէյ, հէյ, ժամանակ է, ժամանակ է, տո՛ւն,—կանչում էր մեր ուղեցոյցը: Քնից վեր թռայ...

Արևը արդէն իջել էր, երբ սկսեցինք մօտենալ մեր

գիւղին: Խրճիթների բակերից բարձրանում էին ծխի սիւներ,
քամին կալերից դարմանի փողին տանում էր հեռու. նախիրը
մտնում էր գիւղը: Գիւղում աղմուկ էր. հորթերը բառանշում
էին, շները հաչում, օդի մէջ գիւ ծղրտալով ծիծեռնակների
խմբերը սուր սլանում էին և պտոյտներ անում:

Մտանք գիւղը: Աղբիւրի մօտ հաւաքւել էին հարսներն
ու աղջիկները՝ սափորներով, կժերով:

Մայրիկս սպասում էր մեր ամարանոցի պատշգամբում:
Վազէվազ ելայ սանդուխքի աստիճաններով, ու ամբողջովին
կարմրատակած, մեկնեցի նրան իմ զամբիւղները:

—Մայրիկ ջան, ինչքան մոռ եմ քաղել քեզ համար:

85. Չանասեր հնձուրներ

Ալէքսան

ու իր տասնեկինը փեսան,

քսան գերանդի,

բառսուն յեսան:

Նստեցին,

սրեցին,

կերան, խմեցին,

պառկեցին, քնեցին,

բաղեցին,

փոցխեցին,

կապեցին,

բարդեցին,

վերջին անգամ որ համրեցին,
տեսան՝

բարդից պակաս էր քսան:

1) Ծճմարիտ «Չանասեր» հնձուրները ի՞նչպէս կանէին:

2) Քսան հոգով այդ օրը քանի՞ խուրճ բարդեցին, եթէ բարդը
քսան խուրճ է:

Առաժ. — Հաց ու պանիր, կեր ու բանիր:

86. Գառնիկ Ախպեր

Երկու որբեր,

բուր ու ախպէր,

կորած գընում են

հեռու,

արևը վառ,

ճամփէն երկար,

ոչ աղբիւր կայ,

ոչ առու:

Քոյրը մեծ էր,

ոնց որ լինէր

կը համբերէր արևին,

բայց ախպէրը փոքրիկ էր դեռ,

չէր գիմանում ծարաւին:

Գընում են, գընում, տեսնում են ճամփին

կովի ոտնատեղ՝ մէջը լիբը ջուր:

«Քուրիկ ջան, բուրիկ, ես շատ եմ ծարաւ,

ինչ կըլի թողնես խրմեմ մի պուճուր»:

—Ձէ, ախպէր ջան, չէ, դու կով կը դառնաս,

կովի կըճղակի տեղից մի խրմի:

մի քիչ էլ կացի... քիչ էլ որ կենաս,

առաջներս պաղ աղբիւր կայ հիմի:

Երկու որբեր,

բուր ու ախպէր,

գընում, գընում են հեռու,

արևը վառ,

ճամփէն երկար,

ոչ աղբիւր կայ, ոչ առու:

Գընում են, գընում, տեսնում են ճամփին
ձիու ոտնատեղ՝ մէջը լիբը ջուր:

«Քուրիկ ջան, բուրիկ, ես շատ եմ ծարաւ,
ինչ կըլի թողնես խրմեմ մի պուճուր»:

—Ձէ, ախպէր ջան, չէ, դու ձի կը դառնաս,
ձիու սըմբակի տեղից մի խրմի:



մի քիչ էլ կացի. քիչ էլ որ կենաս՝
մօտիկ մի գուլալ աղբիւր կայ հիմի:
Երկու որբեր,
բուր ու ախպէր,
գընում, գընում են հեռու,
արևը վառ,
ճամփէն երկար,

ոչ աղբիւր կայ, ոչ առու:
Գընում են, գընում, տեսնում են ճամփին
գառան ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր:
Փոքրիկ ախպէրը էլ չի համբերում,
բըրոջից թաքուն խրմում է պուճուր:
Քոյրը մին էլ ետ է նայում,
որ մի գառը մղկըտալի
իր ետևից տըխուր մայում
ու մայելով վազ է տալի:
— Ախ, իմ Մանուկ, որբ ու անտէր,
իմ անլեզու, Գառնիկ-Ախպէր,
էլ հնց անեմ, ինչ անեմ ես...
Կանչում է խեղճ Մանուկն էսպէս,



վայ է տալիս,
լալիս, լալիս.
բայց էլ ի՞նչ անէր,
բայց էլ ի՞նչ անէր...
Երկու որբեր,
բուր ու ախպէր,
գառն ու աղջիկ
մոլորւած,
հեռու հանգում
տըխուր-տըրտում
գընում, գընում են
կորած:

3.

Սոված ու ծարաւ գընում են, գընում.
գընում են, գընում, չը գիտեն թէ ուր.

վերջապէս մի հով անտառ են մըտնում.
անտառի միջին մի զանգակ աղբիւր:
Կուշտ-կուշտ խրմում են էն սառը ջրից.
յետոյ Մանուկը ծառն է բարձրանում,
Գառնիկ-Ախպէրն էլ ծառերի տակին
մուշ-մուշ արածում, արոճ է անում:
Իրիկան պահին խրխինջ ու բըրբըջ...
լըցում է յանկարծ անտառն աղմուկով,
մօտիկ են գալի ձայները քիչ-քիչ...
լըսում են նըրանք ահով ու դողով...
Եւ ահա ոսկի սանձերից բըռնած՝
բերում են ջրերն ձիանքըն արքայի.
ամենի ձիանքն աղբիւրից խըրտնած՝
ծառս-ծառս են կանգնում ու մօտ չեն գալի:
Մըտիկ են տալի ծառայքը մէկ էլ,
որ սիրուն մի ցուր ջրերի մէջն ընկել,
ու ջուրը բանի ալիք է տալի,
նա էլ ջրերի հետ գընում է գալի:
Նայում են վերև: Ի՞նչ տեսնեն, Աստուած.
մի հուր-հրեղէն, մի շարմաղ աղջիկ,
ծառի ճիւղերին նազելի նըստած՝
նայում է ներքև լըռիկ ու մընջիկ.
մի սիրուն աղջիկ, արմանք ու զարմանք:
Զարմանք է պատում խեղճ ծառաներին:
Տէր Աստուած, արդեօք ի՞նչ հրաշք է սա,
վայրի անտառում ի՞նչ էս ծառին:
Ու ծառաները գառն ու աղջկան
առնում են բերում պալատն արքայի:
«Ո՛վ ես դու, սիրուն, հարցնում է արքան,
անբան գառան հետ ի՞նչ ես ման գալի»:
Կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր
պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ.
Թէ ապրած կենաս ահեղ թագաւոր,
մեր բանը, հապա՛, էսպէս ու էսպէս...
Թագաւորն երբ որ լըսում է մին-մին՝
և շատ ցաւում է և շատ հաւանում.
անում է նրան իրեն թագուհի,
եօթն օր, եօթ գիշեր հարսանիք անում:


Պալատումը կար նախանձոտ ու չար
մի պառաւ կընիկ, հընուց աղախին.
նախանձում է սա, թէ ոնց պիտի գայ
մի որբ՝ թագունի դառնայ մեր գըլխին:
Մի օր էլ գալի, գըլուխ է տալի,
առաջը կանգնում կեղծաւոր գովում.
—Արի քեզ տանեմ, սիրուն թագունի,
չըփ-չըփ լողացնեմ շարմաղ էն ծովում:
Խաբում է, տանում, գցում ծովի մէջ,
շորերը առնում, ետ բերում քաղաք,
հագցընում իր սե, դարձւոր աղջկան,
պալատ ուղարկում թագունու տեղակ:
Երեսը ծածկած թանձրը շրդարշով
պալատ է մըտնում էն սուտ թագունին,
ու թագաւորն էլ կասկած չի տանում,
թէ ով է եկել բազմել իր գահին:
Բայց ինչ անում են, ինչ որ չեն անում,
չեն կարում էլ տուն բերեն գառնիկին.
բըղղում՝ էս ափից էն ափն է վազում,
բըղղում՝ էն ափից ետ գալի կըկին:
Ի՞նչ անենք սրբան, թնց անենք սրբան:
Պառաւն ու աղջիկ շատ միտք են անում,
վերջը գալիս է դարձւոր թագունին
անկողին մըտնում, հիւանդ ձեւանում:
—Վայ, աման, մեռայ... հայ, հարայ, մեռայ...
«Ո՛րտեղդ է ցաւում, սիրուն թագունիս,
թնչ կուզես, ասա»,—խնդրում է արքան,
խնդրում, գըլխովը պըտոյտ է գալիս:
—Ախորժակ չունեմ... ես բան չեմ ուզում...
Գառնիկի մըսից որ լինի՝ կուտեմ...—
Եւ թագաւորը մընում է սառած,
սառած, շըւարած, կանգնած կընոջ դէմ.
«Բայց չէ՞ որ, Մանուշ, քո եղբայրն է նա,
թնց ես նըրա միսն ուզում դու հիմա»...
—Ի՞նչ անեմ, ինձնից նա ազիզ հօ չի.
եւ որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...

—Վայ, հարայ, մեռայ... հայ, հարայ, աման...
Ու թագաւորը տալիս է հրաման.

«Կըրակ վառեցէք,
դանակ սըրեցէք,
բերէք մորթեցէք Ախպէր-Գառնիկին,
որ առողջ լինի իր բոյրը տիկին»:
Թագաւորն էսպէս պատւէր է տալի,
պատւէր է տալի ու դուրս է գալի,
գընում է ծովափ սաստիկ սրտնեղած,
թէ որքան Մանուշն անսիրտ է եղած...

5.

Մայում է, լալիս Գառնիկ-Ախպէրը,
լացացնում է ժէռ ծովի ափերը,



մի ափից բըռնած՝ միւս ափն է թըռչում,
մարդկային լեզուով բըրոջը կանչում.
—Քուրիկ ջան, բուրիկ, կըրակ են վառում,
կըրակ են վառում, դանակ են սըրում:
Քուրիկ ջան, բուրիկ, լըսիր անդունդից,
հասիր անդունդից, սպանում են ինձ.
Լըսում է արքան՝ տեղը բար կըտրած,
եւ ալիքներէ միջիցը յանկարծ
շատ ծանօթ մի ձայն հեռու, խոն ու խոր,
կանչում է բնքուշ, կանչում է անգոր.

«Ախպէր ջան, ախպէր, անհէր ու անմէր,
անբուր ու անտէր, իմ Գառնիկ-Ախպէր,
դըժլար է տեղըս, ձէնըս չեն լսում,
ձէնըս չեն լրսում, ձեռըս չի հասնում:
Ախ, չար պառաւը սև արաւ օրըս,
այժմ էլ կը սպանի Գառնիկ-Ախպօրըս»:
Լըսում է արքան, պալատն է վազում,
պատռում է քօղը թագուհու դէմքի.
պատռում է տեսնում... բայց ի՞նչ է տեսնում,
ո՞վ է իր գահին եղել թագուհի...

— Եկէ՛ք, ձկնորսներ, ուռկան ձգեցէ՛ք,
հանեցէ՛ք ծովից մեր լաւ Մանուշին.
Եկէ՛ք, դահիճներ, ծովը ձգեցէ՛ք
կախարդ պառաւին ու էս հրրէշին:
Էսպէս բարկացած գոռում է արքան,
ժողովուրդն ամեն թընդում է ցաւից,
գալիս է կանգնում, ձրգում է ուռկան,
անմեղ Մանուշին հանում է ծովից:
Գառնիկ-Ախպէրն էլ անշափ խընդումից
պատռում է անբան ոչխարի մորթին,
դուրս գալի, կանգնում սիրուն պատանի,
ուրախ ու պայծառ՝ իր քրոջ կողքին:
Իսկ չար պառաւին, իրեն աղջկան,
որ խաբել էին աշխարհ բովանդակ,
վրդներից կապում ջաղացի քարեր,
ձրգում են ծովի անդունդը անտակ:

Երկու որբեր,

քուր ու ախպէր,

խաբած պատիւ, գահ ու թագ,

աշխարհքն էլի

խաղաղ ու լի,

չարը թաղւած ծովի տակ:



Ց ա ն կ

1. *Առաւօտ	3	27. Համիկի աղօթքը	31
2. *Դպրոցի ճամփան	3	28. *Շունն ու կատուն	32
3. Ասածու սեղանը	4	29. Բրդոտ խաղընկերը	34
4. *Հովիի հրաժեշտը, Շիլլեր	6	30. *Ամպն ու սարը	36
5. Ծիծեռնակների չուն	6	31. Իշուկի գանգատը	37
6. *Ծիծեռնակ, Դոդոխեան	7	32. Հետաքրքիր Բաբկէնը	38
7. Ճամփորդներ	8	33. *Ցուրտը փչեց, Մ. Նալը	40
8. Եղնիկի տէրը	9	34. Քեռի Սիմօնի նապաստակը	41
9. *Աշուն	10	35. *Մի բաց նամակ ամենքին	44
10. Դասին	10	36. Փող	45
11. Փոքրիկ խանութպանը	11	37. *Ծաղիկները	46
12. *Աղէսն ու իր պոչը, Ա. Խնկոյեան	14	38. Չմեռը	46
13. Սուտասանը	16	39. Վէճը	48
14. *Փիսօն	17	40. *Մի կաթիլ մեղրը	48
15. Զուրը փախաւ	17	41. Ածխարարն ու պարոնը, ըստ Ամիշի	54
16. Ամպի երեխաները	18	42. *Գարնան կարօտ, Գ. Բաթ	56
17. *Աշնան վերջը	19	43. Խաղը	56
18. Եկեղեցին կորել է	20	44. Կանաչ ախպէր	57
19. Շալակտարը	20	45. Առիւծի երազը	58
20. *Եղևնի	22	46. *Մարտը	59
21. Փոքրիկ մշակը	23	47. Թէ ինչու են ծաղկում մանուշակները	60
22. Այո և Ոչ	24	48. *Մանուշակ, Դոդոխեան	61
23. *Պօղոս-Պետրոս	25	49. Մշտական ճամփորդ	62
24. Կացին ախպէրը	28	50. *Արագիլ	64
25. *Ուրազ ու սղոց	29		
26. Աղէսը բաժանարար	30		


51. Արագիլները, Անդերսէն	64
52. *Ծիծեռնակ	68
53. Մժղուկը, ըստ Մ. Սիբիրեակի	69
54. *Արօր, Բաֆֆի (փոփոխ.)	72
55. Զիռ տրտունջը	73
56. *Աքլորն ու մարգարիտը, Ա. Խնկոյեան	73
57. Հատիկի զարթնելը	74
58. *Գիւղացին ու արջը, Ա. Խնկոյեան	75
59. Շունն ու նապաստակը	77
60. *Կորեկի հատիկ	77
61. Զախչախ թագաւոր	78
62. *Ուլունք	84
63. Կարմրակատար	85
64. *Թռչունի մտածմունքը	86
65. Ո՛ւր է իմ արեւը	87
66. Տղան ու արեւը	89
67. Երկրի շուրջը	89

68. Անճոռնի ճուտիկը	90
69. *Զարի վերջը	92
70. Կապիկը	98
71. Սարգը	101
72. Մեխի պատմութիւնը	102
73. Խրտուիլակ	103
74. *Ճնճղուկներ	105
75. Մըջնոց	106
76. Վուշ	107
77. *Կաղնու վարձւորները	109
78. Ողնին ու օձը, Յ. Ապրես	109
79. Երեք դեղձ	111
80. *Գետակը	112
81. Թրթուրն ու խխունջը	113
82. Կէս խնձոր	114
83. *Աղբիւրը	116
84. Մոռ քաղելու	117
85. *Ջանասէր հնձւորներ	120
86. *Գառնիկ ախպէր	121

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Ճամփայ	9
2. Տասներկու ամիսներ	10
3. Գիրք ու տառեր	11
4. Երկինք ու աստղեր	17
5. Ծով ու նաւ	23
6. Հոր	25
7. Պատրոյկ	48
8. Արտ	72

9. Այգի	73
10. Յորեն	74
11. Բերան, ատամներ	104
12. Մըջնոց	107
13. Կրիայ	110
14. Գետ	112
15. Կաղամբ	114



У. У.
18840

